

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՓԻԼԻՍՈՓԱՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼ ՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՐՄԵՆ ԱՐԹՈՒՐԻ ԱՂԱԲԱԲՅԱՆ

**ՀԱՅ-ՌՈՒ ՍԱԿԱՆ ՓՈԽԳՈՐՃԱԿՑՈՒ ԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒ ԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒ ԹՅԱՆ
ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅՈՒՆ

**ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային
հարաբերություններ» մասնագիտությունը ամբ. քաղաքական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման համար**

**Գիտական ղեկավար՝
քաղ. գիտ. դոկտոր
Տիգրան Տոնիկի Քոչարյան**

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԳԼՈՒԽ1. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒ ԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒ ՄԸ ԱՐԴԻ
ԺԱՄԱԿԱՆՐՋԱՆՈՒ Մ**

1.1. Հայ -ռուսական միջպետական և պաշտոնական մակարդակի այլ հարաբերությունները հետխորհրդային շրջանում -----
-----19

1.2. Հայ -ռուսական փոխգործակցության ոլորտների շրջանակը և փոխապայմանավորված զարգացումները -----
-----29

**ԳԼՈՒԽ2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ ԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴՆՇՆՈՒ ԹՅԱՆ
ԳՈՐԾՆԿԵՐՈՒ ԹՅՈՒՆԸ ՏԱՐԱՃԱՆՐՋԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒ Մ**

2.1. Հայ -ռուսական կապերը տարածաշրջանային հետաքրքրությունների դիտանկյունից -----
-----40

2.2. Եվրասիական Տնտեսական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության ազդեցությունը անվտանգության ոլորտում -----51

**ԳԼՈՒԽ3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒ ԹՅՈՒՆԸ
ՊՆՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՆԵՐՔՈ**

3.1. Հայ -ռուսական գործընկերային հարաբերությունները Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գործունեության շրջանակներում -----
-----66

3.2. Ռազմաքաղաքական երկկողմ գործակցությունը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև -----
-----85

**ԳԼՈՒԽ4. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐԱԿՎԱՃՈՒ ԹՅՈՒՆԸ ՂԱՐԱՔԱՂՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒ ԹՅԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԹՅՈՒՄ**

4.1. Լեռնային Ղարաբաղի շոկի հակամարտության
պատմաքաղաքական զարգացումները հայ-ռուսական
հարաբերություններին համատեքստում -----102

4.2. Ռուսաստանը որպես Միևսկի խմբի համանախագահ և
մասնակցությունը Ղարաբաղյան հիմնախորհրդի բանակցային ձևաչափում -
-----122

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ -----139

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ -----150

ՆԵՐԱՆՈՒ ԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ռուսաստանը, որպես Հարավային
Կովկասում պատմականորեն խոշոր դերակատար, ներգրավված է
տարածաշրջանային զարգացումներում և իր մասնակցությունն է

բերում անվտանգության ապահովման, Էներգակիրների տեղափոխման ու առաքման, տրանսպորտային երթուղիների ձևավորման, առկա հակամարտության ու ներքին կարգավորման գործընթացներին: Ռուսաստանի ներգրավվածությունը տարածաշրջանային զարգացումներում անհրաժեշտ է դիտարկել երկու հարթության ներքում: Մի կողմից, որպես Հարավային Կովկասի անմիջական հարևան, Իրանի և Թուրքիայի հետմեկտեղ հանդես է գալիս որպես տարածաշրջանային գործընթացների անմիջական մասնակից և պաշտպանում է այստեղ իր ունեցած ավանդական շահերը: Մյուս կողմից, ինչպես և ԱՄՆ-ն ու Եվրոպական մի շարք երկրներ, Ռուսաստանը դիտարկում է Հարավային Կովկասը ավելի լայն աշխարհաքաղաքական համատեքստում և ունի իր որոշակի շահագրգռվածությունը զարգացման հեռանկարների հանդեպ:

Ռուսաստանի հետփոխհարաբերությունները առանձնահատուկ են Հայաստանի անվտանգային քաղաքականության առաջնայնությունների շարքում, ինչը պայմանավորված է բազմաթիվ ու բազմապիսի գործոններով, մասնավորապես՝ հայ-ռուսական ավանդական կապերով, հարավկովկասյան ուղղությանը վերաբերող գործընթացներում Ռուսաստանի նշանակալի ներգրավվածությամբ, առևտրատնտեսական ներուժով և տարածաշրջանային անվտանգության հիմնահարցերով, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ լինելու հանգամանքով, Ռուսաստանում հայ մեծաքանակ համայնքի առկայությունը: Բացի այդ, յուրաքանչյուր երկրի անվտանգության ու պաշտպանականության ամրապնդման ավանդական եղանակներից է բազմակողմ ձևաչափով գործակցությունը և ինտեգրումը հավաքական դաշինքներին, ինչը հնարավորություն է տալիս երկրի անվտանգային ու պաշտպանական կարողությունները մեծացնելու՝ ի հաշիվ դաշնակից ու ժերի¹: Հայաստանի համար միանշանակ այդպիսի դերակատարություն ունի անդամակցությունը ՀԱՊԿ-ին և այդ կազմակերպության ներքո հայ-

¹ Քոթանջյան Հ., Հայաստանի ազգային անվտանգությունը և ռազմական քաղաքականությունը // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները / Հ.Ս.Քոթանջյան.-Եր: ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 551-552

ռուսական ռազմական-ռազմավարական ու ռազմաքաղաքական ուղղությամբ ունենեցող գործակցությունը:

ԽՍՀՄ փլուզումից հետո երկու երկրների փոխհարաբերությունները զարգացել են կայուն հունով (ՀՀ և ՌԴ միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992թ. ապրիլի 3-ին): Ձևավորվել է երկկողմ ու բազմակողմ համագործակցության ծավալուն իրավապայմանագրային դաշտ (ներկայումս ավելի քան 250 երկկողմ փաստաթղթեր): 1997 թվականին կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրով և 2000 թվականին ստորագրված «ՀՀ և ՌԴ միջև 21-րդ դարու ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» հռչակագրով երկու երկրների միջև հաստատվել է ռազմավարական գործընկերություն²: Նշված պայմանագրերը և պաշտպանական-անվտանգային ոլորտներում երկու երկրների սերտ համագործակցությունը, այդ թվում՝ Յալաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում, հանդիսանում են Հայաստանի անվտանգության համակարգի հիմքային ուղղություններից մեկը: Հետխորհրդային շրջանի անվտանգության խնդիրներով պայմանավորված՝ Հայաստանի տարածքում տեղակայվել է ռուսաստանյան ռազմակայանը, իսկ Թուրքիայի և Իրանի հետ Հայաստանի սահմանները պաշտպանում են հայ-ռուսական համատեղ սահմանապահ ուժերը:

Հայ-ռուսական հարաբերությունները, դրանց զարգացումը, երկու երկրների միջև համագործակցությունը բարդ ու բազմակողմանի գործընթացներ են և երկուստեք ներառում են քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառները: Պատմական բավականաչափ հենք ունեցող այդ հարաբերությունները ձեռք են բերվել ժամանակի ընթացքում երկու ժողովուրդների պատմության մեջ արդեն դրոշմված փոխադարձ վստահության, օգնության և փոխըմբռնման արդյունքում: Հայաստանի և Ռուսաստանի միջև բազմաթիվ համագործակցության խնդիրները

² Լրացուցիչ տես ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Արտաքին քաղաքականություն – երկկողմ հարաբերություններ, Ռուսաստան, թարմացված առ 16.12.2016թ., <http://mfa.am/hy/country-by-country/ru/>

քննարկվում են երկու երկրների ամենաբարձր ու բարձր մակարդակներով հաճախակի կայացող հանդիպումների ընթացքում, միջկառավարական և միջխորհրդարանական համատեղ հանձնաժողովների պարբերաբար անցկացվող նիստերում, միջգերատեսչական խորհրդատվության ներքո: 2017 թվականի ապրիլի 3-ին լրացավ հայ-ռուսական դիվանագիտական հարաբերության ներքին հաստատման 25 ամյակը, ինչի կապակցությամբ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հանդես եկավ ելույթով՝ նշելով, որ պաշտոնական Մոսկվան բարձր է գնահատում հայ-ռուսական հարաբերության ներքին բոլոր ոլորտներում: Միաժամանակ, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանը՝ նա նշեց, որ դա մեծապես կախված է Յայաստանից և Ադրբեյջանից, իսկ Ռուսաստանը կշարունակի գործադրել իր բոլոր ջանքերը հակամարտության խաղաղ կարգավորման համար³:

Աշխարհաքաղաքական արդի բուռն գործընթացների պայմաններում թե՛ Յայաստանի, թե՛ Ռուսաստանի համար ստեղծվել է հարաբերության ներքին ամրապնդման, համագործակցության խորացման առաջնահերթություն: Վերջին շրջանում երկկողմանի և բազմակողմանի դաշնակցական, ինտեգրացիոն բազմաթիվ նախաձեռնությունները վկայում են, որ այդպիսի անհրաժեշտություններից բխող պահանջմունքները ժամանակի ընթացքում բավարարվում են՝ ապահովելով համատեղ խնդիրների լուծման համար արդյունավետ մոտեցումների մշակում և իրականացում: Յայաստանը շարունակում է Ռուսաստանի հետ համատեղ ջանքեր գործադրել հատկապես անվտանգության և պաշտպանության ոլորտներում գործընկերության ամրապնդման և խորացման, առևտրատնտեսական համագործակցության առկա ներուժի լիարժեք գործարկման ուղղությամբ: Եվ արդյունքում ընդգծվում է, որ Յայաստանի և Ռուսաստանի միջև կամ երկու երկրների մասնակցությամբ ընթանում են աշխարհաքաղաքական անվտանգային նշանակություն տարաբնույթ գործընթացներ, որոնք արդիական են

³ Лавров С., Стратегическое партнерство РФ и Армении достигло всеохватывающего характера ТАСС. Информационное агенство России, 3 апреля 2017г., <http://tass.ru/politika/4146499>

դարձնում այդ գործընթացների քաղաքագիտական ուսումնասիրությանը ունենե՞րն ու վերլուծությանը:

Հաշվի առնելով նշված բոլոր հանգամանքներն ու իրողությանը՝ ատենախոսությանը ներառում է թե՛ ժամանակակից գլոբալ գործընթացների, և թե՛ հայ-ռուսական համագործակցությանը դրանց առնչությանը քաղաքական և քաղաքագիտական վերլուծությանը, գործակցության տեսագործական կողմերի պարզամտումներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անվտանգային քաղաքականության վրա այդ գործակցության արդյունքների և հնարավոր զարգացումների կանխատեսումն ու գնահատմանը վերաբերող հետազոտությանը:

Հայաստանի, ինչպես նաև Ռուսաստանի համար հատկապես այս կարևոր ժամանակահատվածում, երբ երկու երկրները մասնակցում են բազմաթիվ անվտանգային, ռազմաքաղաքական և այլ բնույթի գործընթացներին, ռազմավարական նշանակության հարաբերությանը և ներքին գարգացման ու կատարելագործման հիմնահարցերի գիտական հիմնավորվածությանը, ինչին ուղղված է նաև սույն ատենախոսությանը, դառնում է անհրաժեշտությանը: Իսկ հաշվի առնելով այն, որ Հայաստանի դաշնակցական գործունեությանն առաջին հերթին կապվում է հենց Ռուսաստանի հետ, և պաշտոնական Մոսկվան երևանին դիտում է որպես ռազմավարական հիմնական դաշնակից, հետևաբար այդ հարաբերությանը ունենե՞րն ուսումնասիրությանը այսօր առավել քան արդիական է, իսկ դրանց նկատմամբ գիտական հետաքրքրվածությանը՝ հիմնավոր:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը:

Ռուսաստանի Դաշնության համար Հարավային Կովկասը միշտ էլ հանդիսացել է ռազմավարական կարևոր նշանակության ունեցող տարածաշրջան և որոշակի առումներով նաև ազդել այդ երկրի ազգային անվտանգության երաշխավորվածության մակարդակի վրա: Դրամասին են վկայում հատկապես 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբում տեղի ունեցած տարածաշրջանային որոշ իրադարձություններ, ինչպես նաև ռազմաքաղաքական, սոցիալ-մշակութային և տնտեսական համագործակցության վրա հիմնված գործընկերական հարաբերությանը և ներքին գարգացումը հարավկովկասյան երկրների հետ:

Հայաստանի Հանրապետության պարագայում Ռուսաստանի դիրքորոշումը ունի խորը պատմական նախադրյալներ և արդի ռազմավարական նշանակություն:

Հայաստանի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության ուղղությունների համապատասխանությունն ակնհայտ է, քանի որ այդ երկուսն էլ հիմնված են կոմպլեմենտարիզմի սկզբունքի վրա, ինչն էլ իր հերթին հանդիսանում է Հայաստանի արտաքին քաղաքական դոկտրինայի և ազգային անվտանգության ռազմավարության հենքը: Սակայն, հարկ է փաստել, որ Հայաստանի համար ցանկացած այլ երկրի հետ համագործակցությունը չի կարող ամբողջապես փոխարինել հայ-ռուսականին, քանի որ վերջինս գտնվում է միանգամայն այլ հարթության վրա, ինչն էլ իր հերթին արդիական է դարձնում այդ ոլորտի հետազոտական և գիտավերլուծական աշխատանքների իրականացումը:

Որպես հետազոտության սկզբնական հատված ուսումնասիրվել են արդի ժամանակաշրջանում Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների զարգացումները⁴, դրանք տարանջատվել են ըստ առանձին ոլորտների⁵, ինչը հնարավոր է դարձնում առավել

⁴ Քոթանջյան Հ.Ս., Հայաստանը և միջազգային հանրությունը // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, Минасян С.М., Процесс формирования системы коллективной безопасности в рамках СНГ: история и перспективы // Вестник Армяно-российского университета. -2003, Задохин А.Г., Внешняя политика России: национальное сознание и национальные интересы. М., ДА МИД России, 2002, Третьяков А.С., Вооруженные силы РФ в Республике Армения: некоторые правовые аспекты пребывания // Право и безопасность. - 2003. № - 2. Июнь., Ивашов Л.Г., Булыгин А.Н., Коллективная безопасность в рамках Содружества Независимых Государств: состояние и перспективы обеспечения // Военная мысль. – 1998 և այլն:

⁵ Չաքարյան Ա.Բ., Տարածաշրջանային անվտանգություն և հայ-ռուսական երկկողմ համագործակցությունը և համատեղ ջանքեր՝ իշահ կայուն և խաղաղ զարգացման, 19.11.2016թ., <https://shabat.am/am/article/99815/Taratsashrjanayin-anvtangutyun.-hay-rusakan-erkkoghm-hamagortsakcutyun>, Քոթանջյան Հ.Ս., Հայաստանի Հանրապետության ազգային շահերի ապահովման հեռանկարները համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման համատեքստում // «Հայկական բանակ», Եր., 2009, թիվ 4, Հարությունյան Գ.Գ., Հայ-ռուսական հարաբերությունների արդի փուլը // «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, Եր., 2010, թիվ 6, Энергетическая стратегия России на период до 2030г., <http://minenergo.gov.ru/node/1026>, Шакарянц С. Армения и Россия в начале XXI века: перспективы развития отношений / Армения 2020. Стратегия развития и безопасности. - Ереван, Армянский центр стратегических и национальных исследований, 2003, Галстян Н., Новая региональная геостратегическая среда Армении: вызовы, возможности и перспективы / Армения в диалоге цивилизаций. Материалы международной научной конференции, 28 апреля 2011г., Н.Новгород, 2011, Жукова М.Г., Роль и место России в вопросах международной энергитической безопасности /

հանգամանակից հասկանալի հայ-ռուսական գործակցության ներկայ
մակարդակը, գնահատել արդյունավետությանը ունեցող
ուղղությունները և վերհանել որոշակիորեն պասիվ մնացած կապերը:

Ատենախոսության թեմայի շրջանակներում կարևոր է
առանձնացնել Հարավկովկասյան տարածաշրջանային հիմնախնդիրների
համատեքստում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի
Դաշնության գործակցությանը վերաբերող գիտական աշխատանքներն⁶
ու երկու երկրների ղեկավարների ու այլ պաշտոնատար անձանց
կողմից արտահայտած դիրքորոշումները⁷, համարել թե հայ, թե
ռուսական, ինչպես նաև այլ արտասահմանյան փորձագետների
գնահատականները⁸ տարածաշրջանային գործընթացներում

Зарубежное регионоведение: проблемы теории и практики: материалы VII Междунар.науч.конфер.; Под
ред. А.А.Корнилова и др., Н.Новгород: ННГУ им. Н.И.Лобачевского, 2015 և այլն:

⁶ Հարությունյան Գ., Տարածաշրջանի աշխարհաքաղաքական բյուրեղացում է
տեղի ունենում Հարավային Կովկասում, 18.12.2013թ.,
http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12444, Корнилов А.А., Геополитика
современных российско-армянских отношений и ее влияние на проект «Новый Великий Шелковый Путь».
<http://nashasreda.ru/geopolitika-sovremennyh-rossijsko-armyanskix-otnoshenij-i-ee-vliyanie-na-proekt-novyy-velikij-shelkovyj-put/>, Мансуров Т.З., Южный Кавказ в системе национальной безопасности Российской Федерации,
<http://cyberleninka.ru/yuzhnyy-kavkaz-v-sisteme-natsionalnoy-bezopasnosti-rossiyskoj-federatsii.pdf>, Онуфрийчук А.В., Проблемы реализации российских интересов на Южном Кавказе в современном геополитическом контексте, http://pglu.ru/upload/iblock/f80/uch_2009_xii_00007.pdf, Бовдунов А., КАРАБАХСКИЙ КВАДРАТ: ПОЧЕМУ АЗЕРБАЙДЖАН СБЛИЖАЕТСЯ С МОСКВОЙ, А АРМЕНИЯ - С НАТО?, 09.08.2017, <https://www.geopolitica.ru/article/karabakhskiy-kvadrat-pochemu-azerbaydzhan-sblizhaetsya-s-moskvoy-armeniya-s-nato>, Набережных Г., Армения вступила в Евразийский Экономический Союз, 02.01.2015, <http://www.rbc.ru/politics/02/01/2015/54a6416d9a794732f47760a2>, Шухно С., Армения с вступлением в ЕАЭС показала взрывной рост экономики, 04.04.2017, <https://ru.armeniasputnik.am/armenia/20170404/6918506/shuhno-armeniya-s-vstupleniem-v-eaehs-pokazala-vzryvnoj-rost-ehkonomiki.html> և այլն:

⁷ Ռուսաստանը մեր ռազմավարական դաշնակիցն է, սակայն զուր է գնք
վաճառում Ադրբեյջանին. Սերժ Սարգսյանի հարցազրույցը Deutsche Welle-ին, 08.04.2016թ.,
<http://www.tert.am/am/news/2016/04/08/sargsyan-interview/1986068>, Հայաստանի Հանրապետության և
Ռուսաստանի Դաշնության նախագահների պաշտոնական հանդիպման տեքստ, Մոսկվա,
07.09.2015թ. <http://www.president.am/hy/press-release/item/2015/09/07/President-Serzh-Sargsyan-meeting-with-Vladimir-Putin-President-of-Russia/>, Саргсян В., «Возобновление войны станет серьезнейшей угрозой», Министр обороны Армении рассказал о сотрудничестве с Москвой и НАТО, 21 декабря 2016,
<https://lenta.ru/articles/2016/12/21/sargsyan/> և այլն:

⁸ Բոթանջյան Հ., Հայաստանի հաշվեկշռված արտաքին քաղաքականությունը
որպես Ռուսաստան-ԱՄՆ երկխոսության հաստատման հարթակի ստեղծման
ռազմավարական հնարավորություն, 28.01.2017թ.,
http://www.diplomat.am/publ/authors/hayk_qotanjyan/1/133-1-0-1627, Բոտանջյան Վ., «Անգամ մեկ
վայրկյան չեմ կասկածում, որ Տիգրան Սարգսյանն այս նշանակումը կարդարացնի»,
23.10.2015թ., nyut.am/?p=89506&l=en&fb_comment_id=978630928876360_978666885539431#f7535ab6a831f, Բարսեղյան Ս., Հայ-ռուսական հարաբերությունների
ընկալումներն ազգային անվտանգության համատեքստում, 21.03.2017թ.,

Ռուսաստանի ներգրավվածության և Հայաստանի կողմնորոշվածության հիմնահարցերի առնչությամբ:

Հիմնարար նշանակություն են ունեցել պաշտպանական-անտանգային ու ռազմական-ռազմավարական ուղղվածությամբ ինչպես բազմակողմ՝ հիմնականում ՀԱՊԿ-ի շրջանակներում, այնպես էլ երկկողմ ձևաչափերով միջպետական և միջգերատեսչական փոխհարաբերությունների հետ կապված վերլուծությունների ու գիտական հետազոտությունների⁹ և հրապարակումների¹⁰ ներբեռնումը

<http://www.aravot.am/2017/03/21/868530/>, Котанджян Г., В повестке - комплементаризм и многовекторность оборонной политики // Голос Армении. – 2007, 16 ноября., Саркисян М., О безопасности на Кавказе / Формирование Атмосферы Мира, Стабильности и Доверия на Южном Кавказе. - Е., Центр по изучению конфликтов, июль, 2002, Санакоев И.Б., Конфликты на Южном Кавказе: пути снижения межэтнической напряженности, <http://kvkz.ru/stati/2426-konflikty-na-yuzhnom-kavkaze-puti-snizheniya-mezhyetnicheskoj-napryazhennosti.html>, Коновалов И., Применять системы «Солнцепек» в Карабахе для Азербайджана будет бессмысленно, 11.07.2017, <http://ru.1in.am/1194843.html> և այլն:

⁹ Քոթանջյան Հ., Խաղաղապահության ոլորտում ՀԱՊԿ-ի հեռանկարները, 28.06.2013թ., <http://razm.info/13827>, Քոթանջյան Հ., Հարկ չկա, որ Ռուսաստանը պարիտետային սզբունքներով վերաբերվի Ադրբեջանին, 04.04.2016թ., <http://www.1in.am/1882819.html>, Մինասյան Ս., ԼՂ հակամարտության վերաբերյալ ՀԱՊԿ անդամ երկրների հայտարարությունը կարևոր փաստ է, 18.10.2016թ., http://newsarmenia.am/am/news/nagorno_karabakh/-LGH-hakamartutyany-veraberyal-HAPK-/, Շիրինյան Լ., Մեր երկրում ՀԱՊԿ-ի կարևորությունը խիստ չափազանցված է, 28.10.2016թ., <http://www.mamul.am/am/video/26654853/մեր-երեկրում-հավկ-ի-կարևորությունը-խիստ-չափազանցված-է-լևոն-շիրինյան>, Քոչարյան Տ.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, Акопян В., «Назначение Хачатурова на пост генсека ОДКБ не нужно переоценивать», 15.04.2017թ., ArmenianSputnik.am, <https://ru.armeniasputnik.am/exclusive/20170415/7025010/akopyan-naznachenie-khachaturova-na-post-genseka-odkb-ne-nuzhno-pereotsenivat.html>, ОДКБ: ответственная безопасность, Под общ. ред. И.Ю.Юргенса, М., 2011, Poghosyan B., «The appointment of General Khachaturov as head of the CSTO has both positive and negative implications for Armenia», 01.05.2017, Commonsplace.eu, http://www.commonspace.eu/index.php?m=23&news_id=4215 և այլն:

¹⁰ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունը ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանի արդյունքների վերաբերյալ, Ամփոփվել են ՀԱՊԿ Հավաքական Անվտանգության խորհրդի նստաշրջանի արդյունքները, 14.10.2016թ., <http://www.president.am/hy/press-release/item/2016/10/14/president-serzh-sargsyan-meeting-csto-press/>, Սերժ Սարգսյանը մասնակցել է «Կամազ Արմենիա» ՓԲԸ առևտրի և սպասարկման կենտրոնի բացման արարողությանը, 04.10.2013թ., <https://armenpress.am/arm/news/735527/serzh-sargsyany-masnakcel-e-kamaz-armenia-pby-arevtri-ev.html>, Սարգսյան Վ., «Յուրի Խաչատրյանը այդ պաշտոնում հանդես է գալու ոչ թե որպես ՀՀ քաղաքացի, այլ՝ որպես միջազգային պաշտոնյա», 21.04.2017թ., Aravot.am <http://www.aravot.am/2017/04/21/880112/>, Քոչարյան Շ., ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղը Հայաստանին է, 19.01.2017թ., http://arminfo.info/full_news.php?id=23749&lang=1#sthash.pn7izEHS.dpuf, Заявление глав государств-членов ОДКБ, 23.12.2014, <http://scienceport.ru/news/zayavlenie-glav-gosudarstv-chlenov-odkb/>, Бордюжа Н., Ночные события в Карабахе могут привести к крупномасштабному конфликту, 02.04.2016, http://newsarmenia.am/news/nagorno_karabakh/nochnye-sobytiya-v-karabakhe-mogut-privesti-k

հետազոտության մեջ: Այս համատեքստում հիմքային դեր են կատարել նաև Հայաստանի և Ռուսաստանի միջև գործող պայմանագրային և նորմատիվ իրավական սկզբնաղբյուրների¹¹ քննարկումը, դրանց փոխպայմանավորվածության և փոխլրացման մոտեցումների վերծանումը, հայեցակարգային զարգացման կառուցակարգերի մշակումները:

Առանձնացված դիտարկվել են Ղարաբաղյան հակամարտության ծագման ու խաղաղ կարգավորման բանակցային գործընթացում Ռուսաստանի դերակատարության հիմնահարցերին վերաբերող գիտահետազոտական աղբյուրները¹², պատմական ժամանակագրության ներկայացվել են հիմնախնդրին առնչվող տպագիր և էլեկտրոնային հաղորդագրության ներքին¹³, ինչպես նաև միջազգային տարբեր

krupnomasshtabnomu-konfliktu-bordyuzha/, At Summit, CSTO Wrestles with Internal Disputes, Irrelevance, 17.10.2016, EURASIANET.org, <http://www.eurasianet.org/node/80906> և այլն:

¹¹ Договор О дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Армения, 29.08.1997, http://www.lawrussia.ru/texts/legal_555/doc555a808x659.htm, Договор о коллективной безопасности, Совершено в г. Ташкенте 15 мая 1992 года в одном подлинном экземпляре на русском языке. МОЦИП ОДКБ, Армения, <http://www.odkb-armenia.am/doc03.php>, Соглашение о правовом статусе Организации Договора о Коллективной Безопасности, 7 октября 2002 года МОЦИП ОДКБ, Армения, <http://www.odkb-armenia.am/doc02.php>: Устав Организации Договора о Коллективной Безопасности. Совершено в городе Кишиневе 7 октября 2002 года МОЦИП ОДКБ, Армения, <http://www.odkb-armenia.am/doc01.php> և այլն:

¹² Մանասյան Ալ., Ադրբեջանի հայությանը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և հայոց ցեղասպանության ճանաչման համատեքստում // «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 8-9 (53-54), Մանասյան Ալ., Ղևոնդյան Ա., Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել, Եր., Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2011, Маркаров А., В переговорном процессе Республику Арцах необходимо рассматривать в качестве игрока, 20 май 2017, <https://armenpress.am/rus/news/891569/v-peregovornom-processe-respubliku-arcakh-neobkhodimorassmatrivat.html>, Кадымов Г.Г., Россия и урегулирование конфликтов в СНГ / Внешняя политика современной России. Сборник статей. - М., ДА МИД России, 2000., Записка народного комиссара иностранных дел РСФСР Г.В.Чичерина В.И.Ленину, 29 июня 1920г. / Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник материалов и документов. - Ереван, 1992., Востриков С.В., Карабахский кризис и политика России на Кавказе, Общественные науки и современность, 1999, N3, <http://ecsocman.hse.ru/data/291/464/1216/007wOSTRIKOW.pdf>, Галстян Л.Л., Дипломатическое обеспечение процесса прекращения боевых действий в Нагорном Карабахе / Наири: Альманах, Сборник материалов об Армении и армянской диаспоры, Вып. 6, Н.Новгород, 2013, Казимиров В.Х., Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта, М., 2009, Корнилов А.А., Региональные приоритеты внешней политики России как отражение нелинейных стратегических подходов / Зарубежное регионоведение: проблемы теории и практики: материалы VII Междунар.науч.конфер.; Под ред. А.А.Корнилова и др., Н.Новгород: ННГУ им. Н.И.Лобачевского, 2015 և այլն:

¹³ Զոթանջյան Հ.Ս., Հաստատությունների և հարցազրույցների Ղարաբաղում. ԼՂՀ-ն՝ դեֆակտո օրինական ժողովրդավարական պետություն, 2014թ. հունիսի 1-2, <http://www.aravot.am/2014/07/02/476575/>, Լեռնային Ղարաբաղը 1921 թվականի առաջին կեսին. armeniasputnik.am, 06.07.2017թ., Ժելեզնովոդսկի հոլշագիրը. Արցախյան կարգավորման առաջին փաստաթուղթը, <http://www.aniarc.am/2016/04/20/zheleznowodsk-communique-1991-nk/>, ՌԴ

մակարդակներում հնչեցված տեսակետներն ու արձագանքները¹⁴ Մինսկի խմբի շրջանակներում բանակցության ներքին շարունակելու կապակցությամբ:

Բացի նշվածներից, հետազոտության անցկացման ընթացքում օգտագործվել են նաև այլ կարևոր մասնագիտական ուսումնասիրություններ ու սկզբնաղբյուրներ: Հայ-ռուսական հարաբերությունների օրակարգային հագեցվածության մակարդակը պայմանավորել է տպագիր և էլեկտրոնային մամուլում հրատարակվող փաստաթղթերի, հոդվածների, հայտարարությունների ու այլ տիպի տեղեկատվական վերլուծությունների ծավալուն լինելը, որոնք համարելով պատմական ակնարկների, համեմատական գնահատականների հետ հնարավոր դարձավ առանձնացված կերպով պատկերացնել երկկողմանի հարաբերություններում ծագած խնդիրները, դրանց պատճառները և նախանշել լուծման հնարավոր տարբերակները`

արտաքին գործերի նախարարություն. Ռուսաստանը որպես միջևորդ օգտագործում է բոլոր մասնակցի գործիքները դարաբաղյան կարգավորման համար, 30.12.2016թ., <http://www.panarmenian.net/arm/news/203193/>, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքները: <http://armtimes.com/hy/article/25855>, Կազանի փաստաթուղթ, Առավոտ օրաթերթ, <http://www.aravot.am/2016/06/23/707410/>, Арцах-Карабах. Библиография на русском языке 1988-2010 гг. / ЕГУ, Ин-т арменоведческих исследований; Сост.: А. Г. Симонян, А. А. Гарибян, Э. А. Бабаян; отв. ред. А. Г. Симонян. - Ер.: Изд-во ЕГУ, 2011., Телеграмма Сталина Г.К.Орджоникидзе. №345, 8 июля 1920г. / Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов / Отв. ред. В.А.Микаелян. — Ереван, 1992., Chavarche Kotcharian, «Pourquoi le conflit du Haut-Karabagh n'est toujours pas réglé?», Ed. JeanPierre Vettovaglia, Prévention des crises et promotion de la paix (volume III). Déterminants des conflits et nouvelles formes de prévention, Bruylant, septembre 2013 և այլն:

¹⁴ Լավրով Ս., Ղարաբաղյան հակամարտությունը կարող է կարգավորվել միայն բանակցությունների միջոցով, 06.06.2017թ., <https://news.am/arm/news/394058.html>, Չաբարյան Ա., Չի բացառվում Ադրբեյջանի դեմ միջազգային սանկցիաներ կիրառելու հնարավորությունը, Առավոտ, 02.06.2017թ., mamul.am/am/news/106166/ չի-բացառվում մարտերի դեմ-միջազգային-սանկցիաներ-կիրառելու հնարավորությունը - «առավոտ», Մինասյան Ս., Լավրովը ադեկվատ պատասխան տվեց ադրբեյջանցի լրագրողի` ԼՂ-ում պատերազմ սկսելու մասին հարցին, 17.01.2017թ., <http://www.zham.am/?p=46&l=am/lavrov+adekvat+patasxan+tvec+adrbejanci+lragroxi+lx-um+paterazm+skselu+masin+harcin>, Захарова М., Компромисс по Нагорному Карабаху должен быть не в ущерб непосредственно живущим там людям, 15.06.2017, <https://news.am/rus/news/395494.html>, Минасян С., В докладе ICG по Карабаху названы факторы сдерживания от полномасштабной войны, ЕРЕВАН, 2 июня 2017. Новости-Армения, <http://newsarmenia.am/news/interview/eskalatsiya-v-karabakhe-ugrozhayet-polnomasshtabnymi-boevymi-deystviyami-ekspert/>, Минасян С., Я вижу предпосылки того, что отныне сопредседатели будут прибегать к четким мерам, 12.06.2017, <http://www.tert.am/ru/news/2017/06/12/Sergey-minasyan/2399812>, Маркаров А., Признание независимости НКР со стороны Армении переведет конфликт в новый этап, 4 май 2016, <https://armenpress.am/rus/news/846139/priznanie-nezavisimosti-nkr-so-storoniy-armenii-perevedet.html> և այլն:

հիմքում դիտարկելով Հայաստանի Հանրապետության անվտանգության քաղաքականության արդյունավետ իրականացումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովվածության դիտանկյունից գնահատել հայ-ռուսական ռազմավարական գործակցության ազդեցության հնարավորությունները, բացահայտել երկու երկրների հարաբերությունների առանձնահատկությունները անվտանգային ու ռազմաքաղաքական զարգացումների համատեքստում, ինչպես նաև ուսումնասիրել Ռուսաստանի դերակատարությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային ձևաչափում:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

- ուսումնասիրել հետխորհրդային շրջանում հայ-ռուսական հարաբերությունների ձևավորումն ու զարգացման հաջորդականությունը,

- վերլուծել երկկողմ համագործակցության հիմնական ուղղությունների փոխապայմանավորվածությունը,

- բացահայտել Հարավային Կովկասի տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության շրջանակները և Հայաստանի առնչությունները այդ գործընթացներին,

- վերհանել բազմակողմ ձևաչափով հայ-ռուսական փոխգործակցության նշանակությունը Հայաստանի անվտանգային և պաշտպանական հնարավորությունների զարգացման գործում,

- գնահատել հայ-ռուսական ռազմական-ռազմավարական կապերի զարգացման դինամիկան և հիմնական ձեռքբերումները,

- քննարկել Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության կարգավորման գործընթացում Ռուսաստանի Դաշնության մասնակցության շրջանակները:

Հետազոտության օբյեկտն է հայ-ռուսական գործակցության դերը և նշանակությունը Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխավորման հիմնախնդիրների կարգավորման շրջանակում, ինչպես նաև երկկողմ ու բազմակողմ ձևաչափերով երկու երկրների մասնակցությունը տարածաշրջանային պաշտպանական-անվտանգային

գործընթացներին: **Յետագոտու թյան առարկան** են հանդիսանում Յայաստանի ու Ռուսաստանի միջև ձևավորված ռազմավարական համագործակցության զարգացումները, այնպես էլ մեր երկրի անվտանգության հետ կապված առանձին ոլորտներում և ուղղություններում հայ-ռուսական հարաբերություններն ու առնչությունները:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը: Յետագոտու թյան տեսական աղբյուրները կազմել են ինչպես հայկական, այնպես էլ ռուսական և արտասահմանյան այլ մասնագետների հեղինակած աշխատանքները, ինչպես նաև հայ-ռուսական փոխգործակցության վերաբերյալ այդ երկու պետությունների ղեկավարությունների կողմից արտահայտված պաշտոնական դիրքորոշումներն ու մեկնաբանությունները: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել հետագոտու թյան խնդրո առարկայի վերաբերյալ քաղաքագետների, իրավագետների, պատմաբանների, սոցիոլոգների, փիլիսոփաների և այլ գիտահետազոտական ուղղությունների տարբեր հրատարակումներ, փորձագիտական գնահատականներն ու վերլուծությունները: Ուսումնասիրվել է ՅՅ և ՌԴ գործակցության համատեքստում առկա իրավապայմանագրային դաշտը՝ երկկողմ ու բազմակողմ համաձայնագրեր, պայմանագրեր, հուշագրեր և այլ նմանատիպ նշանակություն փաստաթղթեր:

Յետագոտու թյան ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ միջճյուղային և նեղ մասնագիտական մեթոդներն ու մոտեցումները: Մասնավորապես, օգտագործվել են համակարգային վերլուծությունը, համեմատական և բովանդակային վերլուծությունը, պատմադիվանագիտական և իրավապայմանագրային փաստաթղթային վերլուծությունը: Աշխատանքում կիրառվել են տրամաբանական, նկարագրողական, պատմական, գործընթացային և իրադարձային նկարագրություն, վիճակագրական ամփոփման ու ուսումնասիրություն մոտեցումները:

Ատենախոսության գիտական նորույթը: Յետագոտու թյան շրջանակներում առավել մանրամասն պարզաբանվել են հայ-ռուսական հարաբերությունների օրինաչափությունները, վերլուծվել են ձեռքբերումները և դրանց արդյունքները: Հարավային Կովկասում

անվտանգության կայունացման գործում հայ-ռուսական հարաբերությունների դերի, նշանակության, տարածաշրջանային և միջազգային գործընթացներին Հայաստանի և Ռուսաստանի՝ որպես առանձին պետությունների և դաշնակիցների ներգրավվածության, այդ գործընթացների վրա ներպետական քաղաքականության ազդեցության արդյունավետության համապարփակ ուսումնասիրումը թույլ է տալիս ամբողջական կերպով պատկերացնել բոլոր այն նախադրյալները և պայմանները, որոնք նպաստել են հայ-ռուսական ժամանակակից հարաբերությունների ձևավորմանը, հետագա զարգացմանն ու ամրապնդմանը: Աշխատանքում մեծ ուշադրություն է դարձվել նաև Հայաստանի ժամանակակից արտաքին և անվտանգային քաղաքականության խնդրահարույց հարցերից մեկի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության նախապատմությանը, այդ կոնֆլիկտի կարգավորման գործընթացի արդի փուլին, խնդիրներին ու հնարավոր զարգացումներին, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության ակտիվ մասնակցությունը բանակցային գործընթացներին:

Բացի այդ, գիտական նորույթը կարելի է ներկայացնել հետևյալ ձևակերպումներով:

- Ռուսաստանը հանդիսանում է Հարավային Կովկասի թերևս ամենաազդեցիկ ակտորը, հետևաբար՝ խնդիրների լուծման համար քաղաքական, տնտեսական և այլ ռեսուրսների կենտրոնացման ու հավաքագրման բեռը ընկած է հենց նրա ուսերին: Այդ ռեսուրսները կարելի է կենտրոնացնել և ուղղել այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ տարածաշրջանային անվտանգության պահպանումը, քաղաքական ու կրոնական ծայրահեղականության տարածման կանխարգելումը, կարգավորել հին կոնֆլիկտները և բացառել նորերը, զարգացնել էներգահոսքերի, տրանսպորտային ուղիների համակարգը և այլն: Ռուսաստանի գործելակերպի արդյունքում տարածաշրջանի երկրների միջև պետք է ոչ թե տարանջատվածությունը էլ ավելի խորանա, այլ հաստատվի փոխհամագործակցություն և գիտակցումն այն հանգամանքի, որ իրենց երկրների անվտանգությունն ու զարգացումն անմիջականորեն կապված է Հարավային Կովկասի տարածաշրջանի կայունության հետ:

- Հայ -ռուսական փոխգործակցությանը ակտիվ խթանվում է երկու երկրների բարձրաստիճան ղեկավարության կողմից, սակայն ուրոտային առումով հարկ է փաստել, որ բացի պաշտպանական ուղղությանից, մյուս հարթությանններում երկկողմ կապերը այդքան էլ չեն բավարարում ու համարժեքորեն արտացոլում ընդհանուր բարեկամական հարաբերությաննների մակարդակը: Անհրաժեշտ է զարգացնել գործակցությանը անվտանգության համակարգի բոլոր ենթաուղորտների համընդգրկմամբ, ինչը միանշանակ կնպաստի թե երկկողմ ընդհանուր գործակցության ամրապնդմանը, թե Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգի ռուսական բևեռի կայունության երաշխավորմանը:

- Հայաստանի անվտանգության գրեթե բոլոր ուղորտների կայուն զարգացման հրամայականից էլնելով և հաշվի առնելով ներկատնտեսական պայմանները՝ Հայաստանի Հանրապետության անդամակցությանը ԵԱՏՄ-ին տնտեսության ու անվտանգային հենքի զարգացման այլընտրանքային ճանապարհ է, և առկա ու հնարավոր մարտահրավերներով հանդերձ, Հայաստանը պետք է փորձի առավելագույն օգուտները քաղել միությանը անդամակցությանից: Դրա համար հարկավոր է ոչ միայն «ընդունել» պայմանագրի կետերը, այլև առաջադրել սեփական պահանջները, քանի որ ԵԱՏՄ օրենսդրությանն ընդունվում է կոնսենսուսի հիման վրա, միությանում օրենքով հավասար պայմաններ են երաշխավորվում բոլոր անդամների համար (միաժամանակ հաշվի առնելով, որ Ռուսաստանը իշխողի դիրքերից է ղեկավարելու ԵԱՏՄ-ն և դրա շրջանակներում իրականացվող իր քաղաքականությանը անդամ երկրների հետ):

- Հարավային Կովկասը շատ կարևոր տեղ է զբաղեցնում ՀԱՊԿ պատասխանատվության սահմանների հարցում, և Հայաստանը, լինելով Կազմակերպության ակտիվ անդամներից մեկը, տարածաշրջանում հանդես է գալիս որպես վերջինիս հիմնական գործընկերն ու հենարանը: Նշված կարևոր հանգամանքը Հայաստանը կարող է արդյունավետորեն օգտագործել ՀԱՊԿ անդամ ոչ բարյացակամ պետությաննների հակահայկական գործողությանններին ու հայտարարությանններին հակակշռելու համար: ՀԱՊԿ

միջամտությունը գրեթե, եթե ոչ լիովին, անհավանական է հայ-ադրբեջանական հակամարտության պայմաններում, կամ էլ կարող է լինել զուտ ձևական: Սակայն, ՀԱՊԿ-ին անդամակցությունը ունի նաև առավելություններ, որոնք հիմնականում վերաբերում են պաշտպանական ու ռազմաքաղաքական կարողությունների զարգացմանը: Սրանով հանդերձ պետք է գիտակցել, որ ՀԱՊԿ-ն անհրաժեշտ ուղղություն է ՀՀ անվտանգության համակարգում, բայց միևնույն ժամանակ չի կարող գնահատվել որպես անփոխարինելի անվտանգության քաղաքականության մեջ:

- Հայաստանը դրական ներգրավվածություն է ձգտում միջազգային կապերի բոլոր ուղղություններով, ինչը այդ ասպարեզում պետական շահերի առավել արդյունավետ իրականացման հիմնական գրավականներից է և բխում է երկրի որդեգրած արտաքին քաղաքականության փոխլրացման սկզբունքից: Ուստի, եվրատլանտյան ուղղությամբ համագործակցությունն ընդլայնելու Հայաստանի ձգտումները Ռուսաստանի կողմից չպետք է ընկալվեն որպես իր հետ ռազմական համագործակցության ու ՀԱՊԿ տրամաբանությանը հակասող քայլեր: Հայաստանի կողմից հռչակված փոխլրացման սկզբունքին համահունչ՝ Ռուսաստանի հետ ռազմական գործակցության համատեքստում Հայաստանը պետք է մշտապես պատրաստ լինի շրջադարձային զարգացումների և այլ ընտրանքային լուծումների, քանզի արձանագրվում են նաև որոշ փաստեր՝ կապված Ռուսաստանի ոչ «անմնացորդ» վարքագծով բարեկամության դրսևորումների հետ:

- Հայաստանի անվտանգության համատեքստում հայ-ռուսական փոխգործակցությունը գնահատելու հիմնախնդրի շրջանակներում կարելի է փաստել, որ անհրաժեշտություն է հասունացել Ռուսաստանի Դաշնության հետ բարեկամական հարաբերությունների տեսլականում հստակեցնել վերջինիս դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային հարցերում, որը պետք է Հարավային Կովկասի ուղղությամբ արտահայտի այդ երկրի համընդգրկուն ռազմավարության առանցքային ուղղությունը և պաշտոնական վերաբերմունքը: Պաշտպանական-անվտանգային երկկողմ կապերում կարևոր է հակառակորդի հետ դիտարկվող ռուսական կապերին հակադրել այդ երկրի անմիջական ներգրավվումը

ռազմարդյունաբերական ու պաշտպանական միջոցների արտադրության զարգացման գործընթացներում, խթանել նման գործակցության շահավետության ունը, ինչպես նաև օգտագործել ռուսական կողմի հնարավորությունները ոլորտային ծրագրերի արգասիքները այլ երկրների համար հետաքրքրական դարձնել ու գործում:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը գիտական համապարփակ ու համակարգված հետազոտություն է, որի տեսական նշանակությունն է հայ-ռուսական փոխգործակցության տեսլականում Հայաստանի Հանրապետության անվտանգային տիրույթի առանձնահատկությունների բացահայտումը, մեր երկրի անվտանգության համար հիմնարար նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ Ռուսաստանի պաշտոնական ու ոչ պաշտոնական դիրքորոշումների գիտահետազոտական համադրումը, ինչպես նաև Հարավկովկասյան տարածաշրջանում ՌԴ քաղաքականությանն առնչվող զարգացումների մասով հայաստանյան արձագանքների հետազոտական վերլուծությունը:

Աշխատանքում ներկայացված վերլուծությունները, հետազոտության արդյունքները և հիմնավորված եզրահանգումները հիմք են տալիս գնահատել ու հայ-ռուսական ռազմավարական գործակցության զարգացման հնարավորություններն ու Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգի վրա այդ հարաբերությունների ազդեցության կանխատեսումները: Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել նաև գիտաուսումնական գործընթացների մեթոդական և հետազոտական ապահովման, ինչպես նաև քաղաքագիտության, իրավագիտության, պատմության և միջարք այլ մասնագիտությունների ընդհանուր ու հատուկ կուրսերի մշակման ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի կողմից: Ատենախոսության հիմնարարության հրապարակվել են գիտական հանդեսներում՝ թվով 8 հոդվածների տարբերակով:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ ութ ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության մեջ օգտագործված գրականությունը կազմում է 176 աղբյուր, իսկ ատենախոսության ընդհանուր ծավալը 162 էջ է:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒ ԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒ ՄԸ ԱՐԴԻ ԺԱՄԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1.1. Հայ-ռուսական միջպետական և պաշտոնական մակադրակի այլ հարաբերությունները հետխորհրդային շրջանում

Հայ-ռուսական հարաբերություններն ունեն երկար տարիների և դարերի պատմություն: Դրանք պայմանավորված են եղել երկու երկրներում տեղի ունեցած տարաբնույթ գործընթացներով, պատմական զարգացմամբ, միջպետական և պարզապես ժողովուրդների միջև կապերի առկայությամբ ու այլ գործոններով: Այդ հարաբերություններն իրենց ամրությունն ու կայունությունն են ապացուցել սկսած ցարական Ռուսաստանի (Ռուսական կայսրության) ժամանակներից, մինչև Խորհրդային Միության և Ռուսաստանի Դաշնության ժամանակաշրջանը: 17-18-րդ դարերի ընթացքում ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում հայ ժողովրդի ցուցաբերած օգնությունը ռուսական բանակին, միջնադարից սկսած՝ ռուսական պետության տարածքում հայ կական համայնքների ձևավորումը, ինչպես նաև պատմության ընթացքում հայ տնի այլ բնույթի առնչություններն առավել կուռ և սերտ են դարձրել երկու ժողովուրդների միջև հարաբերությունները՝ հիմնված լինելով փոխադարձ վստահության

վրա: Հայ -ռուսական հարաբերությունների պատմական ձեռքբերումները շարունակվում են նաև ներկա օրերում՝ ինչպես պետական բազմակողմանի համագործակցության մակարդակով, այնպես էլ հայ և ռուս ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների միջոցով:

Արտաքին քաղաքականությունը, որպես ֆենոմեն, իր մեջ պարունակում է ոչ միայն «աշխարհաքաղաքականություն», «ազգային անվտանգություն», «աշխարհատնտեսություն» և այլ հասկացությունները, այլ նաև աշխարհի յուրատեսակ այն ենթապատկերը, որը ստացվում է քաղաքական իմաստով ընդգծված հատվածին վերաբերող որոշումների արդյունքում: Լայն առումով, դա միջազգային հանրության, իսկ նեղ առումով՝ միջազգային քաղաքականության կերպարն է: Այդ կերպարները ձևավորվում են միջազգային քաղաքականության սուբյեկտների հետ դրական ու բացասական շփման և սոցիալական գիտակցության օրինաչափ զարգացման հիմքի վրա¹⁵:

Հայ ժողովուրդը, այդ իմաստով, բացառությունն է և հանդիսանում է այսպես կոչված «ամուր էթնոս» երևույթի վառ օրինակ: «Ամուր էթնոս» ասելով ի նկատի ունենք մի ժողովուրդ, ազգկամ ազգություն, որը, երկար ժամանակ գոյատևելով օտար ծանր լծի տակ, պահպանել է իր ազգային առանձնահատկությունները և ինքնագիտակցությունը: Այդպիսի գործոնների առկայությունը հայոց պատմության մեջ (Հայկական հարցի առաջացում, հայության ձգտումը պետականության վերականգնման ուղղությամբ, Ռուսական կայսրության փլուզումն ու Հայկական ԽՍՀ ձևավորումը և այլն) նույնպես պայմանավորում է ժամանակակից Հայաստանի արտաքին քաղաքականության կուրսը դեպի Ռուսաստան, դրա բնույթն ու ծավալները:

Վերջին մի քանի հարյուրամյակի հայ-ռուսական շփումները համառոտ վերլուծության ենթարկելով՝ կարելի է վստահությամբ նշել, որ Ռուսաստանն իսկապես ցուցաբերել և հիմա էլ ցուցաբերում է հսկայական օգնություն Հայաստանին, ակտիվորեն մասնակցում է

¹⁵ Задохин А.Г., Внешняя политика России: национальное сознание и национальные интересы. М., ДА МИД России, 2002. С. 10

Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում: Հայերն իրենց հերթին փոխադարձ վերաբերմունք են արտահայտում ռուսներին՝ իրենց հնարավորություներին սահմաններում «բարուն բարով» պատասխանելով:

1991թ. դեկտեմբերին Բելովեժյան համաձայնության կնքումով խորհրդային Միությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, դադարեցրեց իր գոյությունը, որից հետո հռչակվեց Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին: Ստեղծված իրադրությունը բավականին բարդ էր ԱՊՀ երկրների, և մասնավորապես՝ Հայաստանի ու Ռուսաստանի միջև հարաբերությունների կառուցման առումով: Անդրկովկասը միանգամից դարձավ միջէթնիկ, տարածքային և սոցիալ-տնտեսական որոշակի հակամարտությունների թատերաբեմ: Այդ պիքը պայմանավորված էր միջարք գործոններով:

Նախ և առաջ, մինչ խորհրդային և խորհրդային ժամանակաշրջաններում լռեցված վեճերն ու հակամարտությունները օրակարգային դարձած տարածքային ամբողջականության և ազգային ինքնագիտակցության խնդիրների պատճառով խիստ սրվեցին: Հարավկովկասյան երեք համեմատաբար փոքր տարածք ունեցող հանրապետություններում բնակվում են երկու տասնյակից ավելի ազգային-էթնիկական միավորներ, ինչն արդեն պարարտ հող նախապատրաստեց լարվածության ու հակամարտությունների ծագման կամ վերսկսման համար: Կտրուկ վատթարացավ տարածաշրջանի բնակչության տնտեսական դրությունը, ինչը պայմանավորված էր նաև ներքաղաքական կոնֆլիկտներով: Արդյունաբերությունը կրճատվում էր մի քանի անգամ, աշխատանքի հնարավորություններից զրկված երիտասարդությունը հարում էր ծայրահեղական հոսանքներին: Իրավիճակն ավելի էր բարդանում կազմակերպված հանցավորության որոշակի ակտիվացման պատճառով: Երկար ժամանակ չպահպանվող դյուրանցանելի արտաքին սահմանները նպաստավոր պայմաններ էին ստեղծում մարդկանց վաճառքի, թմրանյութերի տարածման և զենքի անօրինական վաճառքի զարգացման համար:

Հարկ է նաև նշել, որ հարավկովկասյան պետությունների համագործակցության վրա ազդեցին ոչ միայն ներտարածաշրջանային

քաղաքական, տնտեսական և այլ գործընթացները, այլ նաև մյուս երկրների, մասնավորապես՝ հարավային հարևաններ Իրանի և Թուրքիայի հետ փոխհարաբերությունները, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներից դուրս յուրաքանչյուրի առանձին գործակցությունը Ռուսաստանի հետ:

Նշվածը հիմնավորված է նաև նրանով, որ տարածաշրջանի աշխարհաքաղաքական համալիրում ազգային անվտանգությունից ու սահմանների ամբողջականությունից հետո երկրորդ կարևորագույն բաղադրիչը հանդիսանում է աշխարհատնտեսությունը: Հարավային Կովկասն իրենից ներկայացնում է բնական այնպիսի արժեքավոր ռեսուրսների շտեմարան, ինչպիսիք են՝ ածխաջրային հումքը, ուրանը, բամբակը և այլն: Այս ապրանքների արտահանման առումով ամենահարմարը ռուսական շուկան էր, հատկապես դեռ խորհրդային ժամանակաշրջանից ձևավորված առևտրատնտեսական կապերի առկայության արդյունքում: Ռուսաստանն իքն էլ էր շահագրգռված այդ կապերի զարգացմամբ, քանի որ նախկին խորհրդային Միությունում արտադրությունը կազմակերպված էր այնպես, որ միութենական ոչ մի հանրապետությունն դուրս չմնա արտադրական գործընթացից: Այսինքն, հումքը ձեռք էր բերվում մեկ ԽՍՀ-ից, մասերը ավելացնում էին մեկ այլ ԽՍՀ-ում, իսկ վերջնական արտադրանքը պատրաստվում էր մեկ այլ միութենական հանրապետությունում:

Հայ-ռուսական համագործակցության առումով կարելի է նշել, որ Ռուսաստանն այդ պահին կանգնած էր պատմական ընտրության առաջ, ինչը մի քանի տասնամյակներով կկանխորոշեր նրա զարգացումը: Հայաստանն ուշքի էր գալիս 1988թ. ավերիչ երկրաշարժից, երկրում ծագել էր տնտեսական և սոցիալական ճգնաժամ: Գրեթե միաժամանակ ծագած վրաց-աբխազական և դարաբաղյան հակամարտությունները հանգեցրել էին Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող առևտրական ուղիների փակման: Ծուրջ 60%-ի հասած

գործազրկությունը դառնալ այն պատճառներից մեկը, որը պայմանավորեց «Մեծ արտագաղթը»¹⁶:

Այդ ժամանակաշրջանում էլ սկսվում է կոնֆլիկտային երկխոսությունն Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի սահմանների վերանայման պատճառով, որը վերաճում է լայնամասշտաբ ռազմական գործողությունների: Կանոնավոր և լավ զինված բանակի բացակայության պայմաններում Հայաստանը փաստացիորեն խոցելի էր դարձել Ադրբեջանի հարձակումների նկատմամբ, որն ստացել էր Անդրկովկասյան ռազմական օկրուգի՝ իր տարածքում գտնվող 4-րդ բանակի սպառազինության մեծ մասը, իսկ Ռուսաստանի ռազմական ներկայությունն իր տարածքում 1992թ. ընթացքում սահմանափակել էր Գաբալայում հակահրթիռային ռադիոկոնտրոլիչ կայանի անձնակազմով¹⁷:

Հարկ է նկատել, որ ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում Ռուսաստանին ամենաքիչը հետաքրքրում էին Հարավային Կովկասում իր ռազմական ներկայության և արդեն անկախ պետությունների միջև նախկին Խորհրդային բանակի սպառազինության քվոտավորման հարցերը: Դրանից շտապեց օգտվել Ադրբեջանը, որն այդ սպառազինությունը ստացավ ԱՊՀ անդամակցության դիմաց: Չնայած թշնամու բացարձակ գերակշռությանը՝ հայկական ինքնաբերական կազմավորված ջոկատները և հետագայում արդեն կանոնավոր զինված ուժերը փոխեցին Ղարաբաղյան հակամարտության պատերազմական փուլի ողջ ընթացքը՝ ազատագրելով Հայաստանն ու Արցախը ցամաքային ուղղվեապող Լաչին քաղաքը և Շուշին: 1994թ. մայիսի 16-ին Հայաստանի, Ղարաբաղի և Ադրբեջանի պաշտպանության նախարարները Մոսկվայում ստորագրեցին պատերազմական գործողությունները դադարեցնելու և հրադարարի հաստատման մասին համաձայնագիր¹⁸:

Չնայած բոլոր դժվորություններին Հայաստանին հաջողվեց իրագործել մտադրված կառուցվածքային բոլոր փոփոխությունները՝

¹⁶ Корнилов А.А., Геополитика современных российско-армянских отношений и ее влияние на проект «Новый Великий Шелковый Путь». <http://nashasreda.ru/geopolitika-sovremennyx-rossijsko-armyanskix-otnoshenij-i-ee-vliyanie-na-proekt-novyj-velikij-shelkovyj-put/>

¹⁷ Третьяков А.С., Вооруженные силы РФ в Республике Армения: некоторые правовые аспекты пребывания // Право и безопасность. - 2003. № - 2. Июнь.

¹⁸ Քնչարյան Տ.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 193:

ազատականացնելով և բարեփոխելով տնտեսությունը ու սոցիալական համակարգը: Սկզբնական շրջանում Հայաստանը փորձեց ոտքի կանգնել առանց Ռուսաստանի մասնակցության, հայկական իշխանությունները ձգտում էին երկրի աշխարհագրական դիրքն օգտագործելով այն վերածել երկրորդ Շվեյցարիայի: Սակայն սպասելիքները չարդարացան, և ի հայտ եկան երկրաչափական պրոգրեսիայով աճող տարածայնություններ երկրի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման և արտաքին քաղաքականության կուրսի վերաբերյալ, ինչը ստիպեց հանրապետության ղեկավարությանը մտածել Ռուսաստանի հետ համագործակցության անհրաժեշտության մասին:

Տարածքային և ռեսուրսային առումներով սահմանափակ հնարավորություններ ունեցող Հայաստանը հորհրդային Միության փլուզումից հետո ընկած ժամանակահատվածում արտաքին քաղաքականության կողմնորոշման այդքան էլ լայն ընտրության իրավունք չունեց: Հատկապես, որ երկիրը գտնվում էր մեծ տերությունների ռազմա-քաղաքական և տնտեսական շահերի խաչածևման ոլորտում: ՀՀ նախկին նախագահ Ռ. Քոչարյանը նշում է, որ այդ առումով կարող են լինել արտաքին հարաբերություններում գործել ակերպի երկու տարբերակ.

1. մեծ տերությունների աշխարհաքաղաքական տարածայնությունների շահարկում՝ դրանից առավել ազույնս օգուտ ստանալու նպատակով,

2. օգուտ ստանալու փնտրտուքներ, սակայն ոչ թե մեծ տերությունների միջև տարածայնություններն օգտագործելով, այլ դրանք հարթելու ճանապարհով՝ առաջին պլան մղելով քաղաքական ու տնտեսական հեռավոր նպատակահարմարությունը¹⁹:

Իհարկե, Հայաստանն ընտրեց երկրորդ տարբերակը: Երկրի արտաքին գերատեսչությունը սկսեց առաջնորդվել կոմպլեմենտարության սկզբունքով, և դա, ինչպես գտնում էր հայտնի դիվանագետ, 1992-1994թթ. ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վլ. Ստուպիշինը, «...յուրաքանչյուր զուգահեռվող և կողմնորոշված գործողությունն արտաքին քաղաքականության

¹⁹ ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի ելույթը ՌԴ ԱԳՆ Դիվանագիտության ակադեմիայում, 16.01.2003թ., Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 17.01.2003թ., էջ 5:

ընդունելի մեթոդ է, և չկա դրան անպայման այլ ընտրանք փնտրելու անհրաժեշտություն»²⁰:

Արտաքին քաղաքականության համատեքստում կոմպլեմենտարիզմի²¹ սկզբունքը նշանակում է այդ քաղաքականության տարբերասպեկտրի փոխընդհանուրություն, այսինքն, դրա հիմքում ընկած հեռանկարները պետք է հավասարակշռեն միմյանց և լրացվեն երկրորդական, երրորդական կամ այլ նշանակության անհրաժեշտուհնարավորասպեկտրով՝ արդյունավետ արտաքին քաղաքականություն վարելու համար: Կոմպլեմենտարության քաղաքականությունը ենթադրում է նաև առավել սերտ կապերի հաստատում առանձին պետություններին հետ: Հայաստանի Հանրապետությունը իր արտաքին ռազմական քաղաքականությունը միջազգային մակարդակում կառուցում է հիմվելով «և՛»-«և՛» սկզբունքի վրա և բացառելով «կամ»-«կամ»-ի կիրառումը, եթե դա չի սպառնում ազգային շահերին²²: Փոխընդհանուր սկզբունքը հետագայում ամրագրվեց նաև Հայաստանի անվտանգությանը վերաբերող հիմնական փաստաթղթերում, օրինակ, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում՝ որպես արտաքին անվտանգության ռազմավարության իրականացման գլխավոր սկզբունք²³:

Հարավային Կովկասում ծավալվող անվտանգության և ռազմաքաղաքական գործընթացների ազդեցությունը ժամանակի ընթացքում ընդլայնվում էր, ինչի հետևանքով տարածաշրջանում ակտիվացավ տարբեր արտաքին ուժերի, գերտերությունների և անվտանգության համակարգերի գործունեությունը²⁴: Դեռևս Ռ.

²⁰ Ступишин В., «Концепция комплементарности во внешней политике Армении» // Ноев Ковчег. - 2001. Март, с. 18-19

²¹ Ռուսերեն՝ «комплемент», լատիներեն՝ «complementum» կոմպլեմենտար, նշանակում է լրացում, փոխընդհանուրություն: Տե՛ս Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Եր., ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2015, էջ 734

²² Չաքարյան Ա.Բ., ՀՀ արտաքին քաղաքականության ձեռքբերումներն ու մարտահրավերները», «Հայ կական բանակ», Եր., 2016, թիվ 3 (89), էջ 34:

²³ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007:

²⁴ Բոթանջյան Յ.Ս., Հայաստանը և միջազգային հանրությունը // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական

Քոչարյանն իր նախընտրական ծրագրում Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցությանն առանձնացրել էր առանձին կետով, իսկ ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ համագործակցությունը՝ մեկ այլ կետով: Բացի այդ, Ռուսաստանի հետ փոխգործակցության կետը նախորդում էր Արևմուտքի հետ համագործակցելու բաժնին, ինչը ևս մեկ անգամ վկայում էր հայ-ռուսական հարաբերությունների առաջնայնությունը մյուսների նկատմամբ:

Ինչ վերաբերում է հայ-ռուսական հարաբերությունների պաշտոնական զարգացման ժամանակագրությանը, ապա պետք է ասել, որ Հայաստանի և Ռուսաստանի՝ որպես անկախ պետությունների միջև համագործակցությունը սկսվել է 1991թ. դեկտեմբերի 29-ին՝ «Բարեկամության, գործընկերության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի» կնքումով: Այդ գործընթացը տեղի է ունեցել միջազգային երկխոսության առումով դժվարին պայմաններում, քանի որ Խորհրդային Միության փլուզումից հետո իրավական վակուումում հայտնվել էին ոչ միայն Ռուսաստանը և Հայաստանը, այլ նաև նախկին միութենական մյուս հանրապետությունները: 1991 թվականի պայմանագիրը ոչ միայն սահմանեց երկկողմանի հարաբերությունների հիմքը, այլև որոշեց դրանց հետագա ուղղությունները և բնույթը:

Այստեղ տեղին է նաև արժևորել թե Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանության (1991թ.), թե Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության (1994թ.) պաշտոնական ներկայացուցչությունների բացման փաստերը, ինչը փաստորեն այդ շրջանում պարզապես արտահայտեց արդեն իսկ ձևավորված բարեկամական ու բարիդրացիական փոխհարաբերությունները: Հատկանշական է, որ այլ պետությունների հետ պաշտոնական ներկայացուցչությունների բացման գործընթացի համեմատում (որոնց հետ կապված դիտվում էին կապերի հաստատման հեռանկարային մոտեցումները) տարբերությունը այն էր, որ Ռուսաստանի պարագայում դեսպանությունների բացման ժամանակ

քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 684-685:

Հայաստանը բավականին մեծ ծավալի սկզբնական գործակցության շրջանառություն ունենե՞ր²⁵:

1990-ականների առաջին տարիներին տարածաշրջանում սրվող հակամարտությունների պայմաններում հայ-ռուսական նշված պայմանագիրը պարունակում էր մի շարք դրույթներ, որոնք միջազգային իրավական դաշտի ձևավորման հետագա գործընթացի համար խիստ անհրաժեշտ էին: Մասնավորապես, 3-րդ հոդվածում ասվում է, որ «այնպիսի իրավիճակի ստեղծումը, որը, կողմերից մեկի կարծիքով, խաաղաղությանը, դրա խախտման կամ իր հիմնական շահերի համար սպառնալիք է հանդիսանում, այդ Կողմը կարող է դիմել մյուս Կողմին՝ անհետաձգելի օգնության խնդրանքով, որի տեսակները և չափերը կորոշվեն համապատասխան խորհրդակցությունների մշոցով»²⁶:

Սակայն պայմանագրի վավերացումը երկու երկրների օրենսդիր մարմիններում հանդիպեց որոշ խնչընդոտների: Հայաստանի խորհրդարանի պատգամավորների մի մասը Ռուսաստանի՝ դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում Ադրբեջանին ոչ պաշտոնապես, պասիվ, բայց, միևնույն է, օգնելու պատճառով դեմ էին պայմանագրին: Նրանք առարկում էին նաև դրա որոշ հոդվածների ռազմական բնույթից: ՌԴ Գերագույն խորհրդում պատգամավորների մի մասը հրաժարվում էր այն վավերացնել՝ պատճառաբանելով, որ անհրաժեշտ է նմանատիպ պայմանագիր կնքել միաժամանակ նաև Ադրբեջանի հետ:

²⁵ Ռուսաստանի Դաշնության դեսպանությունը երևանում հիմնվել է 1991 թվականին: Առաջին դեսպան Վլադիմիր Ստուպոչինը նշանակվել է 1993 թվականի մարտի 2-ին: 1994 թվականի սեպտեմբերի 13-ին դեսպան է նշանակվել Անդրեյ Ուռնովը, 1998 թվականին նոյեմբերին՝ Անատոլի Դրյուկովը, 2005 թվականի մայիսին՝ Նիկոլայ Պավլովը, 2008 թվականի հունիսի 8-ին Վլադեսլավ Կովալենկոն, 2013 թվականից մարտի 21-ից՝ Իվան Վոլինկինը: Տե՛ս Посольство Российской Федерации в Республике Армения, <http://www.embassyru.am/page.php?id=6>: Հայաստանի Հանրապետության դեսպանությունը Մոսկվայում բացվել է 1994 թվականին, դեսպան է նշանակվել Յուրի Մկրտումյանը: 1997 թվականին դեսպան է նշանակվել Գագիկ Ծախբազյանը, 1999 թվականին՝ Սուրեն Սահակյանը, 2002 թվականին՝ Արմեն Սմբատյանը, 2010 թվականին Օլեգ Եսայանը, 2017 թվականի մարտի 10-ից՝ Վարդան Տողոյանը: Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ, Դեսպանություններ-Ռուսաստան, թարմացված 16.12.2016թ., <http://mfa.am/hy/by-countries/ru/>

²⁶ Корнилов А.А., Геополитика современных российско-армянских отношений и ее влияние на проект «Новый Великий Шелковый Путь». <http://nashasreda.ru/geopolitika-sovremennyx-rossijsko-armyanskix-otnoshenij-i-ee-vliyanie-na-proekt-novyj-velikij-shelkovyj-put/>

Պայմանագրի վավերացման ընթացքում ամենաքննարկվող ու սուր հարցերից էր Հայաստանի տարածքում տեղակայված նախկին ԽՍՀՄ ՁՈՒ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 7-րդ գվարդիական բանակի հարցը: Խնդիրը ԱՊՀ բուլոբերկրների համար այդ պահին օրակարգային էր, քանի որ նորաստեղծ Անկախ Պետությունների Համագործակցության անդամների համար հավաքական զինված ուժեր ստեղծելու գործընթացին զուգահեռ արվում էին նաև առանձին հանրապետություններում ազգային բանակների ստեղծման փորձեր: Արդեն 1992 թվականի գարնանը պարզ դարձավ, որ նախկին խորհրդային տարածքի երկրները միասնական վերահսկողության տակ պահելն անհնար է: Նախ, սրվեցին ԱՊՀ որոշ երկրների միջև հարաբերությունները, զինված ուժերի ղեկավարման համար միասնական գործունյա ուժը բացակայում էր: Բացի այդ, Մոսկվան, ինչպես և սպասվում էր, իր վրա վերցրեց ստեղծվելիք ռազմական միության կազմակերպման ու ղեկավարման գերիշխող դերը, ինչը, բնականաբար, դուր չեկավ ԱՊՀ որոշ երկրների: Ձախողված նախաձեռնությունը, արդյունքում, հանգեցրեց նախկին միութենական հանրապետությունների միջև խորհրդային բանակի ունեցվածքի, սպառազինության բախման ու ազգայնացման գործընթացի²⁷:

Այնուամենայնիվ, ակնհայտ էր, որ անհրաժեշտ էր ստեղծել տարածաշրջանային անվտանգության արդյունավետ նոր համակարգ՝ ռազմաքաղաքական այնպիսի կառույց, որը նվազագույնի կհասցներ տնտեսական, ռազմական, տեխնիկական ծախսերը և կհանգեցներ զինված հակամարտությունների լարվածության վերացմանը հետխորհրդային տարածությունում: Ուստի, հաշվի առնելով այս և բազմաթիվ այլ գործոններ՝ 1992 թվականի մայիսի 15-ին Տաշքենդում Հայաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի միջև կնքվեց Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը, որը ՄԱԿ-ի կանոնադրության 52-րդ հոդվածին համապատասխան՝ դարձավ տարածաշրջանային անվտանգության կազմակերպման օրինակ:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունն իր զարգացման սկզբնական փուլում ազգային անվտանգության խնդիրները կապեց

²⁷ Ивашов Л.Г., Булыгин А.Н., Коллективная безопасность в рамках Содружества Независимых Государств: состояние и перспективы обеспечения // Военная мысль. – 1998, с. 8-10.

Ռուսաստանի կողմից ստեղծված հավաքական անվտանգության մոտեցման հետ²⁸: Իր հերթին, Չափաքան անվտանգության մասին պայամանագիրը բերեց 1992 թվականի օգոստոսին մեկ այլ ոչ պակաս կարևոր փաստաթղթի ստորագրմանը, որը վերաբերում էր ՀՀ տարածում Ռուսաստանի գինված ու ժերի իրավական կարգավիճակին: Արդյունքում Հայաստանի տարածքում տեղակայված նախկին խորհրդային գինված ու ժերի գործարար հանձնվեց Ռուսաստանի Դաշնությանը: Դրանով, սակայն Հայաստանի ու Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական գամագործակցությունը կանգ չառավ: 3 տարի անց կքնվեց Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմակայանի մասին պայամանագիրը: Դրանում ասվում է, որ ռուսական ռազմակայանը Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ողջ ընթացքում Ռուսաստանի Դաշնության շահերը պաշտպանելու գործառնությունից բացի ՀՀ գինված ու ժերի հետ համատեղ ապահովում է նաև Հայաստանի անվտանգությունը ԽՍՀՄ նախկին սահմանի ողջ երկայնքով:

Որպես ամփոփում պետք է փաստել, որ հայ-ռուսական հարաբերությունները կայացման սկզբնական փուլում Հայաստանի համար կարևորվել են աշխարհաքաղաքական տեսանկյունից, քանի որ Ռուսաստանը տարածաշրջանային դերակատարություն ունեցող պետություն է և դարավոր ավանդույթներ ունենալով Հարավային Կովկասում, միաժամանակ ներազդեցության լայն լծակներ և գործունեության մեծ հնարավորություններ ունի միջազգային հարաբերություններում: Վերլուծվող շրջանի զարգացումների ընթացքը շատ հստակ ցույց տվեց այդ տարածաշրջանի կարևորությունը և կանխորոշեց Ռուսաստանի ու Հարավային Կովկասի մակարդակն ու մասնակցությունը այս տարածաշրջանի կյանքում: Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական զարգացումները նպաստում էին ընդլայնելու հայ-ռուսական սերտ սոցիալ-մշակութային կապերն ու արդյունավետ տնտեսական համագործակցությունը, որը, ի հարկե, ընդգրկում էր նաև Ռուսաստանի Դաշնության կենսական շահերը Հարավային Կովկասի տարածաշրջանում:

²⁸ Минасян С.М., Процесс формирования системы коллективной безопасности в рамках СНГ: история и перспективы // Вестник Армяно-российского университета. -2003. с. 46-53.

1.2. Հայ -ռուսական փոխգործակցության ոլորտների շրջանակը և փոխապ մանավորված զարգացումները

Հարավային Կովկասում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները իրենց ազդեցությունն են ունենում Հայաստանի քաղաքական կյանքի վրա, և, հակառակը, հայկական պետությունն իր հերթին ակտիվորեն մասնակցում է տարածաշրջանի քաղաքական կյանքին, այդ թվում՝ անվտանգությանը վերաբերող գործընթացներին: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը և մասնակցությունը աշխարհում ու տարածաշրջանում անվտանգության երաշխավորման խնդիրներին առանձնանում է բազմաթիվ գործոններով: Առանց դրանք հաշվի առնելու հնարավոր չէ ներգրավվել տարածաշրջանային ռազմաքաղաքական և տնտեսական համակարգի մեջ և վարել արդյունավետ արտաքին քաղաքականություն: Այդ հիմնական գործոններից են՝ Հայաստանի աշխարհագրական դիրքը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայությունը, Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական գործընկերությունը, Հայաստանում արտատարածաշրջանային ուժերի (ԱՄՆ, ԵՄ, Եվրոպայի որոշ երկրներ) շահերի խաչածևոումը:

Յուրաքանչյուր դաշնակցական հարաբերությունների համար՝ ինչպես միջպետական, այնպես էլ այլ մակարդակներում, առաջին հերթին անհրաժեշտ են խնդիրները համատեղ ուժերով և առավել արդյունավետ տարբերակներով լուծելու փոխադարձ վստահության վրա հիմնված մոտեցումներ ու մեթոդներ: Դրանց մշակումը և իրականացումը պետք է կատարվի համատեղ աշխատանքների միջոցով:

Հայ-ռուսական հարաբերությունները, դրանց զարգացումը, երկու երկրների միջև համագործակցությունը բարդ ու բազմակողմանի գործընթացներ են և երկուստեք ներառում են քաղաքական, հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառները: Պատմական բավականաչափ փորձ ունեցող այդ հարաբերությունները ձեռք են բերվել ժամանակի ընթացքում երկու ժողովուրդների պատմության մեջ արդեն դրոշմված փոխադարձ վստահության, օգնության և փոխըմբռնման արդյունքում:

Հայ -ռուսական հարաբերությունները բազմատարր են: Նշանակալի է, որ համագործակցության այդ լայն շրջանակում բոլոր բաղկացուցիչները բարձր մակարդակի վրան, որոնք առանցքային դեր են կատարում պետության անվտանգության ապահովման համար: Բարեկամական հարաբերությունների համար ամուր հիմք է ռազմական, քաղաքական, տնտեսական ու էներգետիկ ոլորտներում վստահելի համագործակցության առկայությունը և չկա որևէ ուղղություն, որտեղ հնարավոր չէ չարձանագրել կայուն զարգացում ու առաջընթացի միտումներ²⁹:

Համագործակցությունը տնտեսության բնագավառում բազմաբովանդակ է և ընդգրկում է Հայաստանի տնտեսության շատ ենթակառուցվածքներ: Այն զարգանում է ԱՊՀ և հարավկովկասյան տարածությունում տեղի ունեցող ինտեգրացիոն և ապահովագրացիոն միտումների բարդ խաչաձևման պայմաններում: ՀՀ տարածքային առանձնահատկությունները և զարգացումը նախկին ԽՍՀՄ տնտեսական համակարգում շատ առումներով ազդել է ԱՊՀ երկրների, այդ թվում՝ նաև Ռուսաստանի հետ տնտեսական կապերի բովանդակության վրա: Նախկին Խորհրդային միության հանրապետությունների միջև հոլմքային փոխանակման շնորհիվ Հայաստանը կարողանում էր ապահովել իր պահանջարկները: Միութենական հանրապետությունների հետ կապերից Հայաստանի կախվածության վառ օրինակ էր հանդիսանում այն, որ հայկական ձեռնարկությունների կողմից արտադրված արդյունաբերական արտադրանքի միայն 2 տոկոսն էր մնում ներքին սպառման համար, իսկ մնացած մասը ուղարկվում էր մյուս հանրապետություններ: ԽՍՀՄ փլուզումը և անկախության ձեռքբերումը հանգեցրեցին այդ կապերի ընդհատմանը: Դրությունն ավելի էր բարդանում Անդրկովկասում հաստատված քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակով: Հայաստանի տնտեսության վրա հսկայական ազդեցություն ունեցավ Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատճառով Ադրբեյջանի կողմից ձեռնարկված Հայաստանի շրջափակումը և բոլոր կենսական կապերի դադարեցումը

²⁹ Չաքարյան Ա.Բ., Տարածաշրջանային անվտանգություն. հայ-ռուսական երկկողմ համագործակցությունն էլ համատեղ ջանքեր՝ ի շահ կայուն ել խաղաղ զարգացման, 19.11.2016թ., <https://shabat.am/am/article/99815/Taratsashrjanayin-anvtangutyun.-hay-rusakan-erkkogh-m-hamagortsakcutyun>

նրա հետ: Աբխազական և հարավօսական հակամարտության ընթացքում Վրաստանում հանգեցրեցին Չայաստանը Ռուսաստանի հետ կապող տրանսպորտային ուղիների (ավտոճանապարհների ու երկաթուղային գծերի) փակմանը: Չայաստանի տնտեսության համար ուժեղ հարված էր Սպիտակի երկրաշարժը, որի պատճառով տնտեսական ցնցումները երկրում սկսվեցին ավելի վաղ, քան ԱՊՅ մյուս հանրապետություններում:

Չայ-ռուսական առևտրատնտեսական համագործակցության ճանապարհին առաջին քայլը իրավական այնպիսի դաշտի ստեղծումն էր, որի շրջանակներում այդ համագործակցությունը դարձավ իրագործելի: Առաջին պայմանագիրը, որն ուղղված էր ԱՊՅ երկրների միջև տնտեսական հարաբերությունների կարգավորմանը, 1993թ. սեպտեմբերի 24-ին կնքված «Տնտեսական միության ստեղծման մասին» պայմանագիրն էր: Այն հիմք ստեղծեց մեկ այլ փաստաթղթի՝ «Սկսած 1995թ. փետրվարի 1-ից ՌԴ կառավարության և ՉՉ կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրի» ստեղծման համար: Այս համաձայնագիրը դրեց հայ-ռուսական առևտրատնտեսական համագործակցության սկիզբը:

Երկու երկրների միջև հարաբերությունների համար կարևոր էր նաև «ՌԴ կառավարության կողմից ՉՉ կառավարությանը տրված պետական վարկի պարքի մարման համար ՉՉ սեփականության ներքո գտնվող պետական գույքի փոխանցման կարգի մասին» համաձայնագիրը³⁰: Ադպիսով Չայաստանը դարձավ այդ պահին առաջին պետությունը, ում հետ Ռուսաստանը կնքեց նման բնույթի համաձայնագիր: 2002թ. նոյեմբերին Ռուսաստանի վարչապետ Մ. Կասյանովի՝ Երևան այցի ընթացքում ստորագրվեց միջկառավարական համաձայնագիր ռուսական կողմին հայկական մի քանի ձեռնարկությունների («Չրագդան ՋԷԿ», «Մարս» գործարան, Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի, Կառավարման ավոմատացված համակարգերի գիտահետազոտական ինստիտուտի, Նյութերի ուսումնասիրության գիտահետազոտական ինստիտուտի) բաժնեղթերի վերահսկիչ փաթեթների փոխանցման մասին: Միայն դրանից հետո Ռուսաստանի

³⁰ Информация о работе Комитета по делам СНГ и связям с соотечественниками в период весенней сессии 2002 года, <http://www.duma.gov.ru/sng/o2002.htm>

նկատմամբ ունեցած Յայաստանի պարտքը, որը կազմում էմ 93,7 միլիոն դոլլար, ամբողջովին մարվեց:

2004թ. ստեղծվում է «Յայ-ռուսական գործնական համագործակցության ասոցացիան» (АРАДЕС), որի անդամները երկու երկրների բիզնեսի և քաղաքական վերնախավի ներկայացուցիչներն էին³¹: Իսկ 2006թ. հոկտեմբերին Յայաստանի կառավարությունը որոշում է 30 տարի ժամկետով և 20 տարի ավարտից հետո պայմանագրի երկարացման իրավունքով «Յայաստանի երկաթուղիներ»-ը հանձնել «Ռուսաստանի երկաթուղիներ» ԲԲԸ-ին: «Յայաստանի երկաթուղիներ» ՓԲԸ-ը 100 տոկոսով պետական ձեռնարկություն էր, որը տնօրինում էր հանրապետության՝ շուրջ 900կմ երկարության հասնող երկաթուղային ենթակառուցվածքները: Տվյալ ընկերության բաժնեմասերի ընդհանուր արժողությունը 40 միլիոն դոլլար էր՝ 1,2 միլիոն դոլլար տարեկան մաքուր եկամուտով (2006թ.): Այդ և այլ տնտեսական ոլորտի զարգացումների արդյունքում կարելի է փաստել, որ ռուսական բիզնեսը հիմնովին ներթափանցեց Յայաստանի տնտեսության գրեթե բոլոր բնագավառները:

Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների զարգացման արդի օրակարգը ներառում է էներգետիկայի և արդյունաբերության բնագավառներում համագործակցության, առևտրատնտեսական կապերի զարգացման, ինչպես նաև համատեղ ձեռնարկությունների ստեղծման, դրանց գործարկման ուղղությամբ ռուսաստանյան կապիտալի ներգրավման հարցերը, պաշտպանական և ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցության հարցերը, տրանսպորտային երթուղիների գործարկման հարցերը՝ ներառյալ Փոթի-Կովկաս լաստանավային երկաթուղային փոխադրումները, Աբխազիայով անցնող երկաթուղին ու «Յունսիս-Յարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը, տարածաշրջանային կայունության և անվտանգության խնդիրները, Յայաստանի ռուսաստանաբնակ քաղաքացիների կարգավիճակի բարելավման հարցերը, Ռուսաստանում ծայրահեղական կազմակերպությունների կողմից այլազգիների, մասնավորապես՝ հայերի նկատմամբ դրսևորվող ազգային անհադուրժողականության խնդիրը:

³¹ АРАДЕС развивает сотрудничество // Ноев ковчег. - 2004. № 7, С.1.

Հայաստանի համար առաջնային են մնում Ռուսաստանի հետ
Էներգետիկ ոլորտում համագործակցությունը: Այս
հարաբերությունները շարունակելու են խորանալ: Միևնույն
ժամանակ, Էներգիայի աղբյուրները՝ համաշխարհային շուկայում
դրանց աճող պահանջարկի պայմաններում, միջազգային
հարաբերություններում ավելի են վերածվում քաղաքական գործոնի:
Էներգետիկ անվտանգությունը կարևոր նշանակություն ունի
ազգային անվտանգության երաշխավորման համատեքստում, քանզի «այն
սահմանվում է որպես անձի, հասարակության և պետության
անվտանգության տնտեսական հիմքի ապահովում թե ներքին, թե
արտաքին սպառնալիքներից, ներառյալ՝ արտաքին ռեսուրսներից
հնարավորին քիչ կախվածությունը»³²: Մասնագետների գնահատմամբ՝
համաշխարհային Էներգետիկ շուկայում ընդհանուր պահանջարկը
2030թ. կանխատեսմամբ ավելանալու է 30 տոկոսով³³: Այստեղ հարկ է նաև
ընդգծել, որ Ռուսաստանը տնօրինում է համաշխարհային Էներգետիկ
ռեսուրսների նշանակալի հատվածը: Հետևաբար, Էներգետիկայի
ոլորտը դիվերսիֆիկացնելու և Էներգետիկ համակարգի սնուցման
աղբյուրների բազմազանությունն ապահովելու ուղղությամբ
Հայաստանի կողմից տարվող աշխատանքները կրելու են ավելի
ինտենսիվ բնույթ՝ հատկապես արժևորելով ռուսական ուղղությունը:

Հայաստանի և Ռուսաստանի միջև համագործակցության մյուս
կարևոր ոլորտը ազգային անվտանգության համատեղ ծրագրերի
ապահովումն է: Երկու երկրների պաշտպանության ու անվտանգության
ապահովումը ինքնին խոսում է կողմերի միջև վստահության մասին:
Հայաստանի համար այս բնույթի համագործակցությունը կարևոր
նշանակություն ունի, քանզի Հայաստանը միշտ պատրաստ է ՀԱՊԿ,
հակաօդային պաշտպանության միասնական համակարգի, սահմանների
համատեղ պահպանության շրջանակներում հարաբերությունները
ընդլայնմանը հավաքական անվտանգության այս բնագավառների
ուղղությամբ: Գաղտնիք չէ, որ ՀԱՊԿ-ի համար Ռուսաստանի դերն ու

³² Լրացուցիչ տես *Энергетическая стратегия России на период до 2030г.*, <http://minenergo.gov.ru/node/1026>

³³ Жукова М.Г., Роль и место России в вопросах международной энергитической безопасности / Зарубежное регионоведение: проблемы теории и практики: материалы VII Междунар.науч.конфер.; Под ред. А.А.Корнилова и др., Н.Новгород: ННГУ им. Н.И.Лобачевского, 2015, с. 206, 206-210

ներու ժը առանցքային են: Եվ այս հանգամանքի խելացի օգտագործումը կարող է նպաստել նաև հայ-ռուսական հարաբերություններին մակարդակով արդյունավետ համագործակցության միատեղմանը³⁴:

ՀՀ տարածքում ռուսական ռազմակայանի գործունեության դադարեցումը և ՌԴ կողմից Հայաստանին ռազմական օգնության ցուցաբերման դադարեցումը կհանգեցնեն տարածաշրջանում իրավիճակի կտրուկ փոփոխման: Անհրաժեշտ է նաև Հայաստանի` Թուրքիայի ու Իրանի հետ սահմանների պահպանության հարցում առանձնացնել ռուսական սահմանապահ զորքի դերը, որը կիսով չափ բաղկացած է հայ զինծառայողներից³⁵: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2011 թվականի հոկտեմբերի 23-ին ք.Մոսկվա այցելեցության պետական այցի ժամանակ ռազմաքաղաքական առումով կարևորվեց «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» 1995 թվականի մարտի 16-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրության վավերացումը, որը թույլ տվեց հստակեցնել ՌԴ ռազմակայանի գործառնությունները և երկարաձգել դրատեղակայումը ՀՀ տարածքում մինչև 2044 թվականը³⁶:

Միաժամանակ, դրական արձագանքներին զուգահեռ հայաստանյան զանգվածային լրատվական միջոցներում կարելի է հանդիպել նաև բացասական կարծիքների, համաձայն որոնց` այդ պայմանագիրը ոչ միայն չի համընկնում Հայաստանի ազգային շահերին, այլև զգալիորեն սահմանափակում է ՀՀ ինքնիշխանությունը: Միանշանակ չի կարելի գնահատել հայ-ռուսական պայմանագրի լուսաբանումը նաև ռուսաստանյան տեղեկատվական դաշտում, սակայն որոնք իրենց ռազմավարական դաշնակցի հետ հարաբերություններին նվիրված մեկնաբանություններում ավելի քան զուսպեին³⁷:

³⁴ Քոթանջյան Հ.Ս., Հայաստանի Հանրապետության ազգային շահերի ապահովման հեռանկարները համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման համատեքստում // «Հայկական բանակ», Եր., 2009, թիվ 4, էջ 58-59

³⁵ Группа Российских войск в Закавказье (Армения, Азербайджан, Грузия) // <http://www.waronline.org/write/world-military/russian-military-abroad/transcaucasia/#chapter-2-2>

³⁶ Մեկնարկել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի պետական այցը Ռուսաստանի Դաշնություն // <http://www.president.am/hy/press-release/item/2011/10/23/news-1869/>

³⁷ Հարությունյան Գ.Գ., Հայ-ռուսական հարաբերությունների արդի փուլը // «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, Եր., 2010, թիվ 6, էջ 3-4:

Ռուսաստանի համար, որը ԵԱՀԿ-ը շրջանակներում ձեռք բերված ռազմաքաղաքական համաձայնության ներդրումները դիտում է որպես Եվրոպայի անվտանգության գլխավոր հիմքերից մեկը, կարևոր է նաև այն, որ երկու երկրներն էլ փոխգործակցում են Եվրոպայի սովորական սպառազինության մասին պայմանագրի հետ կապված հարցերում: Հայաստանը հասկանալով է մոտենում դեպի արևելք ՆԱՏՕ-ի ընդլայնման վերաբերյալ Ռուսաստանի բացասական վերաբերմունքին:

Սահմանների պահպանության ու ազգային անվտանգության ապահովման ոլորտներում Հայաստանի արտաքին քաղաքականության բազմակետոր ուղղվածությունը, պայմանավորված կոմալեմենտարիզմի սկզբունքներով³⁸, բավականին արդյունավետ մոտեցմամբ համադրվում է Հայաստանի ռազմավարական կարևորագույն գործընկերների՝ մի կողմից Ռուսաստանի Դաշնության և մյուս կողմից՝ ՆԱՏՕ-ի ու ԱՄՆ-ի միջև բազմաֆորմատ դիսկուրսի հետ: Պետք է նշել սկզբունքորեն կարևոր այն փաստը, որ Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցների, տվյալ դեպքում՝ Հայաստանի ձգտումը՝ ՆԱՏՕ-ի երկրների հետ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում երկկողմանի և բազմակողմանի համագործակցության խորացման ուղղությամբ, չի հակասում ՀՀ և ՌԴ ռազմավարական դաշնակցության վրա հիմնված Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության և հայ-ռուսական գործակցության երկկողմանի իրավական ակտերի շրջանակներում պարտականությունների կատարմանը:

Հայաստանը հանդիսանում է ոչ միայն Ռուսաստանի կարևորագույն ռազմավարական դաշնակիցը Հարավային Կովկասում, այլև Հավաքական անվտանգության պայմանագրի առավել ակտիվ անդամներից մեկը: Այս գործոնները, ինչպես նաև ՀՀ տարածքում ռուսական զորքերի առկայությունը (միակը տարածաշրջանում՝ Վրաստանի տարածքից ռուսական զորամիավորումների դուրս բերումից հետո), ուրվագծում են որոշակի սահմաններ Հայաստանի և ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում:

³⁸ ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007

Հանրագուժարի բերելով միջազգային փորձը և փորձագետների կարծիքները, կարելի է հայ-ռուսական երկխոսության համատեքստում «ռազմավարական գործակցությունը» սահմանել որպես միջպետական կարևորությամբ փոխգործակցություն, որը ընդգրկում է գործակցող երկրների կենսագործունեության գործնականորեն բոլոր ճյուղերը և գործակցող կողմերին թույլ է տալիս ջանքերը համախամբելով հասնել կենսականորեն անհրաժեշտ ներքին ու արտաքին քաղաքական նպատակների իրականացմանը: Այդ սահմանման տակ պետք է հասկանալ միջպետական հարաբերությունների այնպիսի բարձր մակարդակ, որի դեպքում գործակցությունը երկու պետությունների միջև նախատեսված և հաստատված է երկարաժամկետ հեռանկարով, պայմանավորում է միջազգային քաղաքականության առավել կարևոր հարցերի, ներառյալ՝ ընդհանուր և տարածաշրջանային զարգացման հարցերի նկատմամբ դիրքորոշումների միասնականությունը կամ միատեսակությունը, ընդգրկում է տնտեսական, քաղաքական, ռազմական, սոցիալ-մշակութային և այլ ոլորտների բավական լայն միջրջանակ ու ծառայում է կողմերից յուրաքանչյուրի ազգային անվտանգության շահերին:

Վերոնշյալ փաստերը հնարավորություն են տալիս հանգել այն հետևությունը, որ Հայաստանը դիտարկելի է որպես Հարավային Կովկասում Ռուսաստանի ամենասկտիվ անվտանգային և ռազմաքաղաքական դաշնակից: Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական գործակցության մասին ավելի մասին անդրադարձ է կատարվում ատենախոսության 3-րդ գլխում:

Միջպետական հարաբերությունների հաջորդ տարրը, առանց որի այդ հարաբերությունները «ռազմավարական» կոչելը դժվար կլինի, երկու երկրների արտաքին քաղաքական կուրսի կոորդինացումն է և կարևորագույն գործողություններում միմյանց հետ փոխհամաձայնության գալը: 2000 թվականի հռչակագրում, մասնավորապես, նշվում է, որ կողմերը «միջազգային կարևոր խնդիրների վերաբերյալ համընկնող կամ մոտ դիրքորոշում ունենալու դեպքում խորացնելու են կառուցողական և համակարգված արտաքին քաղաքական երկկողմանի, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԱՊՀ-ի, միջազգային և տարածաշրջանային այլ կազմակերպությունների ու

խորհրդաժողովների շրջանակներում փոխգործակցությանը»: Փաստաթղթում նաև ասվում էր, որ Հայաստանն ու Ռուսաստանը «կոորդինացնելու են իրենց արտաքին քաղաքական գործունեությանը կովկասյան տարածաշրջանում անվտանգության ամրապնդմանն ուղղված համատեղ կամ համաձայնեցված գործողությունների իրականացման համար»³⁹:

Հայ-ռուսական ռազմավարական համագործակցության ոչ պակաս կարևոր բաղադրիչ մասն են հանդիսանում նաև երկու երկրների միջև փոխհարաբերությանը գիտության, մշակութային և հումանիտար ոլորտներում: Դարերի ընթացքում կայանալով երկու ժողովուրդների միջև պատմական կապերի հիմքում՝ այդ հարաբերությանը առանձնահատուկ ընթացք ստացան 90-ական թվականների վերջերից:

Երկկողմանի հումանիտար համագործակցության բնագավառում կարևոր իրադարձությունն էր 1997 թվականի օգոստոսի 29-ին Հայ-ռուսական համալսարանի հիմնումը⁴⁰, ինչպես նաև որոշակի պարբերականությամբ անցկացված «Հայաստանում Ռուսաստանի տարի» և «Ռուսաստանում Հայաստանի տարի» փոխհամաձայնությամբ ծավալուն ու բազմաբովանդակ ծրագրերի իրականացումը: Այդ շրջանակներում իրականացվում են մշակույթի, առևտրա-տնտեսական հարաբերությանը, կրթության, գիտության, տեղեկատվության, սպորտի և այլ ոլորտներում բազմաթիվ միջոցառումներ:

Արդյունավետ քայլեր են ձեռնարկվել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության առանձին վարչական շրջանների միջև միջարթ ոլորտներում երկկողմանի կապերի համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով: Այդ միջոցառումների սկիզբը դրվեց Դոնի Ռոստովում, Սանկտ-Պետերբուրգում և Սոչիում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը բացմամբ: Իսկ ինչ վերաբերում է երկու երկրների մայրաքաղաքների միջև կապերին, ապա պետք է նշել, որ վերջին տարիների ընթացքում դրանք բավականին ամրապնդվել են: Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի շուրջ 50 տարածքային սուբյեկտներ

³⁹ Декларация о союзническом взаимодействии между Российской Федерацией и Республикой Армения, ориентированной на XXI век // Дипломатический вестник. - 2000. № 10., п. 2

⁴⁰ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի մասին պատմական ակնարկ // <http://www.rau.am/arm/365/2767>

ակտիվորեն համագործակցում են Հայաստանի մարզերի հետ տնտեսության և հումանիտար ոլորտներում⁴¹:

Կարելի է ամփոփել, որ պատմական երկարատև փորձ ձեռք բերած հայ-ռուսական հարաբերությունները և համագործակցությունը, սկսած իրենց ձևավորման ժամանակներից, ժամանակագրական և բովանդակային առումներով անցել են տարբեր փորձությունների միջով և գնալով թևակոխում են նորանոր փուլեր: Ներկայիս աշխարհաքաղաքական իրադրությունը նաև թելադրում է ժամանակակից հայ-ռուսական հարաբերությունների բնույթը և պահանջում է առավել լուրջ վերաբերմունք հատկապես անվտանգության ոլորտում համագործակցության նկատմամբ: Անվտանգության հարցերում ՀՀ և ՌԴ վարած քաղաքականությունը, հավաքական անվտանգության ամրապնդմանն ուղղված ջանքերը վկայում են այն լրջության մասին, որն ընկած է երկու պետությունների՝ տարածաշրջանային անվտանգության այսպես կոչված «թեժ կետերում» խաղաղության ու կայունության ապահովմանն ուղղված համատեղ գործունեության հիմքում: ՀԱՊԿ-ին և Եվրասիական տնտեսական միությունը Հայաստանի անդամակցությունը հնարավորություն տվեց երկու երկրներին զարգացնելու համագործակցությունը ոչ միայն հավաքական անվտանգության, այլ նաև ներքին անվտանգության, տնտեսության, մշակույթի տարբեր ոլորտներում և այլն:

Հայ-ռուսական հարաբերությունների զարգացումը դժվար կլիներ պատկերացնել առանց Ռուսաստանի հայ համայնքի, որն ակտիվորեն մասնակցում է Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքին: Տեղի հայկական սփյուռքը, երկու երկրների ու ժողովուրդների միջև ստեղծված մշակութային սերտ կապերը, միգրացիոն քաղաքականությունը հանդիսանում են Հայաստանը և Ռուսաստանը միավորող կարևոր օղակներ, որոնց ազդեցությունը երկրների ներքին ու արտաքին քաղաքականության առանձին ուղղությունների վրա օրինաչափ և տրամաբանական երևույթ է:

⁴¹ Шакарянц С. Армения и Россия в начале XXI века: перспективы развития отношений / Армения 2020. Стратегия развития и безопасности. - Ереван, Армянский центр стратегических и национальных исследований, 2003, с. 436

Միաժամանակ, տեղին է մեջբերել որոշ մասնագետների կողմից հնչեցվող այն քննադատությունը, որ հայ-ռուսական հարաբերությունների ձևաչափում այդքան էլ ակտիվ դերակատարություն չունի Ռուսաստանի հայ համայնքը՝ հաշվի առնելով նաև վերջինիս մարդկային և մյուս ռեսուրսային հնարավորությունները: Ռուսաստանում հայկական համայնքի ներուժը պետք է անվերապահորեն օգտագործել երկու երկրների միջև գործակցության գրեթե բոլոր բնագավառներում, ինչն իր հերթին կնպաստի նաև միջպետական հարաբերությունների ավելի ամրապնդմանը, ինչպես նաև որոշ դեպքերում էլ հստակեցմանն ու հետագազորգացման ուղղությունների կանխորոշմանը⁴²:

Այնուամենայնիվ, չնայած իրադարձություններով հարուստ առօրյային՝ հայ-ռուսական հարաբերությունների հետխորհրդային և ժամանակակից փուլը կազմում է միայն երկու ժողովուրդների բազմադարյա բարեկամության պատմության համեմատաբար կարճ ժամանակահատվածը: Այդ պատմության ողջ ընթացքում թե՛ հայերի և թե՛ ռուսների մոտառկա են եղել միմյանց միջև համագործակցության ակտիվացման միտումներ: Այդ պատճառով էլ Հայաստանի և Ռուսաստանի՝ որպես արդեն անկախ պետությունների միջև փոխգործակցությունը, ձեռք է բերել ռազմավարական բնույթ: Արդի պայմաններում անհրաժեշտ է պահպանել այդ դինամիկան և հայ-ռուսական համագործակցությունը ակտիվացնել դաշնակցական մարտավարությամբ:

Կատարված վերլուծությունը նպատակ ունի պարզաբանել հայ-ռուսական հարաբերությունների օրինաչափությունները, վերլուծել ձեռքբերումները ըստ առանձին ոլորտների, դրանց արդյունքներն ու զարգացման հնարավորությունները: Հարավային Կովկասում անվտանգության ապահովման գործում հայ-ռուսական հարաբերությունների դերի, նշանակության, Հայաստանի և Ռուսաստանի՝ որպես առանձին պետությունների ու դաշնակիցների ներգրավվածությունը տարածաշրջանային և միջազգային

⁴² Галстян Н., Новая региональная геостратегическая среда Армении: вызовы, возможности и перспективы / Армения в диалоге цивилизаций. Материалы международной научной конференции, 28 апреля 2011г., Н.Новгород, 2011, с. 133, 126-133

գործընթացներին, դրանց վրա ազդեցության արդյունավետության ուսումնասիրումը թույլ էն տալիս ամբողջական պատկերացնել բոլոր այն նախարարյալները և պայմանները, որոնք նպաստել են հայ-ռուսական ժամանակակից հարաբերությանն եների ձևավորմանը, հիմք են հանդիսանում դրանց հետագա զարգացման ու ամրապնդման համար:

ԳԼՈՒԽ2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

2.1. Հայ-ռուսական կապերը տարածաշրջանային հետաքրքրությանն եների դիտանկյունից

Հարավկովկասյան պետությանն եները տարածաշրջանային անվտանգության համակարգի ստեղծման ու կատարելագործման որոշման եկել են ոչ միայն արտաքին ագրեսիայի ու անկայունության, այլ նաև այն պատճառով, որ Խորհրդային Միության փլուզումից հետո նախկին միութենական հանրապետությանն եներից յուրաքանչյուրը սեփական անվտանգության համակարգը ստեղծել ու փորձեր կատարեցին, որն իր հերթին հաշվի չէր առնում հարևան երկրների կենսական շահերը: Եվ եթե դրան ավելացնենք տարածաշրջանի չլուծված հակամարտությանն եները, ապա անվտանգության լուրջ, ինքնուրույն համակարգերը կկրեն պայքարի ու հակազդեցության բնույթ, ինչն ավելի կխորացներ խորհրդային ժամանակաշրջանից մնացած տարածայնությանն եները և խնդիրները:

Հարավային Կովկասը միշտ եղել է պատմամշակութային, էթնիկական, քաղաքական և տարածքային հակախտեգրացիոն շահերի միջավայր: Տարածաշրջանում ընդհանուր շահերի բացակայությունը որոշակիորեն հանգեցնում է Հարավային Կովկասում գտնվող պետությանն եների միջև ինդիֆերենտային հարաբերությանն եների (միմյանց նկատմամբ անտարբերության): Որևէ սուբյեկտ սեփական խնդիրների լուծումը չի կապում տարածաշրջանի մեկ այլ սուբյեկտի հետ, այլ սկսում է հայացքը հառել այս կամ այն արտաքին ուժին: Կարելի է նաև փաստել, որ որոշ դեպքերում Հարավային Կովկասում

կայ ու ն ու թ յ ու ն ը պահպանվում էր արտաքին որևէ ու ժի գերիշխան ու թ յ ան պայմաններում: Արտատարածաշրջանային տեր ու թ յ ու ն ների շահերը հանդիսանում են այն գործ ո ն ներից մեկը, առանց որի դժվար կլինի ձևավորել տարածաշրջանի քաղաքական կերպարը, և հենց այդ հանգամանք է «տվյալ գործ ո ն նը արհամարհել ու հնարավոր ու թ յ ու ն ների մասին տես ու թ յ ու ն ը ոչ համոզիչ դարձն ու մ»⁴³: Տարածաշրջանային խաղաղ ու թ յ ան և կայ ու ն ու թ յ ան բնագավառ ու մ հաջող ու թ յ ու ն ներ կարող են փոքր բերվել նաև տարածաշրջանային ու ժեռի համախմբման և պետ ու թ յ ու ն ների միջև անվտանգ ու թ յ ան հարցեր ու մ կոնսենսուսի դեպք ու մ: Այս առ ու մ ո վ հայ -ռ ու սական գործ ո ն ներ ու թ յ ու ն ը հանդիսան ու մ է ոչ միայն պատմականորեն երկ ու երկրների միջև ձևավորված հարաբեր ու թ յ ու ն ների արտահայտ ու թ յ ու ն , այլ նաև տարածաշրջանային հակամարտ ու թ յ ու ն ների կարգավորման ու խաղաղ ու թ յ ան հաստատման գործ ու մ փոխադարձ շահագրգռված ու թ յ ու ն ⁴⁴:

Հայ -ռ ու սական հարաբեր ու թ յ ու ն ները, դրանց զարգաց ու մը , երկ ու երկրների միջև համագործակց ու թ յ ու ն ը նաև տարածաշրջանային նշանակ ու թ յ ան գործ ո ն թացներ են և երկ ու ստեք ներառ ու մ են քաղաքական, հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառները: Այս համատեքստ ու մ արդեն ընդգծվեց, որ Ռ ու սաստանի Դաշն ու թ յ ան համար Հարավային Կովկասը միշտ հանդիսացել է ռազմավարական կարևոր նշանակ ու թ յ ու ն ու նեցող տարածաշրջան և շատ դեպքեր ու մ ազդել նրա ազգային անվտանգ ու թ յ ան վիճակի վրա⁴⁵: Դրա մասին են վկայ ու մ վերջին երկ ու տասնամյակներ ու մ տեղի ու նեցած իրադարձ ու թ յ ու ն ները, սոցիալ -մշակ ու թային և տնտեսական համագործակց ու թ յ ան վրա հիմնված գործ ո ն ներական հարաբեր ու թ յ ու ն ների զարգաց ու մները հարավկովկասյան երկրների հետ:

⁴³ Саркисян М., О безопасности на Кавказе / Формирование Атмосферы Мира, Стабильности и Доверия на Южном Кавказе. - Е., Центр по изучению конфликтов, июль, 2002. с.92.

⁴⁴ Дадаян Д.С., Из сборника статей «Армения и мир», выпущенного Институтом социальных наук (Москва) в 2012 году, <https://husisapail.wordpress.com/2013/02/04/принципы-российско-армянского-страт/>

⁴⁵ Мансуров Т.З., Южный Кавказ в системе национальной безопасности Российской Федерации, <http://cyberleninka.ru/yuzhnyy-kavkaz-v-sisteme-natsionalnoy-bezopasnosti-rossiyskoy-federatsii.pdf>

Բացի այդ, Յարավային Կովկասում Ռուսաստանը իր ռազմական ներկայությունը դիտում է ոչ այնքան որպես քաղաքական ազդեցության գործոն, որքան նաև սեփական անվտանգության քաղաքիչ մաս: Յետևաբար, այդ ներկայության նպատակներն ու խնդիրները համադրվելու են տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի պահպանման ու ամրապնդման հեռանկարների հետ: Ռուսաստանի համար անցանկալի է հարավկովկասյան երկրների անդամակցությունը և բարիդրացիական հարաբերություններն այնպիսի կառույցներին ու դաշինքներին, ինչպիսին է՝ օրինակ, ՅՆՍԻՍԱՆՏԼ անտյան դաշինքը (ՆԱՏՕ):

Նման աշխարհաքաղաքական իրողությունը պահանջում է մի կողմից որոշակիացնել Ռուսաստան-ՆԱՏՕ փոխհարաբերությունները հարավկովկասյան տարածաշրջանում քաղաքական և ռազմական ուժերի դասավորվածության նոր պայմաններում, մյուս կողմից՝ գտնել շփման կետեր հարավկովկասյան պետությունների հետ տնտեսական, հումանիտար, բնապահպանական, հակաահաբեկչական, թմրանյութերի տարածման դեմ պայքարի, ռազմական-տեխնիկական համագործակցության գործընթացներում⁴⁶:

Յետխորհրդային ու դրան հաջորդող ժամանակաշրջանում հարավկովկասյան պետությունների քաղաքականության վրա հետզհետե զգալիորեն ուժեղացել է Ամերիկայի Միացյալ Նահանգների և Եվրոպական միության ազդեցությունը, ավելացել են այդ երկրների վրա ազդելու վերջիններիս լծակները: Բնականաբար, Արևմուտքի նման ազդեցության ամրապնդումը հանգեցնում է Ռուսաստանի դիրքերի թուլացմանը: Ռուսաստանը, որպես հակակշիռ ԱՄՆ-ին և ԵՄ-ին, պետք է գործընկերական սերտ հարաբերություններ պահպանի Իրանի, Յնդկաստանի, Մերձավոր և Յեռավոր Արևելքի երկրների հետ, ապահովի տարածաշրջանային նշանակության տարանցիկ այնպիսի միջանցքների և ուղիների անխափան գործունեությունը, ինչպիսին է, օրինակ, ՅՆՍԻՍ-Յարավը և այլն:

Յարավային Կովկասը, ինչպես հայտնի է, ուղղակիորեն կապված է Ռուսաստանի Դաշնության կազմի մեջ մտնող հյուսիսկովկասյան

⁴⁶ Онуфрийчук А.В., Проблемы реализации российских интересов на Южном Кавказе в современном геополитическом контексте, http://pglu.ru/upload/iblock/f80/uch_2009_xii_00007.pdf

հանրապետությունների և դրանցում ընթացող գործընթացների հետ⁴⁷, հետևաբար՝ Ռուսաստանը մեծապես շահագրգռված է, որ հարավկովկասյան երկրները ի գործ չլինեն ցուցաբերելու բացահայտ կամ թաքնված որևէ ազդեցություն հյուսիսկովկասյան հանրապետությունների վրա, մանավանդ՝ եթե այդ ազդեցությունը կարող է կրել ապակայունացնող բնույթ: Այդ իսկ պատճառող առկա է Ռուսաստանի և հարավկովկասյան երկրների միջև հարաբերությունների հավասարակշռման խնդիր, որպեսզի վերջիններիս տարածքը կամ ռեսուրսները երբևիցե չօգտագործվեն ընդդեմ Ռուսաստանի: Առանց Կովկասում էթնիկական և զինված տեղային այլ բնույթի կոնֆլիկտների լուծման՝ Ռուսաստանը սեփական անվտանգության ապահովման, նավթի ու գազի արդյունահանման մրցունակության, տրանսպորտային մայրուղիների անխափան կապերի առումներով բավականին լուրջ դժվարությունների առջև կարող է կանգնել:

Ռուսական իշխանությունների համար անհանգստության ևս մեկ առիթ էն հանդիսանում տարածաշրջանում էթնիկական, սոցիալական, տարածքային և այլ տարածայնություններից բխող բացասական միտումները՝ կապված ախաբեկչության, թմրանյութերի արտադրության ու տարածման, կրոնական հողի վրա ծայրահեղականության, այլ բնույթի ու մասշտաբների կոնֆլիկտների հետ⁴⁸: Այդ իսկ պատճառով Հարավային Կովկասում Ռուսաստանի ռազմաքաղաքական մարտավարությունը բխում է ոչ միայն բուն Ռուսաստանի, այլ նաև տարածաշրջանի պետությունների ազգային շահերից և ապահովի տարածաշրջանում, ինչպես նաև մերձկասպյան շրջանում տնտեսական ներկայությունն ու ռազմաքաղաքական ազդեցությունը⁴⁹:

⁴⁷ Цагарели М., У Южного и Северного Кавказа – общее будущее, 31.12.2012, http://www.bigcaucasus.com/events/topday/31-12-2012/81995-prognoz_2013-0/

⁴⁸ Корнилов А.А., Геополитика современных российско-армянских отношений и ее влияние на проект «Новый Великий Шелковый Путь», <http://nashasreda.ru/geopolitika-sovremennyh-rossijsko-armyanskix-otnoshenij-i-ee-vliyanie-na-proekt-novyj-velikij-shelkovyj-put/>

⁴⁹ Бовдунов А., КАРАБАХСКИЙ КВАДРАТ: ПОЧЕМУ АЗЕРБАЙДЖАН СБЛИЖАЕТСЯ С МОСКВОЙ, А АРМЕНИЯ - С НАТО?, 09.08.2017, <https://www.geopolitica.ru/article/karabahskiy-kvadrat-pochemu-azerbaydzhan-sblizhaetsya-s-moskvoy-armeniya-s-nato>

Այս համատեքստում տեղին է նշել նաև վերջին շրջանում որոշակիորեն հնչեցվող տեսակետը, համաձայն որի՝ 2016 թվականին Հայաստանը այդքան էլ կողմնորոշված չէր, մասնավորապես, Վրաստանում տեղի ունեցող ԱՍՏՕ-ական գորավարժության ներքին, իսկ օրինակ 2017 թվականի երկրորդ կեսին Երևանից ահազանգներ են արվում դեպի Մոսկվա՝ դրանով իսկ արտահայտելով որոշակի դժգոհություն հայ-ադրբեջանական կողմնորոշումների առնչությամբ ռուսական «խաղային քաղաքականության» նկատմամբ:

Հարավային Կովկասի նկատմամբ ռուսական պետության այդ մարտավարությունը, ինչպես նաև բազմաթիվ այլ գործառնություններն ու գործընթացները կարող են հանգեցնել ներքոնշյալ հնարավոր զարգացումներին.

1. Թույլ չտալ Հարավային Կովկասում և սևծովյան գոտում տարածաշրջանային ու համախարհային համագործակցության զարգացման դեմ ուղղված արհեստական խոչնդոտների առաջացումը:

2. Տարածաշրջանային անվտանգության մարտավարության մշակման գործում Ռուսաստանը պետք է ամեն ինչ անի, որպեսզի իր կարծիքը լսվի և հաշվի առնվի, քանի որ Կովկասը մեկ միասնական, փոխազդող տարածք է, որի մի մասը գտնվում է հենց Ռուսաստանի Դաշնության կազմում:

3. Ռուսաստանը պետք է հաշվի առնի, որ կովկասյան տարածաշրջանում կայունության պահպանումից կախված է նաև երկրամասի տնտեսության զարգացումը: Դրա համար անհրաժեշտ է ճշգրիտ մշակել տարածաշրջանային կոնֆլիկտների լուծման հեռանկարները:

4. Հնչեցնել սեփական կարծիքը և դիրքորոշումը՝ Հարավային Կովկասում ուժերի ռազմավարական հավասարակշռության և Ռուսաստանին տարածաշրջանային ուժային բևեռներից դուրս մղելու վերաբերյալ:

5. Չմասնակցել տարածաշրջանային այն կոնֆլիկտներին, որոնք ուղղակիորեն կամ անմիջականորեն չեն հակասում իր շահերին, այլ սահմանափակվել կոնֆլիկտի մասնակիցների քայլերին գնահատականներ տալով:

Սակայն, չկան հարավկովկասյան տարածաշրջանային այնպիսի կոնֆլիկտներ, որոնք այս կամ այն առումով չեն շոշափի Ռուսաստանի Դաշնության շահերը⁵⁰: Ուստի այդ կոնֆլիկտների լուծման գործում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հենց Ռուսաստանի՝ անվտանգության հետ կապված շահերին: Ռուսաստանը կոնֆլիկտների լուծման գործում օբյեկտիվ դատավորի դերում հանդես գալիս պետք է հենվի դրան հասնելու ոչ թե ռազմական, այլ քաղաքական ու տնտեսական լծակների վրա:

Այդպիսով կարելի է փաստել, որ Ռուսաստանը հանդիսանում է Չարավային Կովկասի թերևս ամենաուժեղ և ամենաազդեցիկ ակտորը, հետևաբար՝ խնդիրների լուծման համար քաղաքական, տնտեսական և այլ ռեսուրսների կենտրոնացման ու հավաքագրման բեռը ընկած է հենց նրա ուսերին: Այդ ռեսուրսները անհրաժեշտ է կենտրոնացնել և ուղղել այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ տարածաշրջանային անվտանգության պահպանումը, քաղաքական ու կրոնական ծայրահեղականության տարածման կանխարգելումը, կարգավորել հին կոնֆլիկտները և բացառել նորերը, զարգացնել էներգահոսքերի, տրանսպորտային ուղիների համակարգը և այլն: Այս ամենը պետք է արվի այնպես, որ տարածաշրջանի երկրների միջև ոչ թե մրցակցություն և սկսվի այս կամ այն ծրագրերը իրենց տարածքում իրականացնելու համար, այլ պետք է հաստատվի փոխհամագործակցություն և գիտակցումն այն հանգամանքի, որ իրենց երկրների զարգացումն անմիջականորեն կապված է Չարավային Կովկասի տարածաշրջանի զարգացման հետ:

Չայաստանը, հանդիսանալով Չարավային Կովկասի երեք հանրապետություններից մեկը, մասնակցում է ռազմական, քաղաքական, տնտեսական և այլ բնույթի գրեթե բոլոր այն գործընթացներին, որոնք տեղի են ունենում տարածաշրջանում: Չայաստանն անդամակցում է Մաքսային միությունը, զուգահեռ ընթանում է Ադրբեյջանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բյուրեղացում և դաշինքի ձևավորում, իսկ Վրաստանը ամերիկա-եվրոպական կողմնորոշմանը զուգահեռ իշխանափոխությունից հետո փորձում է կարգավորել

⁵⁰ Санакоев И.Б., Конфликты на Южном Кавказе: пути снижения межэтнической напряженности, <http://kvkz.ru/stati/2426-konflikty-na-yuzhnom-kavkaze-puti-snizheniya-mezhynetnicheskoj-napryazhennosti.html>

Ռուսաստանի հետ հարաբերությունները⁵¹: Տարածաշրջանային բոլոր իրադարձությունները անմիջական ազդեցություն ունեն Յայաստանի քաղաքական կյանքի վրա, և, հակառակը, հայկական պետությունն իր հերթին ակտիվորեն մասնակցում է Հարավային Կովկասի քաղաքական կյանքին, այդ թվում՝ անվտանգությանը վերաբերող գործընթացներին:

Արդեն նշվեց, որ Յայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը և երկրի մասնակցությունը աշխարհում ու տարածաշրջանում անվտանգության ապահովման խնդիրներին պայմանավորված է բազմապիսի գործոններով: Առանց դրանք հաշվի առնելու հնարավոր չէ ներգրավվել տարածաշրջանային ռազմաքաղաքական և տնտեսական համակարգի մեջ և վարել արդյունավետ արտաքին քաղաքականություն: Յայաստանի որդեգրած սկզբունքային մոտեցումների մասով տեղին է մեջբերել գեներալ-լեյտենանտ, պրոֆեսոր Հայկ Քոթանջյանի գնահատականը. «Յայաստանը, Մոսկվայի, Վաշինգտոնի և Բրյուսելի նկատմամբ իր կողմնորոշումներում, առաջնորդվելով հաշվեկշռի պահպանման ռազմավարական անվտանգային շահերով, ՌԴ-ի ու ՀԱՊԿ-ի հետ միաժամանակ արգասաբեր գործընկերություն է ծավալել նաև ուժի այնպիսի եվրաստլանտյան կենտրոնների հետ, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ն ու Եվրոպական Միությունը»⁵²:

Անկախացումից հետո Յայաստանը բավականին ժամանակ գործում էր կառավարության, արտաքին գործերի նախարարության, ուժային կառույցների և պետական այլ մարմինների կողմից մշակված ազգային անվտանգության «լոկալ» դոկտրինաներով, որոնք փոխլրացնում էին միմյանց, սակայն երբեմն անհամապատասխանություններ տարրեր էին պարունակում: Չկային ազգային անվտանգության միասնական, հեռանկարային սկզբունքներ: Նման իրավիճակը տևեց մինչև 2007 թվականը, երբ այն ժամանակվա նախագահ Ռ. Քոչարյանի կողմից

⁵¹ Հարությունյան Գ., Տարածաշրջանի աշխարհաքաղաքական բյուրեղացում է տեղի ունենում Հարավային Կովկասում, 18.12.2013թ., http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12444

⁵² Քոթանջյան Հ., Յայաստանի հաշվեկշռված արտաքին քաղաքականությունը որպես Ռուսաստան-ԱՄՆ երկխոսության հաստատման հարթակի ստեղծման ռազմավարական հնարավորություն, 28.01.2017թ., http://www.diplomat.am/publ/authors/hayk_qotanjyan/1/133-1-0-1627

ստորագրվեց ՀՀ ազգային անվտանգության այլ տրամաչափ նախատեսող ռազմավարության հաստատման մասին հրամանագիրը: Հատկանշական է այդ փաստաթղթի այն մասը, որը վերաբերում է արտաքին քաղաքականության ռազմավարությանը: Դրա համաձայն՝ ՀՀ արտաքին անվտանգությունն իրականացվում է 3 հարթություններում՝ միջազգային, տարածաշրջանային և համահայկական: Առաջին հարթությունը ենթադրում է Հայաստանի համագործակցությունն միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ ՆԱՏՕ-ն, երկրի մասնակցությունը եվրոպական այնպիսի կազմակերպությունների գործունեությանը, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ը, ԵԽ-ը, ԵԱՀԿ-ը: Տարածաշրջանային հարթության վրա արտաքին անվտանգության ապահովումը ենթադրում է Հայաստանի անդամակցությունը ՀԱԴԿ-ին, ինչպես նաև երկկողմ համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ: Իսկ համահայկական հարթության տակ ենթադրվում է դիվանագիտական և ներկայացուցչական առաքելությունների միջոցով հայկական Սփյուռքի իրավունքների ու շահերի պաշտպանությունը⁵³:

Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մեջ ամրագրված հիմնական մոտեցումներին համապատասխան՝ անվտանգությունը հենվում է միմյանց հետ կապված 4 բաղադրիչների վրա: Առաջին բաղադրիչը հայ-ռուսական հարաբերություններն են և ռազմավարական գործընկերությունը: Այդ հարաբերությունների իրավական բազան են հանդիսանում միջարք համաձայնագրեր, որոնցից անվտանգության ապահովման առումով կարևորագույնն են «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, գործընկերության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրն է: Համաձայն այս փաստաթղթի՝ «Կողմերն իրար հետ փոխգործակցելու են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ինքնուրույնության պաշտպանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովման համար: Կողմերը միմյանց հետ անհապաղ կխորհրդակցեն ամեն անգամ,

⁵³ Լրացուցիչ տես ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, <http://www.arlis.am>

երբ, կողմերից մեկի կարծիքով, իր վրա առկա է զինված հարձակման վտանգ՝ համատեղ պաշտպանության նկատառումներից ելնելով և խաղաղության ու փոխադարձ անվտանգության ապահովման համար»⁵⁴: Երկրորդ բաղադրիչը Հայաստանի անդամակցության ունենալը Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ): Համաձայն պայմանագրի 2-րդ հոդվածի՝ «Անդամ-պետություններից մեկի կամ մի քանիսի անվտանգության, տարածքային ամբողջականության և ինքնուրույնության, կամ միջազգային խաղաղության ու անվտանգության համար սպառնալիքի առաջացման, դեպքում անդամ-պետություններն անհապաղ գործի կղնեն համատեղ խորհրդակցության ներքին մեխանիզմը սեփական դիրքորոշումների կոորդինացիայի համար, ստեղծված սպառնալիքի վերացման նպատակով: Եթե անդամ պետություններից մեկը որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից ենթարկվել է ագրեսիայի, ապա դա կդիտվի որպես ագրեսիա Պայմանագրի անդամ բոլոր պետությունների նկատմամբ»⁵⁵: Հաջորդ բաղադրիչն արդեն վերաբերում է Եվրոատլանտյան ուղղությանը, որի իրավական բազան Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիրն է (ԵՍՁՈՒՊ), որի իրականացման սկզբունքների և կարգի մասին համաձայնագրերը վավերացվել են 1992 թվականի մայիսի 15-ին Տաշքենդում⁵⁶: Հայաստանը մասնակցում է նաև ՆԱՏՕ-ի մի շարք ծրագրերին, օրինակ՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին⁵⁷: Եվ, վերջապես չորրորդ բաղադրիչը հայ-ամերիկյան պաշտպանական-անվտանգային համագործակցության ունենալը, որն սկսեց զարգանալ 2000 թվականի վերջերից և հատկապես ակտիվացան 2001թ. աշնանից՝ կապված ահաբեկչության դեպ պայքարի համար համաշխարհային հանրության ուժերի կենտրոնացման հետ:

⁵⁴ Договор О дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Армения, 29.08.1997, http://www.lawrussia.ru/texts/legal_555/doc555a808x659.htm

⁵⁵ Ст. 2 Договора о Коллективной безопасности от 15 мая 1992 года, <http://www.odkb.gov.ru/b/azb.htm>

⁵⁶ ՀՀ Գերագույն խորհրդի 28.07.1992թ. թիվ Հ.Ն-0677 որոշումը՝ Եվրոպայում սովորական զինված ուժերի վերաբերյալ պայմանագրի իրականացման սկզբունքների եվ կարգի մասին համաձայնագրի վավերացման մասին, ՀՀ ԳԽՏ 1992/14, <http://www.arlis.am>

⁵⁷ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Միջազգային կազմակերպություններ, Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպություն, <http://www.mfa.am/hy/international-organisations/NATO/>

Հայաստանի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության սկզբունքների համապատասխանությունն ակնհայտ է, քանի որ այդ երկուսն էլ հիմնված են կոմպլեմենտարիզմի սկզբունքի վրա, ինչն էլ իր հերթին հանդիսանում է Հայաստանի արտաքին քաղաքական դոկտրինայի և ազգային անվտանգության ռազմավարության հենքը: Քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Յ. Քոթանջյանի մեկնաբանությամբ. «Տվյալ դեպքում կոմպլեմենտարիզմ նշանակում է գործընկերների ու համագործակցության վրա հիմնված արտաքին ռազմական քաղաքականություն, որը ելնում է ոչ թե «Արևմուտք-Արևելք» դիֆուզիոն (երկբաժանության) սխեմայով այլ պետությունների հաշնակից կամ թշնամի լինելու ձևակերպումներով, ինչը բնորոշ է Սառը պատերազմի ժամանակներին, այլ համագործակցող կողմերի ռազմական-անվտանգության շահերի պրագմատիկ համաձայնեցման արդյունքում Հայաստանի ու նրա դաշնակիցների և գործընկերների փոխընդհանուր սկզբունքից»⁵⁸:

Այնուամենայնիվ, Հայաստանի արտաքին քաղաքականության և անվտանգության հիմքում ընկած կոմպլեմենտարության սկզբունքը տարածաշրջանային ակտորների հետ հարաբերությաններում պահանջում է հստակություն, մանրակրկիտ ու շարժական մոտեցում և պարզություն: Եվ խոսքն արդեն գնում է ոչ միայն հավասարակշռված քաղաքականություն իրականացնելու, ինչը թույլ կտա որոշելու հեռանկարների ոլորտը հիմնական ակտորների հետ հարաբերությաններ կառուցելիս, այլ նաև տարածաշրջանային անվտանգության վերաբերյալ նոր նախաձեռնությունների առաջ քաշման մասին: Ակնհայտ է, որ Հարավային Կովկասի պետությունների համար առավել ընդունելի կլինի «համագործակցության վրա հիմնված անվտանգության» բանաձևը⁵⁹, որի հիմնական միտքը կայանում է երկրների կողմից տարածաշրջանային անվտանգության ապահովման հիման վրա համագործակցության անհրաժեշտությունը, ինչպես նաև անհատական անվտանգության համակարգեր ստեղծելու բացասական հետևանքները ըմբռնելու մեջ:

⁵⁸ Котанджян Г., В повестке - комплементаризм и многовекторность оборонной политики // Голос Армении. – 2007, 16 ноября.

⁵⁹ Cohen R., Mihalka M., Cooperative Security: New Horizons for International Order. - Marshall Center Paper. №3, April 2001, p. 30

Փաստորեն, ՀՀ ազգային անվտանգությանը արտաքին բևեռվածության տեսանկյունից բաղկացած է 4 բաղադրիչներից, որոնցից երկուսը կողմնորոշված են դեպի Ռուսաստանի Դաշնությանը և հանդիսանում են Հայաստանի անվտանգության ապահովման եկու կարևոր բաղկացուցիչ տարրերը, քանի որ կայունության դեմ ուղղված հիմնական սպառնալիքները գալիս են Ադրբեյջանի կողմից՝ կապված Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ: Սակայն, պետք է նշել նաև, որ Ռուսաստանի Դաշնության մարտավարությանը Ղարաբաղյան հարցի կարգավորման վերաբերյալ չունի միակողմանի դիրքորոշում, ինչի մասին վկայում են նաև ակտիվ ռազմատնտեսական հարաբերությունները Ադրբեյջանի հետ⁶⁰: Ադրբեյջանն էլ իր հերթին այդ հարաբերությունները փորձում է ամբողջապես կենտրոնացնել հակամարտության կարգավորման գործում թե քաղաքական, թե ռազմական ազդեցությունը շեշտելու ուղղությամբ: Օրինակ, 2017թ. հունիսի 10-ին Ադրբեյջանի ՊՆ-ն հրապարակել է տեսանյութ՝ կից հաղորդագրությունում նշելով, որ Ռուսաստանից ստացել են զինտեխնիկայի և զինամթերքի հերթական խմբաքանակը (հրապարակված տեսանյութում երևում են ռուսաստանյան արտադրության SOU-1Ա «Սոլնցեայոկ» ծանր հրանետի MO.1.01.04M արդիականացված հրթիռներ): Տեսանյութի տարածումը հատուկ քաղաքական նպատակ է հետապնդում. Ադրբեյջանը ոչ միայն հերթական անգամ բացահայտորեն ազդարարում է, որ պատրաստվում է պատերազմի, այլ նաև հասկացնում է, որ դա անում է Մոսկվայի եթե ոչ թույլ տվությամբ, ապա գոնե լռելյայն համաձայնությամբ⁶¹: Նման մոտեցումը ավելի է ընդգծվում նաև Թուրքիայի հետ ռուսական կողմի ռազմական առևտրի որոշ դրսևորումներից, որոնք վերջին շրջանում իսկապես բացի ռազմական նպատակներից⁶², նաև թուրք-ադրբեյջանական դիվանագիտական շրջանակներում փորձում են մեկնաբանվել նաև քաղաքական տեսանկյունից (ենթադրվում էր նաև, որ Թուրքիան կարող

⁶⁰ Ռուսաստանը մեր ռազմավարական դաշնակիցն է, սակայն զուր է զենք վաճառում Ադրբեյջանին. Սերժ Սարգսյանի հարցազրույցը Deutsche Welle-ին, 08.04.2016թ., <http://www.tert.am/am/news/2016/04/08/sargsyan-interview/1986068>

⁶¹ Ադրբեյջանը լայնամասշտաբ պատերազմի քարտբլանշ է ստանում Մոսկվայից, 10.07.2017թ., <http://www.1in.am/2172300.html>

⁶² Թուրքիային U-400-ներ մատակարարելու վերաբերյալ պայմանագիրն արդեն համաձայնեցվել է. ՌԴ նախագահի օգնական, 30.06.2017թ., <http://razm.info/105829>

Է կիրառել նման առևտրի հետ կապված չինական փորձը, այն է՝ ամերիկյան կողմից կամ ՆԱՏՕ-ի անդամ այլ երկրներից ավելի շահավետ առաջարկ ստանալու դեպքում, Թուրքիան հրաժարվի ռուսաստանյան արտադրության գենիթահրթիռային համակարգերից⁶³, սակայն Ռուսաստանի հետ թուրքական դիվանագիտությունը նման ռիսկային մոտեցում չէր ցուցաբերի՝ արդյունքում այդպիսի պայմանագիր կնքվեց⁶⁴): Այս կապակցությամբ ռուս որոշ փորձագետների կողմից տրվում են արդարացման նոտաներ ունեցող փաստարկներ, թե իբր Ադրբեյջանի կողմից իմաստ չի լինի Ղարաբաղում կիրառել Ռուսաստանի կողմից վաճառված «Սոլնցեայոկ» տեսակի շուրջ 200 հրթիռները⁶⁵:

Այդուհանդերձ, Չայաստանի Չանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը հանդիսանում են քաղաքական ու ռազմավարական դաշնակիցներ: Երկու երկրների դաշնակցական համագործակցությունն արտահայտվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության բնագավառում համատեղ գործունեության, հատկապես՝ Չարավային Կովկասի տարածաշրջանային քաղաքականությանը վերաբերող հարցերի շուրջ միասնական մոտեցումների, քաղաքական փոխհամաձայնվածության և օգնության ծրագրերի, միջոցառումների մշակմամբ ու իրականացմամբ: Չայ-ռուսական գործակցությունն Չարավային Կովկասում կայունության ապահովման հատուկ գրավական է, որը որոշակիորեն անհրաժեշտ է նաև տարածաշրջանային չլուծված հակամարտություններից մեկի՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման, շփման գծում լարված իրավիճակներից խուսափելու համար:

⁶³ Թուրքիան և Ռուսաստանը U-400-ների հարցում հասել են համաձայնության. Թուրքիայի վարչապետ, 25.08.2017թ., <http://razm.info/110166>

⁶⁴ Ռուսաստանն ու Թուրքիան կնքել են U-400-ի առքուվաճառքի պայմանագիրը, 28.08.2017թ., <http://politik.am/ռուսաստան-ու-թուրքիան-կնքել-են-c-400-ի-առ/>

⁶⁵ Коновалов И., Применять системы «Солнцепек» в Карабахе для Азербайджана будет бессмысленно, 11.07.2017, <http://ru.1in.am/1194843.html>

2.2. Եվրասիական Տնտեսական Միությունը Հայաստանի Հանրապետության անդամակցության ազդեցությունը անվտանգության ոլորտում

Յուրաքանչյուր պետության համար անվտանգությունը խաղաղ և բնականոն գոյության գլխավոր նախապայմանն է: Ներկայումս բազմաթիվ երկրների պետական բյուջեների զգալի մասը հատկացվում է հենց անվտանգության ապահովման համակարգին՝ ազգային անվտանգության երաշխավորմանը: Հայաստանի Հանրապետության համար անվտանգությունը առանձնակի դեր և նշանակություն ունի, ինչը պայմանավորված է մի շարք պատմաքաղաքական իրողություններով, հատկապես կարելի է ընդգծել արդի շրջանում հարևան երկու պետությունների հետ ոչ միանշանակ (կոնկրետ Ադրբեյջանի պարագայում՝ թշնամական) հարաբերությունների սրման իրավիճակը:

Հայաստանն իր անվտանգությունն ամրապնդելու համար տարբեր երկրների հետ կնքում է երկկողմ ու բազմակողմ մի շարք պայմանագրեր, համաձայնագրեր և այլ միջազգային բնույթի փաստաթղթեր: Հեռանկարային տեսանկյունից կարևորվում է ՀՀ անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությունը և դրա նշանակությունը անվտանգության ոլորտում, ինչը կազմում է նաև ժամանակակից հայ-ռուսական հարաբերությունների կարևորագույն ուղղություններից մեկը:

Եվրասիական տնտեսական միությունն իր բնույթով տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն միջազգային կազմակերպություն է՝ օժտված առանձին իրավասուբյեկտությամբ և ստեղծված 2014 թվականի մայիսի 29-ին կնքված Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի հիման վրա, որն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից⁶⁶: Միությունն ապահովում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը միության անդամ պետությունների տարածքներում, ինչպես նաև հնարավորություններ է ստեղծում տնտեսության տարբեր ոլորտներում համաձայնեցված, միասնական քաղաքականություն

⁶⁶ Евразийский Экономический Союз (ЕАЭС), <http://eaeunion.org/?lang=am#about-media>

վարելու համար: Ներկայումս Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններն են՝ Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը և Ղրղզստանի Հանրապետությունը: Եվրասիական տնտեսական միության բարձրագույն մարմինը Եվրասիական տնտեսական խորհուրդն է, որի անդամները միության անդամ պետությունների նախագահներն են: Մյուս մարմիններն են՝ Եվրասիական միջկառավարական տնտեսական խորհուրդը, որը կազմված է անդամ-պետությունների կառավարությունների ղեկավարներից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, որի խնդիրն է Միության զարգացման և գործառնությունների համար պայմանների ապահովումը, և Միության դատարանը:

Նմանատիպ միության ստեղծման անհրաժեշտություն մասին դեռևս 1994 թվականի մարտի 29-ին հայտարարել է Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը՝ ՌԴ կատարած իր առաջին պաշտոնական այցի ժամանակ: Նույն թվականի հունիսին մշակված ինտեգրացիոն ծրագիրն ուղարկվում է պետությունների ղեկավարների հաստատմանը: Առաջին փաստաթղթերում ինտեգրացիոն այդ նոր կազմակերպությունը անվանվեց Եվրասիական միություն: Իսկ 1995 թվականին Բելառուսը, Ղազախստանը և Ռուսաստանը ստորագրեցին Մաքսային միության ստեղծման մասին համաձայնագիրը: Այն ուղղված էր կողմերի միջև ազատ տնտեսական փոխգործակցության համար խնչընդոտների վերացմանը, նպատակ ունեռ ապահովել ազատապրանքաշրջանառություն և բարեխիղճ մրցակցություն, և վերջ ի վերջո՝ կողմերի տնտեսությունների երաշխավորված կայուն զարգացումը: 1996 թվականի մարտի 29-ին Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի նախագահները Մոսկվայում ստորագրեցին տնտեսական ու հումանիտար ոլորտներում ինտեգրացիոն գործընթացների խորացման վերաբերյալ պայմանագիր, որին 1998 թվականին միացավ նաև Տաջիկստանը: Իսկ 1999 թվականի փետրվարի 26-ին այս պետությունների միջև ստորագրվեց Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի մասին պայմանագիրը: 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշամբեում Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի միջև

ստորագրվեց մաքսային միասնական տարածքի ստեղծման և Մաքսային միության ձևավորման մասին պայմանագիրը:

2011 թվականի նոյեմբերին Մաքսային միության ղեկավարների կողմից ստորագրվեց Եվրասիական տնտեսական ինտեգրացիայի մասին հռչակագիրը, և դրանով իսկ հայտարարվեց ինտեգրացիոն շինարարության հաջորդ փուլի՝ Միասնական տնտեսական տարածքի անցնելու մասին: 2014 թվականի մայիսի 29-ին Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստում ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մասին պայմանագիրը: Այնուժի մեջ մտավ 2015 թվականի հունվարի 1-ից:

Եվ այդպիսով հարկ է փաստել, որ Եվրասիական տնտեսական միությունը ստեղծվել է ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացման, կոոպերացիայի, մրցունակության բարձրացման և անդամ պետությունների բնակչության կենսունակության բարձրացման համար կայուն պայմաններ ստեղծելու նպատակով:

Միջազգային զարգացումների շրջանակներում մեծ հետաքրքրություն առաջացրեցին երկու միջազգային տնտեսական նախագծերի՝ Եվրամիության Արևելյան գործընկերության և ՌԴ Մաքսային Միության միջև մրցակցային հակասությունները, որոնք Արևելյան գործընկերության մասնակից պետություններին կանգնեցրեցին երկընտրանքի առջև: Դա առաաավել լարված կերպով արտահայտվեց Ուկրաինայում, այն է՝ 2014թ. նոյեմբերի 21-ին, Արևելյան գործընկերության Վիլնյուսյան գագաթնաժողովից մեկ շաբաթ առաջ, Ուկրաինայի վարչապետ Միկոլա Ազարովի հրամանագրով Ուկրաինան դադարեցրեց Եվրամիության հետ Ասոցացման Զամածայնագրի շուրջ բանակցությունները և հայտարարեց Ռուսաստանի հետ տնտեսական հարաբերությունները խորացնելու նպատակահարմարության մասին: Այս քայլը շատերը պայմանավորում են երկրի ծանր տնտեսական վիճակով, ինչը Ուկրաինային «ստիպում էր» խորացնելու հարաբերությունները Ռուսաստանի հետ: Միևնույն ժամանակ, Ուկրաինայի հասարակությունը շարունակում է տրոհված մնալ Եվրամիության և Ռուսաստանի հետ «մերձենալու» ջատագովների միջև գրեթե մինչ օրս: Ի տարբերություն Ուկրաինայի՝ Արևելյան

գործընկերության մյուս պետությունները գերծ մնացին Եվրամիության ու Մաքսային միության հարցում հասարակության տրոհումից և կատարեցին իրենց հաստատակամ ընտրությունը: Վրաստանն ու Մոլդովան նույն թվականի նոյեմբերի 29-ին Վիլնյուսում կայացած Արևելյան գործընկերության գագաթնաժողովում նախատրագրեցին ԵՄ հետ ասոցացման փաստաթղթերը:

Ինչ վերաբերում է Յայաստանին, ապա հետևելով դեռևս 2014թ. սեպտեմբերի 3-ին ՅՅ Նախագահի՝ Մոսկվայում արված հայտարարությանը Մաքսային Միությանը միանալու գործընթաց սկսելու վերաբերյալ, Վիլնյուսի գագաթնաժողովի ընթացքում Յայաստանը չստորագրեց Եվրամիության հետ Ասոցացման և Ազատ առևտրի համաձայնագրերը: Փոխարենը՝ Եվրամիության հետ ստորագրվեց հայտարարություն՝ տնտեսության, գիտության և կրթության, քաղաքացիական հասարակության կառուցման և օրենքի գերակայության ոլորտներում ԵՄ հետ համագործակցության շարունակման ու խորացման մասին⁶⁷, ինչը Յայաստանին հնարավորություն էր տալիս Մաքսային Միությանը անդամակցելու առաջանցիկ միջոցառումներին գուճահեռ գարգացնել հարաբերությունները Եվրամիության հետ:

Այդուհանդերձ, ՅՅ Նախագահ Սերժ Սարգսյանի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի ՌԴ ք.Մոսկվա կատարած պաշտոնական այցի շրջանակներում ստորագրվեց համաձայնագիր ՅՅ և ՌԴ Նախագահների միջև, որից հետո երկու նախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, մասնավորապես՝ 2013 թվականի սեպտեմբերի 3-ին Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ՅՅ և ՌԴ Նախագահները հաստատեցին Յայաստանի Յանրապետության և Ռուսաստանի Դաշնության նպատակադրումը Եվրասիական տարածքում տնտեսական ինտեգրման գործընթացների հետագա զարգացման ուղղությամբ: Այդ համատեքստում ՅՅ Նախագահը հայտարարեց Մաքսային միությանը միանալու վերաբերյալ Յայաստանի Յանրապետության որոշման և այդ նպատակով կատարելիք անհրաժեշտ

⁶⁷ Եղիազարյան Ա., Արևելյան գործընկերությունը որպես ԵՄ Արևելյան քաղաքականության մաս, 19.12.2016թ., <http://www.aravot.am/2016/12/19/838850/>

քայլերը ձեռնարկելու մասին, իսկ հետագայում Եվրասիական տնտեսական միության ձևավորմանը մասնակցելու վերաբերյալ: Ռուսաստանի Դաշնության նախագահն էլ իր աջակցությունը հայտնեց Յայաստանի Յանրապետության այդ որոշմանը և հայտնեց այդ գործընթացին համակողմանիորեն աջակցելու ռուսական կողմի պատրաստակամությունը: Վերջնարդյունքում Յայաստանի Յանրապետության՝ Մաքսային միության անդամակցության պայմանագիրը ստորագրվեց 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում: Իսկ նույն թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրվեց նույն անվան պայմանագիր՝ այս անգամ արդեն Դրոզստանի անդամակցության վերաբերյալ⁶⁸:

Անցած ժամանակահատվածը ցույց է տալիս, որ Յայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցությունը չունեցավ այնպիսի ծայրահեղ բևեռացված հետևանքներ, որպիսիք նկատվեցին, օրինակ՝ Ուկրաինայում: Առանձնահատկությունն այն է, որ Յայաստանը և Ուկրաինան, ինչպես նաև հետխորհրդային տարածքի այնպիսի երկրները, ինչպիսիք են՝ Մոլդովան, Ադրբեյջանը, Վրաստանը և Բելառուսը դեռևս 2009 թվականի մայիսի 7-ից Պրահայում կայացած գագաթնաժողովի արդյունքում ընդունված հռչակագրով մասնակցում էին «Արևելյան գործընկերության» շրջանակներում բազմակողմանի համագործակցությանը⁶⁹: Եվ եթե դրանից հրաժարվելու և ԵԱՏՄ-ին անդամակցելու մտադրվածությունը, օրինակ, Ուկրաինայում 2014 թվականի փետրվարին հանգեցրեց Յանուկովիչի իշխանության բռնի փոփոխմանը, ապա դեպքերը այլ կերպ ընթացան Յայաստանում: Երևանը հայտարարեց Եվրոպական միության հետ «Արևելյան գործընկերության» շրջանակներում, ինչպես նաև դրանից դուրս համագործակցության ուղղությունների մեծ մասը շարունակելու պատրաստակամություն մասին, միաժամանակ խորացրեց Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու գործընթացը, ինչի վերջնական արդյունքը եղավ Յայաստանի լիակատար անդամակցությունը այդ

⁶⁸ Евразийский Экономический Союз (ЕАЭС), <http://eaeunion.org/?lang=am#about-media>

⁶⁹ Յայաստանի Յանրապետության արտաքին գործերի նախարարություն, Յայաստանի համագործակցությունը ԵՄ հետ, <http://www.mfa.am/hy/country-by-country/eu/>

կազմակերպությանը⁷⁰: Իր հերթին Եվրոպական միությունը այնքան ցավագին չվերաբերվեց Հայաստանի «կորստին», ինչպես արտահայտվեց Ուկրաինայի դեպքում՝ որոշակիորեն նպաստելով մինչև պետական հեղաշրջման գործընթացը:

Հայաստանի պաշտոնական անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությունը տեղի ունեցավ 2015 թվականի հունվարի 2-ին: Սկզբնական շրջանում այդ գործընթացը որոշակի սահմանափակումներով դրսևորվեց: Նախապես հայտարարվել էր, որ միության անդամ երկրների իրավունքներից Հայաստանը լիակատար կօգտվի ավելի ուշ, գործադիր մարմիններում երկիրը կներկայացվի ոչ ամբողջությամբ: ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության մյուս առանձնահատկություններից է այն, որ միության մյուս պետությունների հետ մեր երկիրն ընդհանուր սահման չունի, ինչի արդյունքում Հայաստանի և ԵԱՏՄ մյուս երկրների միջև մաքսային, սահմանային գործընթացների շուրջ պայմանավորվածությունները նույնպես կրում են յուրահատուկ բնույթ:

ԵԱՏՄ տարածք ապրանքների ներկրումից ստացվող մաքսային տուրքերի հայաստանյան բաժինը միության տնտեսագետփորձագետների կողմից գնահատվել է 1,3 տոկոս: Հայաստանը սպասարկման ոլորտում Միության անդամների պայմանավորվածություններին կմիանա ընդհանուր հիմքերով, իսկ առևտրի բնագավառում ԵԱՏՄ միասնական տարիֆին Հայաստանի միացումը կիրականացվի աստիճանացված ընթացակարգով: Մաքսային միասնական տարիֆին Հայաստանը վերջնականապես կանցնի միայն 2020 թվականին⁷¹:

⁷⁰ Հայաստանի ներքաղաքական շրջանակներում այդքան էլ միանշանակ չգնահատվեց թե երկրի անդամակցությունը Մաքսային Միությանը, թե անդամակցությունից հետո արձանագրված արդյունքները: Օրինակ, 2017թ. մայիսի 20-ին նորընտիր ԱԺ նիստի ժամանակ «Ելք» խմբակցության պատգամավոր Էդմոն Մարուքյան խոսելով Եվրասիական միությունը անդամագրվելու մասին փաստեց, որ այն պահին, երբ հայաստանը հարժարվեց ԵՄ-ի հետ համաձայնագիրը ստորագրելուց, դրանով հրաժարվեց ինտեգրվելուց Եվրոպական տնտեսական գոտում, որտեղ ասոցացման համաձայնագիրը հնարավորություն էր տալիս 500 մլն Եվրո ունեցող շուկային ինտեգրվել, որից հետո «այստեղ հիմա հպարտանում ենք 180 մլն անոց եվրասիական շուկայով»: Աղբյուրը՝ Մարուքյան Էդմոն, Եվրասիական միությունը գործնականում մեզ ոչինչ չտվեց, 20.05.2017թ., <http://operativ.am/?p=226358&l=am>

⁷¹ Набережнов Г., Армения вступила в Евразийский Экономический Союз, 02.01.2015, <http://www.rbc.ru/politics/02/01/2015/54a6416d9a794732f47760a2>

Հայաստանի Հանրապետությանը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ դեռևս պահպանվում են անցումային ժամանակաշրջանին բնորոշ բոլոր զարգացումները՝ և ներտարածաշրջանային, և արտատարածաշրջանային սպառնալիքներով հանդերձ: Եթե ներտարածաշրջանային սպառնալիքները պայմանավորված էին ազգամիջյան հակամարտության ներքով, ապա արտատարածաշրջանային սպառնալիքները հետևանք էին ԽՍՀՄ փլուզումից հետո արտաքին ուժերի համար նոր շահերի ձեռքբերման հնարավորությունների ու ձգտումների: Լինելով Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի, Եվրոպայի և Ասիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրամիության, ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի շահերի հանգուցակետ՝ հարավկովկասյան տարածաշրջանը կրում է այդ շահերի համադրման ու մրցակցության ազդեցությունը, որով պայմանավորված տարածաշրջանում անվտանգության ապահովման ոլորտն ու դրանում տեղի ունեցող գործընթացներն էապես քաղաքականացված են և տարածաշրջանային երկրների համար ունենառաջնահերթ նշանակություն: Հատկապես վերջին շրջանում Հարավային Կովկասում ծավալվող անվտանգության և ռազմաքաղաքական գործընթացների ազդեցությունը բավականին ընդլայնվել է, որի հետևանքով տարածաշրջանում ակտիվացել է տարբեր արտաքին ուժերի, գերտերությունների և անվտանգության համակարգերի գործունեությունը⁷²:

Իրողությունն է, որ Հայաստանը փոքր, սակայն խոցելի տնտեսությունն ունի՝ ընդգծված առանձնահատկություններով հանդերձ: Դրանցից պետք է առանձնացնել նախ այն, որ Հայաստանը ծովային ելք չունեցող, հարևան երկու երկրների հետ ոչ միանշանակ ծփման մեջ գտնվող պետությունն է: Մեր երկրի տնտեսությունը դժվարությամբ կարող է գոյություն ունենալ այսպես ասած՝ «ինքն իրենով»: Այն մեծապես կախված է ռազմավարական կարևոր դաշնակից Ռուսաստանի Դաշնությունից: Մասնավորապես, կենսական նշանակության բազմաթիվ ապրանքների զգալի մասը Հայաստանը ներմուծում է Ռուսաստանից:

⁷² Քոթանջյան Հ.Ս., Հայաստանը և միջազգային հանրությունը // Քոթանջյան Հ.Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 684-685

Ռուսաստանի Դաշնության հետ տնտեսական համագործակցությունը միանշանակ ենթադրում է նաև քաղաքական համագործակցության գույքահեռում: Մասնավորապես, եթե օրինակ, երկու երկրների միջև քաղաքական հարաբերությունները բարիդրացիական չլինեն, բնականաբար, տնտեսական համագործակցության մասին խոսք չի կարող: Յետևաբար, հայ-ռուսական փոխգործակցության շրջանակներում տնտեսական և քաղաքական գործակցությունը սերտորեն փոխկապակցված են և բխում են մեկը մյուսից: Եվրասիական տնտեսական միության համատեքստում հայ-ռուսական տնտեսական գործակցությամբ ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շարժի ազատությունը, համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը մեր երկրի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք ոլորտներում, ներառյալ անվտանգության երաշխավորման հարցերը⁷³:

Ընդհանրապես, անվտանգության բոլոր տեսակները դիտարկվում են ավելի լայն միջավայրում՝ որպես «ազգային անվտանգություն» սոցիալ-քաղաքական մակրոհամակարգի շրջանակներում գործող ենթահամակարգեր: Անվտանգության համակարգը կարելի է բովանդակային տեսակետից ներկայացնել տնտեսական, գիտատեխնիկական, տեղեկատվական, բնապահպանական, հոգևոր, սոցիալական, պաշտպանական, քաղաքական և այլ ոլորտների տարանջատմամբ: Այդ ենթահամակարգերից յուրաքանչյուրն իր հերթին ունի արտաքին ու ներքին կողմեր: Յայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին կարևորվում է անվտանգության նշված բոլոր ենթահամակարգերի զարգացումը խթանելու և նորարարական հենքի վրա իրականացնելու համար:

Եվրասիական տնտեսական միությունում արտաքին առևտրային քաղաքականության իրականացում է ԵԱՏՄ-ի կողմից ինքնուրույն կամ անդամ պետությունների հետ համատեղ այն ոլորտներում, որտեղ Միության մարմիններն ընդունում են անդամ պետությունների

⁷³ Յայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն, Տեղեկատվություն Եվրասիական տնտեսական միության մասին, <http://mineconomy.am/arm/46/gortsaruyt.html>

կողմից պարտադիր կատարման ենթակա որոշումներ, երրորդ կողմի հետ միջազգային պայմանագրեր կնքելու, միջազգային կազմակերպություններում մասնակցելու կամ արտաքին առևտրային քաղաքականության միջոցներ և այլ մեխանիզմներ կիրառելու միջոցով:

Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցությունից հետո երկրի գործադիր իշխանության միջարք գերատեսչությունների գործունեության մեջ տեղի են ունեցել նշանակալի փոփոխություններ, որոնք նպաստակուսեցն ասպահովելու Հայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների առավել սերտ ու բազմակողմանի համագործակցությունը միության շրջանակներում՝ թե երկկողմ, թե բազմակողմ ձևաչափով: Այսպես օրինակ, ԵԱՏՄ Հայաստանի անդամակցության հետևանքով աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում տեղի են ունեցել որոշ փոփոխություններ: Այդ փոփոխությունները վերաբերում են հաշմանդամության կարգավիճակ ստանալու, ՀՀ քաղաքացի, սակայն հաշվառում չունեցող կամ օտարերկրյա քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննության, ինչպես նաև հաշմանդամներին տրվող մյուս արտոնությունների և միջարք այլ գործընթացներին⁷⁴: Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին միանալուց հետո փոփոխություններ են տեղի ունեցել նաև իրավապահ մարմինների գործունեության առանձին ոլորտներում: Մասնավորապես, սկսել են գործել ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երրորդ պետությունից ՀՀ տարածք քաղաքացիական և ծառայողական զենքի ներմուծման և արտահանման, դրա համար լիցենզիայի ստացման ընթացակարգերը⁷⁵:

Հայաստանի համար խիստ կարևոր է միգրացիոն այն փոփոխությունները, որոնք պայմանավորված էին նրա՝ ԵԱՏՄ-ին անդամակցությամբ: Մասնավորապես, փոփոխության ենթարկվեցին Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներում ՀՀ քաղաքացի հանդիսացող միգրանտների կողմից

⁷⁴ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=125&code_id=647

⁷⁵ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Նորամուծություններ ԵԱՏՄ անդամակցության շրջանակներում, <http://www.police.am/news/view/ն18.html>

աշխատանքային գործունեությունն ծավալելու կարգում և պայմաններում: Եթե նախկինում ՀՀ քաղաքացիների համար ԵԱՏՄ անդամ պետություններում, հատկապես ՌԴ տարածքում աշխատելու համար պահանջվում էր թույլ տվություն, այդ թվում՝ պատենտ, ապա ԵԱՏՄ-ին միանալուց հետո դրա անհրաժեշտությունը չի առաջանում: Փոխարենը՝ ՀՀ քաղաքացիները ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքում գտնվելու կամ աշխատելու համար պետք է ունենան գործատուի հետ կնքված քաղաքացիաիրավական կամ աշխատանքային պայմանագիր: Նրանք ազատվեցին նաև ԵԱՏՄ անդամ պետությունների լիազոր մարմիններում գրանցվելու և հաշվառվելու պարտականություններից: Կարգավորվեցին նաև պայմանագրի կնքման և վերականգնման ընթացքում այդ պետությունների տարածքում գտնվելու ժամկետները, քաղաքացիների բուժօգնությունն ստանալու և այլ հարցեր: Բացի այդ, ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքներում ճանաչվում են կրթության վերաբերյալ այն փաստաթղթերը, որոնք տրված են Հայաստանի Հանրապետության կրթական կազմակերպությունների կողմից՝ առանց աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ սահմանված կրթության վերաբերյալ փաստաթղթերի ճանաչման ընթացակարգերի անցկացման⁷⁶:

Փոփոխությունները շոշափեցին նաև այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են՝ առողջապահությունը (դեղամիջոցների, սարքերի, առողջապահական պարագաների ներմուծում-արտահանումը և այլն)⁷⁷, մշակույթը (մշակութային կապերի ամրապնդումը, միջոցառումների կազմակերպումը և այլն), տրանսպորտի և կապի ոլորտը (տրանսպորտային հաղորդակցությունը, ուղևորափոխադրումները, բեռնափոխադրումները, տեղեկատվական համագործակցությունը և այլն):

⁷⁶ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Միգրացիոն պետական ծառայությունն, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներում ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների կողմից աշխատանքային գործունեությունն ծավալելու կարգի և պայմանների մասին, 13.01.2015թ., http://smsmta.am/?show_news&news_id=382

⁷⁷ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրաման N 01-Ն, 16.01.2015թ., http://moh.am/OrenqGorcox/01N_HRAMAN%20.pdf

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման գործում առանձնահատուկ դեր ունի ռազմական անվտանգությունը: Ինչպես յուրաքանչյուր պետության, այնպես էլ Հայաստանի ռազմական քաղաքականությունը իրականացվում է համաձայն երկրի ընդհանուր քաղաքականության, որի առանցքային նպատակային ուղղությունը պետք է լինի բոլոր ազգերի և ժողովուրդների հետ իրավահավասար ընկերության ու բարիդրացիության զարգացումը, ավելի անվտանգ և կայուն աշխարհի կառուցումը:

Հարավկովկասյան տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադրությունը մնում է որոշակիորեն անկայուն: Այդ իմաստով տարածաշրջանի պետությունները շարունակում են դռնս անցումային շրջանում գտնվել և անվտանգության խնդիրների լուծման համար առաջին հերթին օգտագործում են ռազմական գործունը: Դահանգեցնում է այդ պետությունների ռազմականացմանը, սպառազինությունների մրցավազքին: Այդպիսի ռազմականացված միջավայրում Հայաստանի համար ի հայտ են գալիս ռազմաքաղաքական բնույթի բազմաթիվ սպառնալիքներ: Ուստի, երկրի կայուն զարգացման ապահովման գործում գերակա առաջնահերթություն է դառնում ռազմական անվտանգության ապահովումը: Ի տարբերություն մյուս առաջնահերթությունների, որոնք առավել ապես բխում են Հայաստանի Հանրապետության և հայ ազգի ինքնության պահպանման ու զարգացման բնական շահերից՝ վերջինս պարտադրված առաջնահերթություն է⁷⁸:

Վերլուծության շրջանակներում հարկ է ընդգծել այն կարևոր իրողությունը, որ յուրացնելով տնտեսական համագործակցության նոր հարթակներ ու մակարդակներ՝ Հայաստանը ձեռք է բերում նաև ռազմաքաղաքական նոր գործընկերներ, ամրապնդում երկրի անվտանգությունը թե՛ նյութատեխնիկական բազայի շահավետ, առանց հարկերի կամ արտոնյալ պայմաններով համալրման, թե՛ արտենցիալ նոր դաշնակիցների «հասունացման» առումներով:

ԵԱՏՄ պայմանագրի համաձայն՝ Հայաստանը միությանն անդամակցելուց հետո ազատվում է ռազմական նշանակության

⁷⁸ Քոչարյան S.S., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2012, էջ 172

արտադրանքի մաքսազերծումից, որը մեր հանրապետությունը կներմուծվի 2015-2022 թվականների ժամանակահատվածում: Այս արտոնությունը վերաբերելու է ՀՀ զինված ուժերի համար հետաքրքրություն ներկայացնող այն արտադրանքին, որոնց համարժեքները չեն արտադրվում Միության այլ անդամ-պետություններում: Մաքսային վճարումներից ազատված կլինեն նաև մինչև 2022 թվականը Հայաստան ներմուծվող քաղաքացիական ինքնաթիռների և ուղղաթիռների որոշ տեսակներ, ինչպես նաև ԱԷԿ-ի շինարարության և մոդերնիզացման համար անհրաժեշտ այլ արտադրանք:

Հայաստանի համար այս դրույթը առանձնակի կարևորություն ունի երկրի անվտանգության, հատկապես ռազմական անվտանգության երաշխավորման ու ռազմական ներուժի ամրապնդման տեսանկյունից: Գաղտնիք չէ, որ պետական բյուջեի զգալի հատվածը հատկացվում է ՀՀ զինված ուժերի համար զենք-զինամթերքով և ռազմական տեխնիկայով համալրելու նպատակով: Հատկապես նոր սերնդի ռազմամթերքի ապահովման առումով ԵԱՏՄ պայմանագրի այս հատվածը առավելապես ձեռնտու է Հայաստանին:

Ճիշտ է, Միությունն դեռ կարճ ժամանակահատված է գործում և կարելի է ասել, որ այս ընթացքում գրեթե ոչ մի ռազմավարական հնչողություն ունեցող քայլ չի արվել, սակայն այս շրջանում պայմանագրի բազմաթիվ դրույթներ հստակեցվել են ու կոնկրետացվել ծրագրային պայմանավորվածությունների ձեռք բերումով: Եթե ապագայում ամբողջությամբ իրականացվեն նախատեսված ծրագրային միջոցառումները, բացի տնտեսական զարգացումից, Հայաստանի Հանրապետությունը կամրապնդի նաև երկրի անվտանգությունը՝ շահավետ ու արտոնյալ պայմաններով ձեռք բերելով ռազմական անվտանգության երաշխավորման համար անհրաժեշտ, նաև նոր սերնդի զենք-զինամթերք: Անվտանգության ապահովման իրականացման այս մոտեցումով Հայաստանը ոչ միայն կիրառում է շահավետ քաղաքականություն, այլև ի դեմս ԵԱՏՄ անդամ-պետությունների՝ Հայաստանը ձեռք է բերում թե տնտեսական, թե ռազմաքաղաքական կայուն գործընկերներ:

Հայաստան-Ռուսաստան երկկողմանի հարաբերությունների, ինչպես նաև ԵԱՏՄ շրջանակներում համագործակցության խորացմանն ու ամրապնդմանն են ուղղված վերջին շրջանում գրեթե բոլոր այն հանդիպումները, որոնք տեղի են ունենում երկու պետությունների միջև տարբեր մակարդակներով ու ձևաչափերով: Մշտապես կարևորվում են հատկապես Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նախագահների մակարդակով հանդիպումներում երկու երկրների միջև դաշնակցային ռազմավարական հարաբերությունների զարգացման հարցերը թե երկկողմ, թե բազմակողմ ձևաչափերով: Այսպես, օրինակ, 2015 թվականի հունիսի 7-ին Մոսկվայում բարձր մակարդակի բանակցությունների ընթացքում Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարները քննարկել են երկկողմ և բազմակողմ ձևաչափերով հայ-ռուսական համագործակցության հարցերի լայն շրջանակ՝ մասնավորապես անդրադառնալով ռազմավարական գործընկեր երկու երկրների միջև քաղաքական, տնտեսական, հումանիտար ոլորտներում, ինչպես նաև ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից հետո ինտեգրացիոն գործընթացների շրջանակում համագործակցությանը վերաբերող հարցերին, նախանշել հարաբերությունների առավել ամրապնդմանն ու խորացմանն ուղղությամբ հետագա աշխատանքները⁷⁹: Իսկ նույն թվականի սեպտեմբերի 8-ին Բելառուսի Գրոդնո քաղաքում տեղի ունեցավ ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստը, որին մասնակցեցին ՀՀ կառավարության մի շարք անդամներ՝ վարչապետ Յ. Աբրահամյանի գլխավորությամբ: Նիստի մասնակիցները քննարկել են ինտեգրացիոն փոխգործակցությանն առնչվող մի շարք հարցեր՝ արդյունաբերական համագործակցություն, մակրոտնտեսական և ֆինանսական կայունության ապահովման խնդիրներ, ծառայությունների միասնական շուկայի ձևավորում և այլն: Անդրադառնալով ԵԱՏՄ-ի՝ Եվրոպական միության հետ համագործակցության կարևորությունը, ՀՀ նախկին վարչապետ Յովիկ Աբրահամյանը նշել է, որ հաշվի առնելով Եվրոպական միության հետ առևտրատնտեսական հարցերով

⁷⁹ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նախագահների պաշտոնական հանդիպման տեքստ, Մոսկվա, 07.09.2015թ. <http://www.president.am/hy/press-release/item/2015/09/07/President-Serzh-Sargsyan-meeting-with-Vladimir-Putin-President-of-Russia/>

բանակցությունների կուտակած փորձը, Հայաստանը պատրաստակամ է աջակցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին Եվրոպական Միության հետ համապատասխան երկխոսության ձևավորմանը, ինչը կնպաստի ինտեգրացիոն գործընթացների զարգացման փոխշահավետության և փոխըրացնող սկզբունքի ապահովմանը: Նիստի վերջում ԵԱՏՄ անդամ պետությունների վարչապետները ստորագրել են փաստաթղթեր, որոնք սահմանում են գործակցությունը մտավոր սեփականության, որոշ ապրանքների դրոշմավորման համակարգի ներմուծման, ծառայությունների ընդհանուր շուկայի ձևավորման և այլ հարցերում⁸⁰:

Այդուհանդերձ, հարկ է ընդունել այն հանագամանքը, որ Միությանը Հայաստանի անդամակցության կարճ շրջանը, ինչպես նաև միջազգային տնտեսական գործընթացներում ընթացող որոշակի բացասական զարգացումները հիմք են դառնում Միության նկատմամբ հայաստանյան շրջանակներում հնչեցվող ոչ միանշանակ գնահատականներին: Այսպես, Եվրոպամետները համոզված են, որ խորացնելով մեր հարաբերությունները ԵԱՏՄ-ի ու մասնավորապես Ռուսաստանի հետ՝ ավելի ենք մեծացրել Հայաստանի տնտեսական կախվածությունը այդ երկրից և դարձել ավելի խոցելի՝ Ռուսաստանից եկող բացասական ազդակների նկատմամբ (որոնք պայմանավորված են Արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցներով և նավթի գների անկմամբ): Հակառակ դիրքորոշումը այն է, որ ԵԱՏՄ-ին անդամակցությունը Հայաստանի առջև լրջագույն հնարավորություններ է բացել՝ 200 միլիոն բնակչություն ունեցող շուկային մուտք ստանալու և Եվրոպայի ու ԵԱՏՄ-ի միջև տարանցիկ դեր ստանձնելու առումով: Վերջիններիս կարծիքով՝ եթե չենք կարողանում լիարժեք օգտվել այդ հնարավորությունից, ուրեմն խնդիրը մեր մեջ է⁸¹: Մեկ այլ մեկնաբանմամբ նշվում է, որ Հայաստանի հասարակական շրջանակներում Ռուսաստանի նկատմամբ առկա է մի մոտեցում, որ այդ երկիրը Հայաստանի անվտանգության երաշխավորն է և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնական

⁸⁰ ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի հաջորդ նիստը Հայաստանում է անցկացվել ու , 08.09.2015թ., <http://www.lragir.am/index/arm/0/politics/view/120101.dluIDBOG.dpuf>

⁸¹ Թոմսոն Բ., Հայաստան – ԵԱՏՄ. անդամակցության 2 տարին, 20.12.2016թ., <https://jam-news.net/?p=7305&lang=hy>

պատասխանատու, հետևաբար ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությունը նշանակում է անվտանգության ապահովում: Մյուս կողմից՝ Ռուսաստանի որոշ գործողություններ սպառնալիք են Հայաստանի և Արցախի անվտանգության համար, քանի որ վերջինս մեծաքանակ հարձակողական գեներ է վաճառում Ադրբեյջանին, իսկ ԵԱՏՄ-ին անդամակցությունը մեկուսացնում է Հայաստանին՝ կորցնելով արևմտյան գործընկերներին⁸²: Սակայն, պետք է փաստել, որ Ռուսաստանն իր ազդեցությունն ուժեղացնում է անվտանգության ու տնտեսական միություններում Հայաստանի ներգրավման միջոցով: Եվ դատելի է ունենում արևմտյան ինտեգրման գործընթացներին զուգահեռ (ԵՄ, ՆԱՏՕ): Նման քաղաքականությունը որոշակիորեն իր աջակցությունն է գտնում նաև հանրության շրջանում՝ ունենալով քիչ հակազդեցություն:

Ռուսական վերլուծական շրջանակներում ընդգծում են, որ Հայաստանը բավականին արդյունավետ է ինտեգրվել Մաքսային Միությանը՝ համեմատելով Ղրղզստանի հետ, որպես տնտեսական ցուցանիշների հարցում երկու առաջատար երկրներ⁸³: Նշվում է, որ 2016 թվականին փոխադարձ առևտուրը Եվրասիական տնտեսական միության տարածքում կրճատվել է 6.7%-ով, սակայն արտահանումը Հայաստանից Միության տարածք ավելացել է 53%-ով⁸⁴:

Հայաստանի անդամակցությունը Մաքսային Միությանը ընդգծվում է ևս մեկ կարևոր հանգամանքով, որ 2016 թվականի փետրվարի 1-ից Եվրասիական տնտեսական հանձնաժողովը գլխավորում է ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը (2016 թվականին Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդում, Եվրասիական միջկառավարական խորհրդում և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդում նախագահող պետություն է ընտրվել

⁸² Բարսեղյան Ս., Հայ-ռուսական հարաբերությունների ընկալումներն ազգային անվտանգության համատեքստում, 21.03.2017թ., <http://www.aravot.am/2017/03/21/868530/>

⁸³ Шухно С., Армения с вступлением в ЕАЭС показала взрывной рост экономики, 04.04.2017, <https://ru.armeniasputnik.am/armenia/20170404/6918506/shuhno-armeniya-s-vstupleniem-v-eaehs-pokazala-vzryvnoj-rost-ehkonomiki.html>

⁸⁴ Վալովայա Ս., ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտուրն աճել է, Հայաստանը առաջատարների շարքում է, 28.03.2017թ., <https://armeniasputnik.am/economy/20170328/6834456/armenia-hna-valovaya.html>

Ղազարխանյանը⁸⁵): Տ. Սարգսյանի նշանակումը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի պաշտոնում որոշակիորեն նպաստում է հնարավորինս ազատականացված տնտեսական հարաբերությունների հաստատմանը՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ վերջինս ի սկզբանե ազատական հարաբերությունների ջատագովն է եղել⁸⁶: Բացի այդ, նման մակարդակի ղեկավար պաշտոնում Հայաստանի ներկայացուցչի պաշտոնավարումը նաև լատենտային ազդեցությունն է ունենում միության գործունեության համատեքստում՝ ի նպաստ Հայաստանի տրամադրվածության, շուկայական ազատական հարաբերությունների ձևավորելու և արմատավորելու հարցում գործընկերության դերի առումով:

Ամփոփելով ենթազուգույնը՝ կարելի է ընդգծել, որ Հայաստանի անվտանգության գրեթե բոլոր ոլորտների կայուն զարգացման հրամայականից ելնելով և հաշվի առնելով մեր երկրի ներկա տնտեսական պայմանները՝ Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ԵԱՏՄ-ին տնտեսության ու անվտանգային հենքի զարգացման այլընտրանքային ճանապարհ էր, և առկա ու հնարավոր մարտահրավերներով հանդերձ, Հայաստանը պետք է փորձի առավելագույն օգուտները քաղել միությանը անդամակցությունից: Դրա համար պետք է ոչ միայն ընդունել պայմանագրի կետերը, այլ և առաջադրել սեփական պահանջները, քանի որ ԵՏՄ օրենսդրությունն ընդունվում է կոնսենսուսի հիման վրա, միությունում օրենքով հավասար պայմաններ են երաշխավորվում բոլոր անդամների համար, միաժամանակ հաշվի առնելով, որ Ռուսաստանը փորձելու է իշխողի դիրքերից ղեկավարել ԵԱՏՄ-ն և դրա շրջանակներում իրականացվող քաղաքականությունը:

⁸⁵ ԵԱՏՄ պետությունների ղեկավարները հաստատել են ԵՏՄ Կոլեգիայի նոր կազմը, 22.12.2015թ., <http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/22-12-2015-5.aspx>

⁸⁶ Բոստանջյան Վ., «Անգամ մեկ վայրկյան չեմ կասկածում, որ Տիգրան Սարգսյանն այս նշանակումը կարդարացնի», 23.10.2015թ., nyut.am/?p=89506&l=en&fb_comment_id=978630928876360_978666885539431#f7535ab6a831f

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓՈԽՊՈՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ**

**3.1. Հայ -ռուսական գործընկերային հարաբերությունները
Հալաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության
գործունեության շրջանակներում**

Երբ խոսքը է գնում Հարավկովկասյան տարածաշրջանում խաղաղության և անվտանգության հարցերի մասին, ապա անհրաժեշտ է հաշվի առնել գործոնների մի ամբողջություն, կամ, ավելի պարզ ասած, բարդ ու ոչ գծային գործընթացների համակարգ, որոնք անմիջականորեն կամ ոչ ուղղակի ձևով ազդում են խաղաղության ու անվտանգության միջավայրի ձևավորման վրա, բնորոշում և պայմանավորում են տարածաշրջանի երկրների, ինչպես նաև որոշակի շահեր հետապնդող արտատարածաշրջանային ակտորների քաղաքականության ուղենիշները:

Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացների մեջ ներգրավված տարածաշրջանային և արտատարածաշրջանային ակտորների շահերը հաճախ բախվում և մրցակցում են՝ դրանով իսկ անհրաժեշտությամբ ձևավորելով համակարգված տարբերակով կարգավորել խաղաղության, կայունության և ամեն տեսակի համագործակցության ապահովման խնդիրները: Այս համատեքստը պահանջեց տարածաշրջանային հավաքական անվտանգության համակարգի կայացմանը միտված գործընթացների անցկացում⁸⁷: 1990-ական թվականներից սկսած՝ այս հարցը ակտիվորեն քննարկվում էր, մշակվում էին տարածաշրջանային անվտանգության համակարգի հնարավոր մոդելներ⁸⁸: Չնայած եվրոպական միջազգային ինստիտուտների կողմից տրված «խաղաղության երաշխիքների»՝ տարածաշրջանային անվտանգության հարցի էությունը պայմանավորված էր այդ շրջանում սկիզբ առած և մինչ օրս տարբեր զարգացումներ անցած տարածաշրջանային անվտանգության կառուցակարգով և այն գործոնով, որ ներտարածաշրջանային հարաբերությունների վրա որոշակիորեն ազդում են արտաքին ագրեսիայի վախով պայմանավորված զարգացումները:

ԽՍՀՄ փլուզումն ու նրա տարածքում նորանկախ պետությունների առաջացումը նոր գերխնդիր առաջ քաշեց, այն է՝ ստեղծել այդ պետությունների անվտանգությանը ապահովող մի համակարգ, որը համահունչ կլինի նոր իրականությանը: 1992 թվականի մայիսի 15-ին Տաքենդում Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի ներկայացուցիչները ստորագրեցին Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը⁸⁹, որն էլ հետագայում ՀԱՊԿ ստեղծման իրավաբանական հիմքը դարձավ: 1993 թվականին պայմանագրին միացան Ադրբեյջանը, Վրաստանը և Բելառուսը: Պայմանագիրը ուժի մեջ մտավ 1994 թվականի ապրիլի 20-ին՝ 5 տարի ժամկետով, նախատեսելով նաև երկարաձգման հնարավորություն: Այդ

⁸⁷ Корнилов А.А., Геополитика современных российско-армянских отношений и ее влияние на проект «Новый Великий Шелковый Путь». <http://nashasreda.ru/geopolitika-sovremennyx-rossijsko-armyanskix-otnoshenij-i-ee-vliyanie-na-proekt-novyj-velikij-shelkovyj-put/>

⁸⁸ Севдималиев Р., Безопасность и сотрудничество на Южном Кавказе / Защита прав человека на Кавказе глазами ученых и правозащитников / Под ред. А.Ю.Сунгурова. - СПб., 2002. С. 144-154.

⁸⁹ Договор о коллективной безопасности, Совершено в г. Ташкенте 15 мая 1992 года в одном подлинном экземпляре на русском языке. МОЦИП ОДКБ, Армения: -<http://www.odkb-armenia.am/doc03.php>

Ժամանակաշրջանը բնութագրվում էր նախորդող Արևմուտք-Արևելք սառը պատերազմի հակամարտության հետևանքներից կտրում, ինչը պահանջում էր նորանկախ պետությունների գործակցության նոր ձևաչափ՝ համադրելով համաշխարհային անվտանգային նոր զարգացումներն ու հիմնական մոտեցումների միասնականացման գործընթացը⁹⁰: Յինգ տարի անց՝ 1999թ. ապրիլին Յավաքական անվտանգության պայմանագրի երկարաձգման համաձայնագիրն ստորագրեցին 6 պետություններ (բացի Ադրբեջանից, Վրաստանից ու Ուզբեկստանից): Իսկ 2002թ. մայիսի 14-ին ձևավորվեց Յավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՅԱՊԿ), որը ներկայումս միավորում է 6 պետությունների՝ Յայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան և Տաջիկստան: Նույն թվականի հոկտեմբերի 7-ին Քիշնևում ընդունվեց ՅԱՊԿ կանոնադրությունը, որի համաձայն կազմակերպության հիմնական նպատակներ հռչակվեցին խաղաղության, միջազգային և տարածաշրջանային անվտանգության ու կայունության ամրապնդումը, հավաքականության հիման վրա անդամ պետությունների անկախության, տարածքային անվտանգության և ինքնիշխանության պաշտպանությունը:

Յավաքական անվտանգության մասին պայմանագիրը ժամանակակից հայ-ռուսական հարաբերությունների և համագործակցության կարևոր կողմերից է: Յավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն են՝ քաղաքական համագործակցության բազմակողմանի զարգացումը, միջազգային ահաբեկչության և ծայրահեղականության, թմրանյութերի, զենք-զինամթերքի անօրինական շրջանառության և այլ սպառնալիքների դեմ պայքարը: ՅԱՊԿ խնդիրներն են՝ պաշտպանել անդամ-երկրների տարածքային-տնտեսական տարածությունը զինված ուժերի և օժանդակ ստորաբաժանումների համատեղ ջանքերով՝ ցանկացած արտաքին ռազմաքաղաքական ագրեսորներից, միջազգային ահաբեկչություններից, ինչպես նաև խոշոր չափերի բնական աղետներից: ՅԱՊԿ-ի կանոնադրական գործունեության և զարգացման հեռանկարները հետևողական ու շարունակաբար պարբերաբար վերլուծվում են

⁹⁰ Кокошин А., «Реальный суверенитет в современной мирополитической системе». Издание 3-е, расширенное и дополненное, М, Издательство «Европа», 2006: - <http://pravo33.wordpress.com/2010/08/17>

համապատասխան փորձագիտական և գիտահետազոտական կառույցների կողմից՝ նպատակ ունենալով կատարելագործել կազմակերպության ներկայի և ապագայի տեսլականը, ընդհանուր և տարածաշրջանային անվտանգության ապահովման գործում վերջինիս դերի ու նշանակության ուսումնասիրությունները, որի արդյունքը կլինի զարգացման հստակ և կոնկրետ ռազմավարություն ունենալ և ու դրա գործնական ապահովման կառուցակարգերը⁹¹:

ՀԱՊԿ բարձրագույն մարմինը, որը քննարկում է կազմակերպության գործունեության վերաբերյալ սկզբունքային հարցերը, Հավաքական անվտանգության խորհուրդն է (ՀԱԽ)՝ կազմված անդամ պետությունների ղեկավարներից: ՀԱԽ նախագահը ՀԱՊԿ նախագահող պետության ղեկավարն է: ՀԱԽ նիստերին կարող են մասնակցել նաև անդամ պետությունների արտաքին գործերի ու պաշտպանության նախարարները, կազմակերպության գլխավոր քարտուղարը, ինչպես նաև հրավիրված անձիք: 2015թ. դեկտեմբերի 21-ին Մոսկվայում կայացած Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանին որոշում է կայացվել, որ 2017թ. հունվարի 1-ից ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնը կստանձնի ՀՀ ներկայացուցիչը (2003թ. ապրիլի 28-ից մինչև 2017թ. հունվարի 1-ը ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնն զբաղեցնում էր Ն.Բորդյուժան): Համաձայն այդ որոշման՝ ՀԱՊԿ-ում գլխավոր քարտուղարի պաշտոնը պետք է ռոտացիոն կարգով փոխարինվի, և եթե ռոտացիան ուժի մեջ է մտնում, ապա առաջին պետությունը Հայաստանն է: Ռոտացիան ուժի մեջ 2017 թ. հունվարի 1-ց, և, բնական է, որ այդ պաշտոնում պետք է նշանակվեր Հայաստանի ներկայացուցիչը: «Երևանում ՀԱՊԿ ղեկավարների գագաթնաժողովից հետո կողմերը փոխհամաձայնության չեն հանգել, քանի որ Լրացուցիչ ժամանակ են պահանջել՝ ՀԱՊԿ հաջորդ հանդիպմանն այդ հարցը քննարկելու համար: Այդ հանդիպմանն էլ չհաջողվեց համաձայնության գալ՝ Բելառուսի նախագահի բացակայության պատճառով», - ասել է ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Թոչարյանը⁹²: Արդյունքում նախատեսված ժամկետում չեն նշանակվեց նոր

⁹¹ ОДКБ: ответственная безопасность, Под общ. ред. И.Ю.Юргенса, М., 2011, Еջ 5-7

⁹² Թոչարյան Շ., ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղը Հայաստանինն է, 19.01.2017թ., http://arminfo.info/full_news.php?id=23749&lang=1#sthash.pn7izEHS.dpuf

քարտուղար և քարտուղարի աշխատանքները շարունակեց կատարել տեղակալը՝ որպես պաշտոնակատար:

Հետագայում 2017թ. ապրիլի 14-ին Բիշքեկում կայացած ՀԱՊԿ ոչ պաշտոնական գագաթաժողովին կայացվեց սպասված անվերապահ համաձայնությունը և որոշվեց, որ նույն թվականի մայիսի 2-ին ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնում է ՀՀ ներկայացուցիչը՝ ՀՀ ԱԱԽ քարտուղար, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատրովը⁹³: Արդյունքում ընդգծվում է այն կարևոր հանգամանքը, որ Հայաստանի ներկայացուցչի ընտրությունը ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում նախկինում երկու անգամ հետաձգվել էր: Ոչ պաշտոնական մեկնաբանությունները՝ պատճառը Ղազախստանի⁹⁴ և Բելառուսի⁹⁵ նախագահների դիրքորոշումն էր:

Յուրի Խաչատրովի նշանակումը երկողմանի ազդեցություն և կունենա Հայաստանի համար: Մի կողմից, ՀԱՊԿ-ում գլխավոր քարտուղարի պաշտոնի ստանձնումը «մեծ օգուտ» կլինի Հայաստանի համար, քանզի այդ պաշտոնը բարձրացնում է Հայաստանի հեղինակությունը: Բացի այդ, տվյալ պաշտոնում Հայաստանի ներկայացուցչի նշանակումը թույլ է տալիս ՀԱՊԿ-ի անվտանգության հայեցակարգի և կանոնադրության շրջանակներում Կազմակերպության ազդեցությունը ՀՀ անվտանգության համար դարձնել ավելի բարենպաստ, չբացառելով նույնիսկ այն, որ ՀԱՊԿ-ը ստիպված կլինի միջամտել Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: Մյուս կողմից, Խաչատրովի Հայաստանի օգտին կատարած ցականցած քայլ ՀԱՊԿ-ի անդամ մյուս երկրների կողմից կարող է որակվել որպես կողմնապահություն⁹⁶: Ըստ որոշ փորձագետների՝ հաշվի առնելով Ռուսաստանի դերը ՀԱՊԿ-ում, դաշինքում Խաչատրովի նշանակումով

⁹³ Юрия Хачатурова назначили генеральным секретарем ОДКБ, Риа Новости, 14.04.2017, <https://ria.ru/world/20170414/1492253285.html>

⁹⁴ At Summit, CSTO Wrestles with Internal Disputes, Irrelevance, 17.10.2016, EURASIANET.org, <http://www.eurasianet.org/node/80906>

⁹⁵ St. Petersburg Summit Accelerates Unraveling of CSTO, 29.12.2016, EURASIANET.org, <http://www.eurasianet.org/node/81786>

⁹⁶ Акопян В., «Назначение Хачатурова на пост генсека ОДКБ не нужно переоценивать», 15.04.2017թ., ArmenianSputnik.am, <https://ru.armeniasputnik.am/exclusive/20170415/7025010/akopyan-naznachenie-khachaturova-na-post-genseka-odkb-ne-nuzhno-pereotsenivat.html>

ոչ ինչ չի փոխվի⁹⁷: ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, իր հարցազրույցում խոսելով ՀԱՊԿ-ում Յուրի Խաչատրովի գլխավոր քարտուղար նշանակման մասին, նշում է, որ այն կարող է ունենալ իր դրական և բացասական ազդեցությունը Հայաստանի համար, քանի որ ՌԴ քաղաքացի Նիկոլայ Բորոյնովայի և ՀՀ քաղաքացի Յուրի Խաչատրովի հայտարարությունները տարբեր կշիռ կունենան ՀԱՊԿ-ում: Նախարարը նաև նշել է, որ Յուրի Խաչատրովը այդ պաշտոնում հանդես է գալու ոչ թե որպես ՀՀ քաղաքացի, այլ՝ որպես միջազգային պաշտոնյա⁹⁸:

Որևէ երկրի մասնակցությունը այս կամ այն ռազմաքաղաքական բլոկին թույլ է տալիս վերջինիս ավելի արդյունավետորեն իրականացնել սեփական անվտանգության ապահովումը տարածաշրջանային և արտատարածաշրջանային քաղաքականության տիրույթում: Հայաստանի համար առաջնային կարևորություն ունի նաև այն հանգամանքը, որ անդամ պետությունների ռազմական բաղադրիչի ամրապնդման նպատակով Կազմակերպության շրջանակում սահմանված են արտոնյալ պայմաններ ռազմատեխնիկական մատակարարումների համար: ՀԱՊԿ շրջանակներում համապատասխան արձագանք են գտել նաև համահայկական նշանակության հարցեր: Այսպես, 2014 թվականի ապրիլի 3-ին Մոսկվայում կայացած ՀԱՊԿ Արտաքին գործերի նախարարների խորհրդի հերթական նիստի ընթացքում Կազմակերպության անդամ պետությունների ԱԳ նախարարները հանդես են եկել Սիրիայի հայաբնակ Քեսաբ քաղաքի վրա ծայրահեղականների հարձակումը դատապարտող հայտարարությամբ⁹⁹: Հայաստանը 2011 թվականի հունվարին ձեռնամուխ եղավ նաև ՀԱՊԿ-ում մշտական ներկայացուցչության (նստավայրը՝ Մոսկվա) հիմնմանը, իսկ 2013 թվականի տարեվերջին ներկայացուցչությունում նշանակվեց նաև ՀՀ ՁՈԻ ներկայացուցիչ:

⁹⁷ Poghosyan B., «The appointment of General Khachaturov as head of the CSTO has both positive and negative implications for Armenia», 01.05.2017, Commonsplace.eu, http://www.commonspace.eu/index.php?m=23&news_id=4215

⁹⁸ Սարգսյան Վ., «Յուրի Խաչատրովը այդ պաշտոնում հանդես է գալու ոչ թե որպես ՀՀ քաղաքացի, այլ՝ որպես միջազգային պաշտոնյա», 21.04.2017թ., Aravot.am <http://www.aravot.am/2017/04/21/880112/>

⁹⁹ По инициативе Армении главы МИД стран ОДКБ приняли совместное заявление по ситуации в Кесабе, 04.04.2014, <http://www.panorama.am/ru/news/2014/04/04/e-nalbandyan/317196>

Ռազմավարությանը ՀՀ անվտանգության ապահովման բաղադրիչների շարքին է դասուում անդամակցությանը ՀԱՊԿ-ին¹⁰⁰, որն ապահովվում է անդամ-պետությանը ներքին միջև բազմակողմ կապերի շնորհիվ՝ հաշվի առնելով նաև այն, որ Պայմանագրի ռազմական բաղադրիչն արտոնյալ պայմաններ է ընձեռում անդամ-պետությանը ներքին ռազմատեխնիկական մատակարարումների հարցում, ինչն առաջնային կարևորություն ունի Հայաստանի համար¹⁰¹: Այս համատեքստում առանձնանում են ՀԱՊԿ ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի (ՌՏՀՄՀ) աշխատանքները: Հանձնաժողովը՝ որպես ՀԱՊԿ կառուցվածքային միավոր, կազմավորվել է 2005թ. հունիսի 23-ին, երբ ընդունվեց Հավաքական Անվտանգության հորհրդի համապատասխան որոշումը՝ հաստատելով Հանձնաժողովի կանոնադրությունը¹⁰²: ՀՀ պաշտպանության բնագավառում ռազմատնտեսական ու ռազմատեխնիկական զարգացումների կտրվածքով Հանձնաժողովը բավականին դերակատարություն է ունեցել, քանի որ այս ուղղությամբ կարելի է առանձնացնել անցած տարիներին մի քանի կարևոր իրադարձություններ, մասնավորապես, ՀԱՊԿ ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի (ՌՏՀՄՀ) աշխատանքների արդյունքում 2013թ. հոկտեմբերի 4-ին՝ ՀՀ Նախագահի մասնակցությամբ կայացել է «Կամազ-Արմենիա» ընկերության՝ իշահ ՀՀ ՉՈՒ և այլ մարմինների «Կամազ» մակնիշի ավտոմեքենաների սպասարկման առաջին հավաստագրված կենտրոնի բացումը¹⁰³:

Բացի այդ, հայկական կողմի հետևողական ու շարունակական կենտրոնում են Կազմակերպության շրջանակներում արտաքին բաղադրական համարմանը, պաշտպանական (ռազմական) ներուժի ու ժեղացմանը և մարտահրավերների ու սպառնալիքների հակազդմանն

¹⁰⁰ ՀՀ Նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007:

¹⁰¹ Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 535

¹⁰² Межгосударственная комиссия по военно-экономическому сотрудничеству ОДКБ, <http://www.odkb-csto.org/mkves/>

¹⁰³ Սերժ Սարգսյանը մասնակցել է «Կամազ Արմենիա» ՓԲԸ առևտրի և սպասարկման կենտրոնի բացման արարողությանը, 04.10.2013թ., <https://armenpress.am/arm/news/735527/serzh-sargsyany-masnakcel-e-kamaz-armenia-pby-arevtri-ev.html>

ուղղված նախաձեռնությունները: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը, անդրադառնալով ՀԱՊԿ ՀՀ մասնակցության դերին, ընդգծում է, որ նման կերպ ոչ միայն բարձրանում է հայոց բանակի միջազգային հեղինակությունը, այլև ՀՀ զինված ուժերը ծանոթանում են ժամանակակից բանակներում քննությունն բռնած առաջավոր փորձին և այն կիրառում ՀՀ զինված ուժերի շինարարության գործում¹⁰⁴:

ՀՀ անվտանգության համար ՀԱՊԿ գործունեության նշանակության համատեքստում հարկ է ընդգծել այն համատեղ հաստատությունների և անցկացվող միջոցառումների մասին, որոնց անվերապահորեն ամենաակտիվ մասնակցությունն են ցուցաբերում թե՛ Ռուսաստանը և թե՛ Հայաստանը:

Նման միջոցառումների շարքում առանձնացված կարելի է նշել բազմաթիվ զորավարժություններն ու ուսումնամարտավարական ծրագրերը: Մասնավորապես,

- 2008թ. հունիս-օգոստոս ամիսներին Հայաստանում անցկացվեց «ՀՀ-ի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության համատեղ պաշտպանության գործողության նախապատրաստում ու անցկացում» թեմայով ՀԱՊԿ անդամ պետությունների «Ռուբեժ-2008» համատեղ հրամանատարաշտաբային զորավարժությունը, որը հնարավորություն ընձեռեց ստուգել ու անդամ պետությունների հավաքական պաշտպանության պատրաստվածությունը, ինչպես նաև մշակել ու Հայաստանի հանդեպ ագրեսիայի սպառնալիքի կամ ագրեսիայի ակտի դեպքում ձեռնարկվելիք միջոցները:

- 2009թ. սեպտեմբերի 26-ից հեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում ՀԱՊԿ շրջանակներում անցկացվեց համատեղ համալիր զորավարժություն, ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ներգրավմամբ, որի ակտիվ փուլի դիտարկմանը Ղազախստանում հոկտեմբերի 16-ին մասնակցեց նաև ՀՀ Նախագահը:

- 2012 թվականի սեպտեմբերի 15-19-ը Հայաստանում անցկացվեցին Փոխգործակցություն 2012 համատեղ զորավարժությունները՝ ՀԱՊԿ Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի կիրառմամբ: Բացի այդ,

¹⁰⁴ Օհանյան Ս., Հայկական բանակի 20 - ամյա տարեգրությունը, Երևան, 2012, էջ 208

Հայաստանն իր մասնակցությունը բերեց հոկտեմբերին Ղազախստանում «Անսասան եղբայրություն 2012» խորագրով ՀԱՊԿ խաղաղապահ գործարժություններին:

- 2015թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը Հայաստանում («Բաղրամյան» գործարժարանում) անցկացվել է ՀԱՊԿ խաղաղապահ ուժերի «Անխախտ եղբայրություն-2015» համատեղ գործարժությունը՝ Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի զինված ուժերի ստորաբաժանումների, Կարմիր Խաչի միջազգային կազմակերպության ներկայացուցիչների մասնակցությամբ: Տաջիկստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչները մասնակցել են օպերատիվ խմբով:

- 2016թ. մայիսի 24-ից 26-ը Հայաստանում անցկացվեց «Կոբալտ-2016» մարտավարա-մասնագիտական գործարժությունը՝ ՀԱՊԿ անդամ-պետությունների օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի կազմում ներգրավված հատուկ նշանակության ուժերի կազմավորումների, ներքին գործերի և ոստիկանության ստորաբաժանումների մասնակցությամբ: Չորավարժությանը մասնակցեց ՀԱՊԿ անդամ-պետությունների, Կազմակերպության, ՀՀ պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունների, ՀՀ ոստիկանության և ոստիկանական գործերի 600-ից ավելի անձնակազմ և շուրջ 40 միավոր տեխնիկա: Դիտորդի կարգավիճակով ներկա էին Շանհայի համագործակցության կազմակերպության և ԱՊՀ հակահաբեկչական կենտրոնի պատվիրակները:

- Անցած տարիների ընթացքում Հայաստանը մասնակցել է նաև ՀԱՊԿ շրջանակներում Ղազախստանում, Բելառուսում և Ռուսաստանում անցկացված մի շարք գործարժություններին, մասնավորապես՝ 2013թ., Ղազախստանում, Ղրղզստանում և Ռուսաստանում անցկացված գործարժություններին՝ 2014թ.¹⁰⁵:

Նշված միջոցառումների նպատակայնության ու զարգացման տեսլականի մասով ամբողջապես արդիական է պրոֆեսոր Յ.Քոթանջյանի դիտարկումը, որով վերջինս կենսական անհրաժեշտություն է համարում, որ կազմակերպության ռազմական բաղադրիչի կազմավորման

¹⁰⁵ Միջոցառումների մասին լրացուցիչ տես ՀՀ արտաքին գործերի նախարարության տարեկան հաշվետվություններում, <http://mfa.am/hy/annualreport/>

ընթացքում ՀԱՊԿ-ի գործունեությունը պետք է դուրս գա գորավարժությունների շրջանակներից և հասնի միջազգային խաղաղարարական օպերացիաներում ակտիվ ներգրավվածության մակարդակի¹⁰⁶: Հայաստանը խաղաղապահ առաքելությունների մասնակցության բավականին փորձ ունի և որպես կազմակերպության հիմնադիր անդամ ու դրա գործառնություն արդյունավետ զարգացման առաջնահերթության ջատագով՝ կարող է իր ներդրումն ունենալ ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի խաղաղապահական տարրի կատարելագործման գործում: Դրանով ՀԱՊԿ կարող է կերպափոխվել ոչ միայն տարածաշրջանային, այլև համաշխարհային անվտանգության բազմագործառնության դերակատարի:

Բացի այդ, ակտիվ գործակցություն է իրականացվել նաև տարբեր գիտաժողովների, համաժողովների, քաղաքական ու տնտեսական հավաքական խորհրդակցությունների ձևաչափով: Այսպես. 2009թ. մայիսի 15-16-ին Երևանում ՀՀ ԱԳՆ աջակցությամբ, ՀՀ Անվտանգության խորհրդի հովանու ներքո ու ՀԱՊԿ ծրագրերի շրջանակներում անցակցվեց Կովկասում անվտանգությանը և համագործակցությունը նվիրված միջազգային գիտաժողով: 2011թ. մայիսի 19-20-ը Երևանում կազմակերպվել է «ՀԱՊԿ-ն ու Հարավային Կովկասը. Տարածաշրջանում խաղաղության և անվտանգության հեռանկարները» միջազգային համաժողովը: 2013թ. հունվարին Երևանում կայացել են ՀԱՊԿ Ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի և դրան կից Գործարար խորհրդի Հայաստանի ու Ռուսաստանի ազգային մասերի նիստերը: Նույն թվականի հունիսի 26-27-ը կայացել է «ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի ձևավորման քաղաքական և անվտանգության կողմնորոշիչները» խորագրով ռազմավարական քաղաքական համաժողովը, որը կազմակերպեցին ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, ՀԱՊԿ քարտուղարությունը և ՀԱՊԿ ինստիտուտը: Համաժողովին մասնակցեցին նաև ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի ձևավորման մասնագետներ Հայաստանից, Ղրղզստանից, Ռուսաստանից: Ելույթ ունեցողները կարևորեցին ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի ձևավորման դերը կառույցի պատասխանատվության գոտում,

¹⁰⁶ Քոթանջյան Հ., Խաղաղապահության ոլորտում ՀԱՊԿ-ի հեռանկարները, 28.06.2013թ., <http://razm.info/13827>

կայ ու ն ու թ յ ան և անվտանգ ու թ յ ան պահպանման գործ ու մ, շ ե շ տե գ ի ն այ դ ու ղ ղ ու թ յ ամ բ Կազմակերպ ու թ յ ան անդամ-պետ ու թ յ ու ն ն եր ի կողմից միասնակ ան քաղաքակն ու թ յ ան մշակման և իրականացման կարևոր ու թ յ ու ն ը¹⁰⁷:

2014թ. հոկտեմբերի 14-ից 17-ը Երևանում կայացել է «ՄԱԿ սկզբունքների և չափանիշների հիման վրա ազգային և տարածաշրջանային խաղաղապահ ներուժի ինտեգրումը խաղաղապահ գործող ու թ յ ու ն ն եր ի համընդհանուր համակարգ» խորագրով ՀԱՊԿ ռազմավարական քաղաքական համաժողովը, որի կազմակերպիչներն էին՝ ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտ ու թ յ ու ն ն եր ի ինստիտուտը, ՀԱՊԿ քարտուղար ու թ յ ու ն ը, ՀԱՊԿ-ի միացյալ շտաբը, ՀԱՊԿ-ի գիտափորձագիտական խորհուրդը, ՌԴ ԱԳՆ Միջազգային հետազոտ ու թ յ ու ն ն եր ի ինստիտուտի եվրաստլանտյան անվտանգ ու թ յ ան կենտրոնը, Քաղաքական գիտ ու թ յ ու ն ն եր ի ռուսաստանյան և Քաղաքական գիտ ու թ յ ան Հայաստանի ասոցիացիաները: Աշխատանքներին մասնակցել են նաև մասնագետներ ՌԴ-ից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Տաջիկստանից, Բելգիայից, Իսրայելից, Իտալիայից, ՀԱՅ-ից, Նիդերլանդներից, Շվեդիայից, Չինաստանից: Ֆորումի ընթացքում առանձին զեկույցով հանդես եկավ քաղաքական գիտ ու թ յ ու ն ն եր ի դոկտոր, պրոֆեսոր Հայկ Քոթանջյանը, ում կողմից, օգտագործելով նման պաշտոնական լայն լսարանի ու շարժ ու թ յ ու ն ը ԼՂՀ կայացման հիմքերի իրավաչափ ու թ յ ան հարցին կրկին սնեռել ու հնարավոր ու թ յ ու ն ը, ներկայացվեցին ԼՂՀ-ում հաստատ ու թ ե ն ա կ ան շինարար ու թ յ ան գործընթացի մանրամասն ու թ յ ու ն ն եր ը և դրանց ընթացքում միջազգային հանրաճանաչ դրույթների ու ժողովրդավար ու թ յ ան բն ու թ ա գրիչ ներ ի խտագույն պահպանված լինել ու անհերքելի ապացույցները¹⁰⁸:

2016թ. հոկտեմբերի 14-ից 17-ը Երևանում անցկացվել է սպառազին ու թ յ ան և պաշտպանական տեխնոլոգիաների «ArmHiTec-2016» անդրանիկ միջազգային ցուցահանդեսը, որի շրջանակներում

¹⁰⁷ Քոթանջյան Հ.Ս., խաղաղապահ ու թ յ ան ոլորտում ՀԱՊԿ-ի հեռանկարները, 28.10.2013թ., <http://razm.info/13827>

¹⁰⁸ Քոթանջյան Հ.Ս., Հաստատ ու թ ե ն ա կ ան շինարար ու թ յ ու ն ը Ղարաբաղում . ԼՂՀ-ն՝ դեֆակտո օրինական ժողովրդավարական պետ ու թ յ ու ն, 2014թ. հոկտեմբերի 1-2, <http://www.aravot.am/2014/07/02/476575/>

հոկտեմբերի 15-ին անցկացվեց նաև «21-րդ դարի տեխնոլոգիաները ՀՀ գինված ուժերի զարգացման գործում. միջազգային համագործակցություն» գիտագործնական համաժողովը, որին մասնակցեցին Կազմակերպության անդամ-պետությունների քարտեզագրման պաշտոնյաներ և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներով զբաղվող հայտնի փորձագետներ¹⁰⁹: Համաժողովի մասնակիցներին ողջունելի ուղերձներով դիմեցին ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Յու. Խաչատրովը և ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Ա.Բադալյանը: Խորհրդաժողովի առաջին՝ «ՀԱՊԿ-ի շահերից բխող տեղեկատվական անվտանգության ռազմավարության մշակման քաղաքական ու տեխնոլոգիական ուղենիշները» խորագրով նիստը նախագահեց և նիստում ելույթ ունեցավ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ, ՀԱՊԿ-ի գիտափորձագիտական խորհրդի անդամ, գեներալ-լեյտենանտ Յայկ Քոթանջյանը: Ելույթներով հանդես եկան նաև ՌԴ անվտանգության խորհրդի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում անվտանգության ապահովման վարչության պետ Ս.Բոյկոն, Ղազախստանի համակարգչային պատահարներին արձագանքման ծառայության պետ Ժ.Ժակոևսկի, ՌԴ, Բելառուսի, ՀԱՊԿ այլ անդամ-պետությունների պաշտոնյաներ և տեղեկատվական անվտանգության ոլորտի փորձագետներ:

ՀԱՊԿ շրջանակներում պարբերական ու շաբաթական է դարձվում Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորմանը: Հակամարտության կարգավորման հարցի կտրվածքով կարելի է առանձնացնել, որ ինչպես ՀԱՊԿ գլխավոր մարմնի (ՀԱԽ-ի) կողմից, այնպես էլ մյուս հաստատությունների տարբեր նսիտերում անդրադարձ է կատարվում հակամարտության խաղաղ կարգավորման պահանջին, սակայն որևէ կոնկրետ գնահատական կամ քաղաքական վերաբերմունք երբևէ չի դրսևորվել: Այդպես, ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները, միջազգային հարաբերությունների օրակարգային հարցերին նվիրված 2012 թվականի մայիսի 15-ի հռչակագրում ու 2014 թվականի

¹⁰⁹ «ArmHiTec-2016» առաջին միջազգային ցուցահանդեսում ներկայացվել են ռազմարդյունաբերական համալիրի նորագույն մշակումները, 14-17 հոկտեմբեր, 2017թ., <http://henaran.am/230292.html>

դեկտեմբերի 23-ի հայ տարարու թյուևում նշել են. «ՀԱՊԿ անդամ պետությունների դեկավարները, վերահաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ աշխատանքների արագ ավարտման կարևորությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, ՅԵԼՍԻՆԿյան եզրափակիչ ակտի հիմնադրույթների հիման վրա, որոնք, մասնավորապես, վերաբերում են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառմանը, տարածքային ամբողջականությանն ու ժողովուրդների ինքնորոշմանը»¹¹⁰: 2013թ. Բիշքեկում կայացած ՀԱՊԿ Արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստն ամփոփվել է միջազգային հարաբերությունների օրակարգային հարցերին նվիրված հայ տարարությամբ, որտեղ նաև նշվել է, որ ՀԱՊԿ անդամ երկրները, վերահաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ աշխատանքների արագ ավարտման կարևորությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, ՅԵԼՍԻՆԿյան եզրափակիչ ակտի հիմնադրույթների հիման վրա, որոնք, մասնավորապես, վերաբերում են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառմանը, տարածքային ամբողջականությանն ու ժողովուրդների ինքնորոշմանը»¹¹¹: 2014թ. նոյեմբերի 13-ին ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը հանդես է եկել Ադրբեյջանի կողմից Լեռնային Ղարաբաղի և Ադրբեյջանի շփման գծի մերձակայքում ուսումնական չվերթ իրականացնող ԼՂՀ ՁՈՒ ուղղաթիռի ոչնչացումը դատապարտող հայ տարարությամբ¹¹², և 2016թ. ապրիլյան պատերազմի առաջին արձագանքում վերջինիս կողմից

¹¹⁰ Заявление глав государств–членов ОДКБ, 23.12.2014, <http://scienceport.ru/news/zayavlenie-glav-gosudarstv-chlenov-odkb/>

¹¹¹ ՀԱՊԿ ԱԳ նախարարները Բիշքեկում անդրադարձել են ԼՂ հիմնախնդրին, 27.05.2013թ., <http://www.ilur.am/news/view/13971.html>

¹¹² Бордюжа Н., Уничтожение вертолета в Нагорном Карабахе создает угрозу нового витка конфликта, 13.11.2014, <http://blognews.am/rus/news/211466/unichtozhenie-vertoleta-v-nagornom-karabakhe-sozdaet-ugrozu-novogo-vitka-konflikta---bordyuzha.html>

կրկին շեշտադրվեց հակամարտությանը խաղաղ ճանապարհով կարգավորելու անհրաժեշտությունը¹¹³: ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի հայտարարությունները պետք է դիտարկել յուրովի նախագուշացում ադրբեջանական կողմին հնարավոր համապատասխան արձագանքների մասին¹¹⁴:

Երբ 2014 թվականի ամռանը Ադրբեջանը հերթական անգամ խախտել էր հրադադարի ռեժիմը՝ այս անգամ ոչ միայն ղարաբաղադրբեջանական, այլ նաև հայ-ադրբեջանական սահմանին՝ թե՛ Տավուշի մարզում, թե՛ ընդհուպ Նախիջևանի ուղղությամբ, ՀԱՊԿ-ի անդամ երկրները իրենց աջակցությունը չհայտնեցին Հայաստանին և չդատապարտեցին Ադրբեջանին: Միայն Ռուսաստանի ջանքերով 2014 թվականի օգոստոսի 8-ին Սոչիում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հովանու ներքո կազմակերպված Սարգսյան-Ալիև հանդիպման արդյունքում հնարավոր եղավ խուսափել լայնամաշտաբ պատերազմից: 2016 թվականին, երբ Հայաստանը նախագահում էր ՀԱՊԿ-ում, ադրբեջանական գործերը, խախտելով 1994 թվականի զինադադարի պայմանները, սանձազերծեցին գործողություններ, որը պատմության մեջ արմատացավ որպես «ապրիլյան քառօրյա պատերազմ»: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը այդ թվականի ապրիլի 4-ին նախագուշացրեց Հայաստանի՝ լայնածավալ ռազմական գործողությունների ներգրավելու մասին, սակայն ՀԱՊԿ-ի անդամ ոչ մի երկիր իր աջակցությունը չհայտնեց Հայաստանին, ավելին՝ Բելառուսը և Ղազախստանը բացահայտ աջակցեցին Ադրբեջանին՝ այդպիսով խախտելով ՀԱՊԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածը՝ «մեկ կամ մի քանի անդամ պետությունների անվտանգության, կայունության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության սպառնալիքի հայտ գալու կամ միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիքի դեպքում անդամ պետություններն անհապաղ գործի են դնում համատեղ խորհրդակցության մեխանիզմը՝ իրենց դիրքորոշումները համակարգելու նպատակով, մշակում և անհրաժեշտ

¹¹³ Бордюжа Н., Ночные события в Карабахе могут привести к крупномасштабному конфликту, 02.04.2016, http://newsarmenia.am/news/nagorno_karabakh/nochnye-sobytiya-v-karabakhe-mogut-privesti-k-kрупnomasshtabnomu-konfliktu-bordyuzha/

¹¹⁴ Քոթանջյան Հ., Հարկ չկա, որ Ռուսաստանը պարիտետային սզբունքներով վերաբերվի Ադրբեջանին, 04.04.2016թ., <http://www.1in.am/1882819.html>

միջոցներ են ձեռնարկում նման անդամ պետություններին օգնություն ցուցաբերելու համար՝ սպառնալիքի վտանգի վերացման նպատակով»¹¹⁵:

Ապրիլյան պատերազմի հենց սկզբից Բելառուսի Յանապետության կատարած քայլերը ոչ միայն հակասում էին ՅԱՊԿ-ի կանոնադրությանը, այլև Բելառուսը բացահայտ աջակցություն էր ցույց տալիս Ադրբեյջանին, որը ՅԱՊԿ-ի անդամ երկիր չէ: Այդ առումով հայ-բելառուսական հարաբերությունների վատթարացումը իր կիզակետին հասավ ապրիլի 2-ին, երբ Բելառուսի արտաքին գործերի նախարարությունը տարածեց հայտարարություն, որում ի թիվս այլ կոչերի Բելառուսը կոչ էր անում կողմերին հարգել միմյանց տարածքային ամբողջականությունը: Յայաստանում Բելառուսի դեսպան Իգոր Նազարովը հրավիրվեց ՅՅ արտաքին գործերի նախարարություն, որտեղ նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը դեսպանին հայտնեց հայ կական կողմի դիրքորոշումը Բելառուսի ԱԳՆ-ի տարածած հայտարարության վերաբերյալ¹¹⁶: Յայ կական կողմի բողոքի նոտայից հետո Բելառուսը մեղմեց իր դիրքորոշումը: Բելառուսի որդեգրած քաղաքականությունը Յայաստանի հանդեպ կարելի է նաև որոշ առումներով կապել Ռուսաստան-Բելառուս հարաբերությունների «ճգնաժամային» փուլով, որը առավել ակնհայտ դարձավ ռուսական ընկերությունների կողմից Բելառուսին գազի մատակարարման գների վերանայման որոշմամբ: Ըստ որոշ արևմտյան քաղաքագետների՝ Ռուսաստան-Բելառուս տնտեսական և քաղաքական հարաբերությունների սառեցումը կարող է հանգեցնել Բելառուսում հեղաշրջման առաջացմանը և Լուկաշենկոյի վարչակազմի՝ Ռուսաստանի համար առավել ցանկալի վարչակազմով փոփոխմանը¹¹⁷:

Ապրիլյան պատերազմի ընթացքում Յայաստանի համար անակնկալ չէր նաև Ղազախստանի որդեգրած դիրքորոշումը: Դեռևս Եվրասիական տնտեսական միությունը անդամակցելու ժամանակ Ղազախստանը

¹¹⁵ Договор о коллективной безопасности. Совершено в г. Ташкенте 15 мая 1992 года в одном подлинном экземпляре на русском языке. МОЦИП ОДКБ, Армения: -<http://www.odkb-armenia.am/doc03.php>

¹¹⁶ Բելառուսի դեսպանին կանչել են ՅՅ ԱԳՆ և տարակուսնաբ հայտնել, 03.04.2016թ., <https://news.am/arm/news/320352.html>

¹¹⁷ Astapenia R., Analytical paper: Belarus-Russia relations after the Ukraine conflict, 01.08.2016, <http://belarusdigest.com/story/analytical-paper-belarus-russia-relations-after-the-ukraine-conflict/>

Հայաստանի հետ հարաբերությունները Երևանում Ադրբեջանին «չվիրավորելու» սկզբունքով: Ապրիլյան պատերազմից հետո օգոստոսի 8-ին Ղազախստանի վարչապետ Բարիմ Մասիմովի նախաձեռնությամբ՝ Երևանում կայանալիք ԵՏՄ վարչապետների հավաքը տեղափոխվեց Մոսկվա: Նույն թվականի ապրիլի 14-ին Ղազախստանի նախագահը Թուրքիայում մասնակցեց «Իսլամական համագործակցություն» կազմակերպության 13-րդ գագաթաժողովին, որի ամփոփիչ փաստաթղթում ի թիվս այլ հարցերի Հայաստանին մեղադրեցին Ադրբեջանի դեմ պատերազմ սանձազերծելու մեջ¹¹⁸:

2014թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Մոսկվայում կայացած ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հերթական նստաշրջանին, որի ընթացքում ընդունվել է միջազգային հարաբերությունների օրակարգային հարցերին նվիրված հայտարարություն, որտեղ, մասնավորապես, նշվել է, որ. «ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները, վերահաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ աշխատանքների արագ ավարտման կարևորությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնադրույթների հիման վրա, որոնք, մասնավորապես, վերաբերում են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառմանը, տարածքային ամբողջականությանն ու ժողովուրդների ինքնորոշմանը»¹¹⁹: Ավելին, նույնիսկ 2016թ. շվեդական գծում տեղի ունեցած մասշտաբային մարտական գործողություններից հետո Էլ հոկտեմբերի 14-ին Երևանում կայացած ՀԱՊԿ գագաթաժողովի շրջանակներում ընդունվեց հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարների գրեթե նույնաբովանդակ

¹¹⁸ FINAL COMMUNIQUE OF THE 13TH ISLAMIC SUMMIT CONFERENCE (UNITY AND SOLIDARITY FOR JUSTICE AND PEACE), ISTANBUL, REPUBLIC OF TURKEY, 14-15 APRIL 2016, <http://www.oic-oci.org/docdown/?docID=14&refID=5>

¹¹⁹ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Ռուսաստանի Ղազնություն, 22.12.2014-24.12.2014թթ., <http://www.president.am/hy/foreign-visits/item/2014/12/22/working-visit-of-president-serzh-sargsyan-to-russian-federation-december-22-24/>

հայ տարարություն¹²⁰: Այդուհանդերձ, այդ բոլոր հայ տարարություններն ունեն իրենց կարևոր նշանակությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տեսլականում՝ հիմք հանդիսանալով հետագա քաղաքական բանակցությունների իրագործման համար¹²¹:

ՀԱՊԿ շրջանակներում առանձնացվում են հավաքական անվտանգության երեք ուղղություններ՝ արևելյան-եվրոպական, կովկասյան և կենտրոնական-ասիական: Նման աշխարհագրական բազմուղղվածությունը փորձագետների կողմից շատ դեպքերում ոչ լիարժեք հիմնավորված եզրահանգումների տեղիք է տալիս այն մասին, որ բացակայում է միասնական անվտանգության համակարգը և, օրինակ, Բելառուսի ու Հայաստանի համար ավելի արդյունավետ կլիներ զարգացնել Ռուսաստանի հետ երկկողմ ռազմական կապերը, այլ ոչ թե ՀԱՊԿ շրջանակներում¹²²:

Հայաստանը Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հիմնադիր անդամ է, և ըստ այդմ՝ իր ռազմական քաղաքականությունն իրականացնում է ինչպես ՀԱՊԿ-ի, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող բոլոր պետությունների շահերը հաշվի առնելով: Անդամակցությունը ՀԱՊԿ-ին Հայաստանի անվտանգության ապահովման քաղաքականության մեկն է, որն իրագործվում է անդամ պետությունների միջև բազմակողմ կապերի միջոցով¹²³: ՀՀ անվտանգության համակարգի հիմնասյուներից են ՀԱՊԿ շրջանակներում Ռուսաստանի հետ համագործակցությունը: Հայ-ռուսական հարաբերությունների խորացմանն են ուղղված բոլոր այն երկկողմ ու բազմակողմ հանդիպումները, որոնք այս կամ այն կերպ վերաբերում են առանձին ոլորտներում այդ հարաբերությունների

¹²⁰ Երևանը հրապարակում է Ղարաբաղի հարցով ՀԱՊԿ գագաթնաժողովի հայ տարարությունը, 18.10.2016թ., <http://www.azatutyun.am/a/28060601.html>

¹²¹ Մինասյան Ս., ԼՂ հակամարտության վերաբերյալ ՀԱՊԿ անդամ երկրների հայ տարարությունը կարևոր փաստ է, 18.10.2016թ., http://newsarmenia.am/am/news/nagorno_karabakh/-LGH-hakamartutyanyan-veraberyal-HAPK/

¹²² Քոչարյան Ս.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 249:

¹²³ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Արտաքին քաղաքականություն, միջազգային կազմակերպություններ, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն, <http://www.mfa.am/hy/international-organisations/CSTO/>

մասով նոր պայմանավորվածություններին, փոխհամագործակցության համար առավել նպաստավոր պայմաններին ստեղծմանը:

ՀԱՊԿ կանոնադրական ընթացակարգերին համապատասխան 2008 թվականին /ներառյալ 2009թ. առաջին կիսամյակը/ և 2015-2016թթ. Կազմակերպությունում նախագահությունը ստանձնել էր Հայաստանի Հանրապետությունը /հայտարարվեց 2015թ. սեպտեմբերի 15-ին Դուշանբեում տեղի ունեցած Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանին/: 2015թ. սեպտեմբերին ՀԱՊԿ ՀԱԽ նիստի ընթացքում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից հնչեցվեցին ՀՀ նախագահության առաջնայնությունները, մասնավորապես.

- ՀԱՊԿ հավաքական ներուժի մեծացում՝ համաձայն Կազմակերպության օրենսդրության և ժառանգորդության սկզբունքի հիման վրա:

- ՀԱՊԿ գործունեության հայեցակարգային հիմքերի և ճգնաժամային արձագանքման համակարգի հետագա զարգացում:

- ՀԱՊԿ գործունեության արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ ասպեկտները, այդ թվում՝ արտաքին քաղաքականության համակարգման կատարելագործման և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման հարցերը:

- ՀԱՊԿ համակարգի ուժերի ու միջոցների կառավարման համակարգի հետագա կատարելագործում, խաղաղապահ ներուժի մեծացում, ռազմատեխնիկական և ռազմատնտեսական համագործակցության խորացում, տարանցման և տեղափոխման լոգիստիկ քաղկացուցչի օպտիմալացում¹²⁴:

Արդեն 2016թ. հոկտեմբերի 14-ին Երևանում կայացած ՀԱՊԿ ՀԱԽ նստաշրջանին, ամփոփելով 2015-2016թթ. նստաշրջանների միջև ՀՀ նախագահությունն ստանձնած ժամանակահատվածի ձեռքբերումները, ՀՀ Նախագահը ներկայացրել է Հայաստանի կողմից առաջադրված առաջնահերթություններին իրագործման վերաբերյալ տեղեկատվությունը՝ նշելով, որ ՀՀ կողմից ՀԱՊԿ-ում

¹²⁴ ՀՀ-ն ստանձնեց ՀԱՊԿ-ում նախագահությունը. Առաջնայնություններից է կառույցի ներուժի մեծացումը, 15.09.2015թ., <http://www.panarmenian.net/arm/news/197385/>

Նախագահության բոլոր առաջնայնություններն իրականացվել են¹²⁵: Նստաշրջանի օրակարգում ընդգրկված ավելի քան երկու տասնյակ հարցերի շրջանակում անդրադարձ է արվել միջազգային իրավիճակին և հավաքական անվտանգության ապահովման արդիական հարցերին, ՀԱՊԿ ՀԱԽ որոշումներով հաստատվեցին մի շարք շարք փաստաթղթեր, այդ թվում «Մինչ 2025թ. ՀԱՊԿ հավաքական անվտանգության ռազմավարությունը», «Միջազգային ախաբեկչության ու ծայրահեղականության հակազդմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ցանկը», «ՀԱՊԿ ձևաչափով ախաբեկչական ճանաչված կազմակերպությունների միասնական ցանկի ձևավորման մասին կանոնակարգը», «ՀԱՊԿ շրջանակում ռազմական տեխնիկայի ստանդարտավորման հայեցակարգը», «Մինչև 2020թ. ժամանակահատվածի համար ՀԱՊԿ անդամ-պետություններին զինված ուժերի համար ռազմական կադրերի համատեղ պատրաստման համակարգի զարգացման հայեցակարգը», «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրման 25-ամյակին և ՀԱՊԿ 15-ամյակին նվիրված միջոցառումների պլանը»:

Որպես այդպիսին՝ պետք է նաև հետևողական լինել ՀԱՊԿ շրջանակներում Հայաստանի անվտանգային քաղաքականության զարգացման տեսլականում, քանզի դրական կողմնորոշիչների հետ զուգահեռ, հատկապես ռազմական քաղաքականության իրագործման դիտանկյունից արժևորելով Կազմակերպության հիմքային նշանակությունը բազմաթիվ ասպեկտներում, պետք է գիտակցել ու շարունակել համադրված իրագործել կոմպլեմենտարության որդեգրված մոտեցումը: Արդարացիորեն տեսակետ է արտահայտվում, որ «ինչպիսին էլ լինի Ռուսաստանի վարքագիծը՝ Հայաստանը պետք է շարունակի անդամակցությունն այդ կառույցին»¹²⁶, չնայած այն հանգամանքին, որ հայ-ռուսական ուղղությունով է պայմանավորված ՀԱՊԿ հետ գործակցության հեռանկարը: Այստեղ ուշադրություն է

¹²⁵ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունը ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանի արդյունքների վերաբերյալ, Ամփոփվել են ՀԱՊԿ Հավաքական Անվտանգության խորհրդի նստաշրջանի արդյունքները, 14.10.2016թ., <http://www.president.am/hy/press-release/item/2016/10/14/president-serzh-sargsyan-meeting-csto-press/>

¹²⁶ Շիրինյան Լ., Մեր երկրում ՀԱՊԿ-ի կարևորությունը խիստ չափազանցված է, 28.10.2016թ., <http://www.mamul.am/am/video/26654853/մեր-երկրում-հասկ-ի-կարևորությունը-խիստ-չափազանցված-է-լ-և-ո-ն-շ-իր-ին-յ-ան>

արժանի հետևյալ կարևոր իրողությունը. կազմակերպության գործունեության անցած տարիների վերլուծությունը վկայում է առանց Ռուսաստանի որևէ էական գործակցության կամ դրան ուղղված հիմնարար քայլի բացակայության մասին, ինչը հանդիսանում է ՀԱՊԿ գործունեության ամենահիմնական բացթողումը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Հարավային Կովկասը շատ կարևոր տեղ է զբաղեցնում ՀԱՊԿ պատասխանատվության սահմանների հարցում, և Հայաստանը, լինելով Կազմակերպության ամենաակտիվ անդամներից մեկը, տարածաշրջանում հանդես է գալիս որպես նրա հիմնական գործընկերն ու հենարանը: Հայաստանի Հանրապետությունն քաղաքականությունը միշտ ուղղված է եղել և ներկայումս էլ ուղղված է Հարավային Կովկասում վերջիններիս դիրքերի հնարավորինս ամրապնդմանը: Սամի խաղաքարտ է Հայաստանի ձեռքում, որը նա կարող է արդյունավետորեն օգտագործել ՀԱՊԿ անդամ ոչ բարյացակամ պետությունների հակահայկական գործողություններին ու հայտարարություններին հակակշռելու համար: ՀԱՊԿ միջամտությունը գրեթե, եթե ոչ լիովին, անհավանական է հայ-ադրբեջանական հակամարտության պայմաններում, կամ էլ կարող է լինել զուտ ձևական: Նման պայմաններում հարց է առաջանում, ինչ քանով է նպատակահարմար շարունակել անդամակցությունը ՀԱՊԿ-ին: ՀԱՊԿ-ին անդամակցությունը ունի առավելություններ, որոնք թվարկեցինք վերևում: Այդ առավելությունները օգտակար են Հայաստանի համար: Սրանով հանդերձ նաև պետք է գիտակցել, որ ՀԱՊԿ-ն չի կարող լինել ՀՀ անվտանգության ամբողջական երաշխավոր:

3.2. Ռազմաքաղաքական երկկողմ գործակցությունը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև

Արդեն նշվեց, որ Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները ունեն ռազմավարական բնույթ: Այդ գործակցությունն առանձնանում է Հայաստանի ազգային անվտանգության համակարգի ձևավորման և գործառման հարցում իր ունեցած դերով ու նշանակությամբ: Հայաստանի և Ռուսաստանի միջև դիվանագիտական հարաբերություններին հաստատումից ի վեր անցած

Ժամանակաշրջանում իրականացվել են բազմաթիվ ու բազմապիսի միջոցառումներ՝ ուղղված կենսագործունեության բոլոր ոլորտներում փոխհամայնական համագործակցության հետևողական զարգացմանը, միանշանակ ներառելով նաև ռազմական, ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական ուղղությունները: Հայ-ռուսական ռազմական փոխգործակցությունը բխում է երկու երկրների երկարամյակ ետ ռազմավարական շահերից և արդի փուլում հասել է բավականին բարձր մակարդակի՝ հիմքում ունենալով անընդհատ ու դինամիկ զարգացման տեսլական: Հայաստանը հետևողական է զարգացնելու երկկողմ հարաբերությունները Ռուսաստանի հետ համատեղ անվտանգության ոլորտներում, հատկապես՝ ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի, Հակաօդային պաշտպանության համատեղ համակարգի (ՀՕՊՀՀ), սահմանների համատեղ պաշտպանության ծրագրերի շրջանակներում:

Հայ-ռուսական ռազմական և ռազմաքաղաքական համագործակցությունը ակտիվորեն իրականացվում է ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ ՀԱՊԿ շրջանակներում: Հայ-ռուսական ռազմական ոլորտի շփումները իրականացվում են ՀՀ և ՌԴ պաշտպանության նախարարությունների միջև երկկողմ համագործակցության նախապես հաստատված տարեկան պլանների հիման վրա, ինչպես նաև արտապլանային տարբերակով ձեռք բերվող պայմանավորվածությունների շրջանակներում: Տարածաշրջանում մրցակցության ակտիվացմանը, անջատողականության աշխուժացմանը զուգընթաց՝ Ռուսաստանը հետևողական քայլեր է ձեռնարկում Հարավային Կովկասում իր դիրքերը ամրապնդելու ուղղությամբ, ինչի պարագայում ավելի է ընդգծվում հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցության նշանակությունը երկու երկրների անվտանգության համար՝ ի հարկե, առանձնացնելով այդ երկրների ընդհանուր անվտանգային քաղաքականության մասշտաբները և դրա իրագործմանն ուղղված հայեցակարգերի զարգացման տեսլականները: Երկու երկրների մասնակցությունը համատեղ անվտանգության ծրագրերին, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության մի շարք երկկողմ պայմանագրերի առկայությունը հիմնավորում են այն փաստը, որ բավականին բարձր է այդ երկրների փոխադարձ վստահության աստիճանը անվտանգության

երաշխավորման կարևորագույն ուղղությամբ զործակցության առումով:

Արդեն նշվեց, որ որպես անցած տարիների երկկողմ արդյունավետ գործակցության արդյունք կարելի է փաստել առավել քան 250 միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական համաձայնագրերի ու պայմանավորվածությունների փաստաթղթային արձանագրումները¹²⁷, որոնց շարքում առանձնառում են պաշտպանական-անվտանգային կառուցակարգերին վերաբերող փաստաթղթերը: 1990-ական թվականների սկզբին, երբ նախկին խորհրդային հանրապետությունները միանգամից անկախացան, դրանց մեծամասնության համար ամենակենսականը դարձան ազգային անվտանգության ապահովման, նաև արդեն բռնկված բախումների կարգավորման հարցերը: Հայաստանի և Ռուսաստանի միջև անվտանգության փոխապահովման, սպառնալիքների չեզոքացման, ռազմական օգնության ցուցաբերման ու համատեղ պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունները սահմանված են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության ու փոխադարձ օգնության՝ 1997 թվականի օգոստոսի 29-ին կնքված պայմանագրի¹²⁸, 1995թ. մարտի 16-ին կնքված՝ Հայաստանում 25 տարի ժամկետով ռուսաստանյան ռազմաբազա ստեղծելու մասին պայմանագրի¹²⁹ (բազան ստեղծվել է 1994թ. սեպտեմբերի 1-ին Անդրկովկասյան ռազմական օկրուգի 127-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հիման վրա) և 2000թ. սեպտեմբերի 27-ին կնքված՝ Համատեղ անվտանգության ապահովման շահերից բխող զինված ուժերի կիրառման համատեղ պլանավորման հարցերի շուրջ համաձայնագրի դրույթներով (խմբավորման 15 տարիների գործունեությունից հետո 14.11.2016թ. ամրագրում ստացավ

¹²⁷ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Արտաքին քաղաքականություն, երկկողմ հարաբերություններ-Ռուսաստան, թարմացված 16.12.2016թ., <http://www.mfa.am/hy/country-by-country/ru/>

¹²⁸ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18532>

¹²⁹ Պարզաբանում. Հայաստանում ՌԴ ռազմաբազա, 04.02.2015թ., <http://www.mediamax.am/am/news/parzabanum/13078/>

խմբավորման իրավաքաղաքական կարգավիճակը¹³⁰): Այդպիսով, հայ-ռուսական ռազմավարական գործակցությունը հանդիսանում է Յայաստանի Յանրապետության ազգային, և առավելապես, պաշտպանական-անվտանգային ապահովման համակարգի բաղկացուցիչ մասը:

2011թ. հոկտեմբերի 23-ին ՅՅ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից Մոսկվա կատարված այցի շրջանակներում ռազմական-ռազմավարական առումով կարևորվեց Յայաստանի Յանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ՅՅ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին՝ 1995 թվականի մարտի 16-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության վավերացումն ու դրա ուժի մեջ մտնելը, ինչի արդյունքում Յայաստանի տարածքում տեղակայված ՌԴ ռազմակայանը շարունակելու է իրականացնել գործառնությունները մինչև 2044 թվականը¹³¹: ՌԴ ռազմակայանի երկար ժամկետով Յայաստանի տարածքում տեղակայման հնարավորությունները քննարկվելու այդ առումով իրատեսական պայմանավորվածություններ էին ձեռք բերվել Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդևի 2010 թվականի օգոստոսին Երևան կատարած այցի ժամանակ¹³², որի արդյունքում նշված պայմանավորվածությունը քաղաքական շրջանակներում լայն քննարկումների արժանացավ: Բացի այդ, ընդլայնվեցին բազայի աշխարհագրական և ռազմավարական պատասխանատվության ոլորտը (եթե մինչ այդ բազայի գործառնությունները սահմանափակվում էին նախկին Խորհրդային Միության արտաքին սահմաններով, ապա արձանագրության ստորագրումից հետո այդ սահմանափակումը համաձայնագրի տեքստից

¹³⁰ Ըստ համաձայնագրի՝ Միացյալ զորախմբի ձևավորումը պայմանավորված է Կովկասյան տարածաշրջանում անվտանգության ապահովման նկատառումներով գործողություններին համաձայնեցման անհրաժեշտությամբ: Յամաձայնագիրը ենթադրում է ՅՅ և ՌԴ Յամատեղ զորախմբի կողմից կողմերից որևէ մեկի նկատմամբ սպառնալիքի (ռազմական հարձակում, ագրեսիա) առկայության պայմաններում համարժեք գործողություններին իրականացում: Աղբյուրը տես ՅՅ և ՌԴ զինված ուժերի միավորված խմբավորման մասին համաձայնագիր. տեղեկանք, 17.11.2016թ., <http://armedia.am/arm/news/42165/hh-ev-rd-zinvats-uzheri-miavorvats-khmbavorman-masin-hamadzaynagir-texekanq.html>

¹³¹ Մոսկվայում ՅՅ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի հետ, 24.10.2011, <http://www.president.am/hy/press-release/item/2011/10/24/news-1874/>

¹³² ՌԴ նախագահ Դ.Մեդվեդևի՝ Յայաստան կատարած պետական այցի արդյունքներով հայ-ռուսական համատեղ հայտարարություն է արվել, 20.08.2010թ., <https://armenpress.am/arm/news/616916/rd-nakhagah-dmedvedevi-hayastan-katarats-petakan-ayci-ardyunqnerov.html>

հանվեց), ինչպես նաև ռուսական կողմը Հայաստանի ռազմական անվտանգությանը համատեղ ապահովելու ու հայկական զինուժն արդիական զինատեսակներով սպառազինմանը սատարելու պարտավորությունն ստանձնեց:

Ատենախոսության նախորդ գլուխներում նշվեց, որ դրական արձագանքներին զուգահեռ հայաստանյան զանգվածային լրատվության միջոցներում կարելի է հանդիպել նաև բացասական կարծիքների, համաձայն որոնց այդ պայմանագիրը ոչ միայն չի համընկնում Հայաստանի ազգային շահերին, այլև զգալիորեն սահմանափակում է ՀՀ ինքնիշխանությանը: Միանշանակ չի կարելի գնահատել հայ-ռուսական պայմանագրի լուսաբանումը նաև ռուսաստանյան տեղեկատվական դաշտում: Ռուսական ՉԼՄ-ները ռազմավարական դաշնակցի հետ հարաբերություններին նվիրված մեկնաբանություններում ավելի քան զուսպ էին¹³³:

Հայաստանում հայ-ռուսական հարաբերությունների շուրջ շարունակաբար ընթացող քննարկումներում շատ է շահարկվում այն թեզը, թե «ռուսական կողմնորոշումը» և մասնավորապես 102-րդ ռազմակայանի ներկայությունը սահմանափակում են ՀՀ ինքնիշխանությանը: Այդ առիթով նկատենք, որ օտարերկրյա ռազմակայանների առկայությունը տարբեր երկրներում, որպես կանոն, ենթադրում է երկուստեք շահեր: Որպես այդպիսին՝ ՀՀ տարածքում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայանի հիմնական նպատակը Հայաստանի ռազմական անվտանգության ապահովումն է թուրքիայի հնարավոր ագրեսիայից: Հայ-ռուսական հարաբերությունների շուրջ ընթացող բանավեճերում հաճախ կարելի է լսել, թե Ռուսաստանի ռազմական ներկայությունը չի ապահովում ԼՂՀ անվտանգությանն Ադրբեյջանի հետ հնարավոր պատերազմում: Անշուշտ, քաղաքական-իրավական տեսանկյունից Արցախյան հակամարտության կարգավորումը ՀՀ-ՌԴ պայմանագրերի հետ առնչություն չունի, և 102-րդ ռազմակայանն իրավասու չէ միջամտելու ԼՂՀ-Ադրբեյջան դիմակայությանը: Սակայն, փաստացի մոտեցումների պարագայում պետք է հաշվի առնել նաև այն, որ ռուսական ռազմակայանի

¹³³ Հարությունյան Գ., Հայ-ռուսական հարաբերությունների արդի փուլը // «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, թիվ 6, 2010, էջ 3-4

վերաբերյալ պայմանագիրն ունի ռազմավարական նշանակություն և նման պայմանագրի առկայությունն արդեն իսկ նվազեցնում է պատերազմի հավանականությունը Արցախի դեմ: Այդ հանգամանքը լավագույնս ըմբռնել են Բաքվում, որտեղ հայտարարում են, թե Մինսկի խմբի անդամ երկրի նախագահի կողմից կնքված պայմանագիրը չափազանց մեծ առավելություններ է տալիս Չայաստանին, և որ նման քայլը վկայում է Ռուսաստանի կողմնակալ դիրքորոշման մասին¹³⁴: Դրան զուգահեռ, ադրբեջանական կողմից պարբերաբար հնչեցվում են տեսակետներ Չայաստանի՝ մոլսուլմանական աշխարհին դեմ գնալու¹³⁵ և վերջինիս կողքին կանգնելու դեպքում նաև Ռուսաստանի համար բարդ երկընտրանքի առջև կանգնելու հնարավորության մասին:

Չայ-ռուսական ռազմավարական համագործակցության առաջնային ուղղություններին է նաև ռազմատեխնիկական բնագավառը, որտեղ հարաբերությունները հիմնարար բնույթն էլ ավելի է ընդգծված: Այսօր հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցությունը Չայաստանի ռազմական անվտանգության ապահովման հուսալի միջազգային երաշխիքներից կարելի է համարել, քանզի ՅՅ զինված ուժերում առկա սպառազինության ու ռազմական տեխնիկայի նշանակալի հատվածը ռուսական արտադրության է:

Երկկողմ ռազմատեխնիկական գործակցությունը զարգանում է 3 հիմնական ուղղություններով. ռազմատեխնիկական աջակցություն, փոխգործակցությունը հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի գործունեության շրջանակներում և պետական արտահանման վարկերի տրամադրումը: ՅՅ պաշտպանության նախարար Վ.Սարգսյանի կողմից որպես նշված ուղղվածության մասով երկկողմ գործակցության զարգացման տեսլական գնահատվում է նաև ք.Գյումրիում հայ-ռուսական ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման առաջնահերթությունը, ինչը հայկական կողմի համար աշխատատեղերի ստեղծման հնարավորությունից բացի կնախատեսի նաև երկուստեք

¹³⁴ Քոչարյան S.S., ՅՅ ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՅ հրատ., 2012, էջ 302:

¹³⁵ Ալիևը հայտարարել է, որ Չայաստանի կողմից կատարվում է դաժանություններ, որոնք ուղղված են ամբողջ մոլսուլման աշխարհի դեմ, 13.06.2017թ., <https://hayacq.com/17908--.html>

շահավետ հնարավորությունն օգտագործելու Չայաստանի աշխարհագրական դիրքը ռուսական արտադրության ռազմական տեխնիկայի ու սպառազինության շուկան ընդլայնելու առումով¹³⁶:

Չայաստանին տրամադրվող ռազմատեխնիկական աջակցությունը իրականացվում է 2003թ. հունվարի 17-ի ռազմատեխնիկական համագործակցության մասին միջկառավարական համաձայնագրին համապատասխան: Չամաձայնագրով հնարավորություն է ստեղծվել իրականացնել ռազմական նշանակության և պաշտպանության ու անվտանգության կարիքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների փոխադարձ մատակարարումներ, մատուցել ռազմատեխնիկական նշանակության ծառայություններ, զարգացնել ռազմական նշանակության արտադրանքի մշակման ու թողարկման հետ կապված ունեցած ձեռքբերումները, ինչպես նաև միմյանց ցուցաբերել ռազմատեխնիկական աջակցություն: Չամաձայնագրի կնքումից շուրջ տաս տարի անց, զարգացնելով նշված պայմանավորվածության դրույթները՝ այն միջկառավարական մակարդակից բարձրացվեց միջպետական մակարդակի և կնքվեց Ռուսաստանի Դաշնության և Չայաստանի Չանրապետության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագիրը: Այդ նոր փաստաթղթով նախատեսվեց, որ երկու երկրների ռազմական նշանակության արտադրանքի փոխանցումը մի երկրի տարածքից մյուսին իրականացվելու է ոչ թե հատուկ վավերագրերի կամ որոշումների ընդունման, այլ կողմերի լիազոր մարմինների կողմից տրվող դուրսգրման փաստաթղթերի միջոցով: Այսինքն՝ ռազմական նշանակության արտադրանքի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի հայաստանյան գնորդը կարող է արտադրանքը գնելու բանակցությունները վարել անմիջապես ռուսաստանյան արտադրող ընկերության հետ ու հետևաբար գնումը կատարել անմիջապես արտադրողից, ավելի էժան գներով ու առանց միջնորդի: Նույնը վերաբերում է նաև ռուսաստանյան գնորդներին¹³⁷:

¹³⁶ Саргсян В., «Возобновление войны станет серьезнейшей угрозой», Министр обороны Армении рассказал о сотрудничестве с Москвой и НАТО, 21 декабря 2016, <https://lenta.ru/articles/2016/12/21/sargsyan/>

¹³⁷ ՌԴ Դաշնային խորհուրդը հաստատեց հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության պայմանագիրը, 25.06.2013թ., <http://razm.info/47036>

Ռազմատեխնիկական համագործակցության հարցերով հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի գործունեության հետ կապված հարկ է նշել, որ հանձնաժողովը ստեղծվել է այդ ոլորտի գործակցությանն առնչվող խթանների արագ և արդյունավետ կանոնակարգման նպատակով և հատկապես վերջին շրջանում բավականին ակտիվ գործունեություն է ծավալել: Ռուսական սպառազինության մատակարարման արդիական հարցերը, ինչպես նաև ռուսական և հայկական ձեռնարկությունների պաշտպանական-արդյունավետ համալիրների միջև համագործակցության զարգացումը պարբերաբար ուսումնասիրվում է միջկառավարական հանձնաժողովի կողմից¹³⁸: Մասնավորապես, հանձնաժողովի կողմից պարբերաբար քննարկվում են ՀՀ զինված ուժերի մինչև 2020թ. զարգացման պլանի հետևանքների միջակայքը և հայ-ռուսական ռազմական համագործակցության շրջանակներում դիտարկվող փաստացի բոլոր խնդրահարույց հարցերը: Ներկա դրությամբ կայացել են հանձնաժողովի արդեն իսկ թվով 11 աշխատանքային ծավալուն նիստեր, որոնց ընթացքում միջոցառումներ են անցկացվել՝ ուղղված ՀՀ պաշտպանության նախարարության և Ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության միջև կնքված փոխընկալման հռչակագրի դրույթների իրագործմանը¹³⁹: Որպես այս գործակցության հիմնական նպատակ կարելի է առանձնացնել գործակցությունը Հայաստանի տարածքում սպառազինության ու ռազմական տեխնիկայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման համատեղ կազմակերպությունների ու մասնագիտացված ծառայությունների կենտրոնների ստեղծման ուղղությամբ (ռուսական արտադրության ծանր հրետանային տեխնիկայի և դրանց շարժիչների նորոգում, հակաօդային պաշտպանության միջոցների, ՄԻ տեսակի ուղաթիռների, ինչպես նաև ՌԻԱԶ մակնիշի ավտոմեքենաների համալիր սպասարկման ծառայություններ և այլն): Կարևոր

¹³⁸ Կշարունակելնք ջանքերը՝ ԼՂ հարցում կողմերի դիրքորոշումները մերձեցնելու ուղղությամբ. Իվան Կոլիկին, 10.02.2017թ., <http://www.aravot.am/2017/02/10/854491/>

¹³⁹ Мнацаканян А., Геополитическая роль Армении в контексте интересов Российской Федерации на Южном Кавказе, 28.09.2013, <http://ta.am/геополитическая-роль-армении-в-контексте-интересов-российской-федерации-на-южном-кавказе/2013/09/28>

առաջընթացի արձանագրում էր նաև այն, որ 2013թ. հոկտեմբերին Երևանում «Կամազ» ընկերությունների խումբը բացեց առևտրի և սպասարկման կենտրոն՝ հիմնականում նպատակ հետապնդելով սպասարկել ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական և կրկնակի նշանակության տեխնիկան, որը կառուցված է «Կամազ» մակնիշի տրանսպորտային միջոցների հիմքի վրա¹⁴⁰: Իսկ ավելի ուշ՝ 2016թ. հոկտեմբերին, Երևանում ռուսական ռազմատեխնիկայի լավագույն նմուշների ցուցադրության համար լավ հնարավորություն դարձավ Սպառազինությունների և պաշտպանական տեխնոլոգիաների ArmHiTec-2016 առաջին միջազգային ցուցահանդեսը¹⁴¹:

Ինչ վերաբերում է պետական արտահանման վարկերի տրամադրման հարցին, ապա այդ մոտեցումը կիրառվում է վերոնշյալ միջկառավարական համաձայնագրի դրույթներին համապատասխան, և այդ գործընթացում արդեն իսկ ներգրավված են ՌԴ ռազմարդյունաբերական համալիրի հիմնարար դերակատարություն ունեցող շուրջ 25 կազմակերպություններ: Հայկական կողմի համար նշանակալի է նաև այն արտոնությունը, որ պետական վարկավորման շրջանակներում ռազմական նշանակության արտադրանքը տրամադրվում է ռուսական ներքին, ազգային սպառման գնային քաղաքականության համարժեք, ինչը հանդիսանում է նաև 2013թ. ՀՀ և ՌԴ նախագահների կողմից հաստատված Հայաստանին ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու մասին երկարաժամկետ ծրագրին¹⁴² համապատասխան

¹⁴⁰ ԿԱՄԱԶ-ի Երևանում բացված սպասարկման կենտրոնը կկատարի ՊՆ և մասնավոր հատվածի պատվերներ, 04.10.2013թ., <https://armenpress.am/arm/news/735509/noviyiy-centr-obsluzhivaniya-kamaz-v-erevane-budet-osushchestvlyat.html>

¹⁴¹ Միջոցառումը կոչված է աջակցել Հայաստանի Չինված ուժերի, անվտանգության մարմինների և իրավապահ մարմինների արդիականացմանը և տեխնիկական վերազինմանը, դրանց մարտունակության և արդյունավետ գործունեության բարձրացմանը, ժամանակակից միջազգային ռազմատեխնիկական մշակումների ձեռքբերումների ուսումնասիրմանը: Աղբյուրը տես Երևանում բացվել է «ArmHiTec-2016» առաջին միջազգային ցուցահանդեսը, 13.10.2016թ., <http://newsarmenia.am/am/news/analytics/-armhitec-2016-Yerevan/>

¹⁴² Ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագրով լայն հնարավորություններ ստեղծվեցին հայկական կողմի համար՝ Ռուսաստանի պաշտպանական ձեռնարկություններում ներքին գներով սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման համար: Լրացուցիչ տես ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի մամուլի ասուլիսը բանակցությունների արդյունքների վերաբերյալ, 02.12.2013թ.,

(կարելի է նաև հետևողությամբ անել, որ ռուսական կողմը նման մարտավարության մեջ փորձում է պահպանել տարածաշրջանում առկա ուժերի հավասարակշռությունը՝ ի համեմատ Ադրբեյջանի հետ ռազմական նշանակության միջարքապրանքատեսակներ վաճառելու):

Վարկավորման արտոնության հարցը քննարկվեց նաև 2015թ. սեպտեմբերի 7-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի՝ Մոսկվա կատարած աշխատանքային այցի շրջանակներում, երբ ՌԴ իր գործընկերոջ՝ Վ. Պուտինի հետ հանդիպման ընթացքում քաղաքական, տնտեսական և այլ բնույթի հարցեր քննարկելուց զատ, շոշոփվեցին նաև միջազգային, տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող հիմնահարցեր: Հայաստանի համար այդ առումով կարևոր էր Ռուսաստանի կողմից 200 միլիոն դոլլարի վարկի տրամադրումը¹⁴³: Այդ գումարները թույլ կտան թարմացնելու ՀՀ զինված ուժերի զորանոցը նոր սպառազինությամբ: Հարցի արդիականությունը կրկին ընդգծվեց Ադրբեյջանի կողմից ռազմական բյուջեի պարբերաբար մեծացման և Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ու հայ-ադրբեյջանական սահմանին լարվածության սրման պայմաններում: Ավելին, մասնագիտական շրջանակներում ընդգծվում է, որ «Ռուսաստանի Դաշնության կողմից «Իսկանդերի» տրամադրումը բխում է հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունների էությունից և կիրառական տեսանկյունից հանգեցրել է այդ գեներալ տրամադրմանը»¹⁴⁴: Ռուսական կողմի ձևակերպումներում նույնպես նշվում է, որ նման ռազմական սպառազինության տրամադրումը Հայաստանին իր հիմքում ունի բարեկամական ու դաշնակցային հարաբերությունների ամրապնդման մարտավարություն:

Հաշվի առնելով Հարավկովկասյան տարածաշրջանում աշխարհաքաղաքական ու անվտանգային բարդ և որոշակի իմաստով նաև

<http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2013/12/02/president-serzh-sargsyan-press-conference-with-the-president-of-russian-federation/>

¹⁴³ Կայացել են հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցությունները, 07.09.2015թ., Հայաստանի Հանրապետության նախագահի Ելույթից, Մոսկվա, <http://www.president.am/hy/press-release/item/2015/09/07/President-Serzh-Sargsyan-meeting-with-Vladimir-Putin-President-of-Russia/>

¹⁴⁴ Քոթանջյան Հ., «Իսկանդերը» թույլ է տալիս պատերազմի վերսկսման պատասխանատվությունն ավելի լրջորեն դնել հակառակորդի ուսերին, 27.09.2016թ., <http://www.tert.am/am/news/2016/09/27/qotanjyan/2145453>

անկանխատեսելի իրավիճակները՝ Հայաստանի Հանրապետությանը Ռուսաստանի Դաշնության հետ ստեղծել է մշտապես գործող համատեղ ուժեր, ինչպիսին ՀՀ զինված ուժերի և ՌԴ զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորումն է: 2016թ. նոյեմբերի 27-30-ը ՀՀ պաշտպանության նախարարի Մոսկվայի այցի ընթացքում կնքվեց միջպետական նշանակության համաձայնագիր Միացյալ խմբավորման (2(ու)ՄԽ)¹⁴⁵ վերաբերյալ, որով նաև ամրագրվեց այդ խմբավորման նորմատիվ իրավական կարգավիճակը (հինգ տարի ժամկետով՝ հետագա հնգամյա ժամանակահատվածներով ինքնաբերաբար երկարաձգելու հնարավորությամբ): Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը 2017 թվականի հունիսի 26-ին ստորագրել է Հայ-ռուսական միացյալ զորախմբի մասին համաձայնագրի վավերացման օրենքը, որին Պետդոման և Դաշնության խորհուրդը հավանության են տվել, համապատասխանաբար, հունիսի 14-ին և 19-ին¹⁴⁶: Մինչդեռ հայկական կողմը կառավարության հունիսի 20-ի նիստի ընթացքում միայն հավանության է արժանացրել համաձայնագիրը վավերացնելու մասին որոշման նախագիծը¹⁴⁷, որից հետո այն ներկայացվելու է ՀՀ Ազգային ժողով և ընդունվելուց հետո՝ ՀՀ Նախագահի վավերացմանը:

Նորմատիվային-իրավական բազայի կատարելագործման անհրաժեշտությանը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ գործող փաստաթղթերը (2000 թվականի սեպտեմբերի 27-ի «Համատեղ անվտանգության ապահովման շահերից բխող զորքերի (ուժերի) համատեղ կիրառման պլանավորման հարցերով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Համաձայնագիրը» (որը վերաբերում է բոլոր տեսակի, այդ թվում՝ ՀՕՊ

¹⁴⁵ Որպես այդպիսին՝ Միացյալ խմբավորումը իր մեջ ներառում է ՀՀ և ՌԴ զինված ուժերի կառավարման մարմինները և զորքերը (ուժերը), ինչպես նաև երկու կողմերի այլ զորքերը, զինվորական կազմավորումներն ու մարմինները, որոնք ծավալված են տարածաշրջանում ագրեսիայի անմիջական սպառնալիքի ժամանակաշրջանում կամ պատերազմի ժամանակ հնարավոր ագրեսիայի հետմղման համար և պլանավորված են կիրառվելու միացյալ հրամանատարության ներքո՝ միասնական մտահղացման և պլանի համաձայն:

¹⁴⁶ Путин подписал закон об Объединенной группировке войск Армении и России, 26.07.2017, <http://www.rbc.ru/rbcfreenews/5978dc8c9a794717017f30cb>

¹⁴⁷ ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 20-ի նիստի օրակարգի 18-րդ կետը, <https://www.e-gov.am/sessions/archive/2017/07/20/>

զորքերին/ուժերին¹⁴⁸), Չ(ու)ՄԽ հրամանատարին ուղղված դիրեկտիվային փաստաթղթերը) սահմանում էին ռազմաքաղաքական իրավիճակի վերլուծությանը, Չ(ու)ՄԽ կազմը և այն նախապես (խաղաղ ժամանակաշրջանում) պլանավորման կիրառման հետ կապված խնդիրները: Նման փոխհարաբերությանների հիմքերում չկային միջազգային փաստաթղթերի կարգավիճակով կանոնակարգումներ: Բացակայում էին նորմատիվ-իրավական բազայի այնպիսի փաստաթղթեր, որոնք կսահմանեին Չ(ու)ՄԽ կազմավորման և գործունեության, ինչպես նաև այն կիրառելու որոշման ընդունման և իրականացման հետ կապված ընթացակարգերը¹⁴⁹:

Բացի այդ, հատկանշական էր, որ Չալաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հայ-ռուսական գործակցության ապահովման նպատակով ստեղծված միացյալ խմբավորման ուժերն ու միջոցները մարտական պատրաստականության բարձր աստիճանների բերելու, ազգային բաղադրիչները՝ միացյալ հրամանատարությանը վերանթակայեցնելու, խմբավորումը ծավալելու և կիրառելու համար առանձնացվեց նշված համաձայնագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող՝ «Չայաստանի Չանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման մասին» կանոնակարգի ընդունումը¹⁵⁰:

Ուշագրավ է այն պայմանավորվածությունը, որ խաղաղ ժամանակ Միացյալ խմբավորման կիրառման համառոտ պլանավորումն իրականացվում է նախապես՝ ՉՉ և ՌԴ ռազմաքաղաքական ղեկավարության կողմից, իսկ ագրեսիայի անմիջական սպառնալիքի ժամանակաշրջանում և պատերազմի ժամանակ ՉՉ և ՌԴ զինված ուժերի միջև փոխգործակցությունը կազմակերպելու համար նախատեսվում է օպերատիվ խմբեր ուղարկել ՌԴ Չարավային ռազմական օկրուգի շտաբ և ՉՉ զինված ուժերի գլխավոր շտաբ: Յետևաբար, խաղաղ ժամանակ ՉՉ

¹⁴⁸ ՉՉ և ՌԴ զինված ուժերի միավորված խմբավորման մասին համաձայնագրի տեղեկանք, 17.11.2016թ., <http://armedia.am/arm/news/42165/hh-ev-rd-zinvats-uzheri-miavorvats-khmbavorman-masin-hamadzaynagir-texekanq.html>

¹⁴⁹ Տոնոյան Դ., Պատերազմի դեպքում Միացյալ զորախմբի հրամանատարին կնշանակեն Չայաստանի և Ռուսաստանի գլխավոր հրամանատարները, 21.11.2016թ., http://www.arminfo.info/full_news.php?id=23049&lang=1

¹⁵⁰ Չայ-ռուսական միացյալ զորախմբի պայմանագիրն ու հիմնական թեզերը, 12.12.2016թ., <http://uicarmenia.org/wp-content/uploads/2016/12/Hamadzaynagir-Miacyal-zorakhumb-arm.pdf>

զինված ու ժերի կառուցվածքում, ՀՀ ՉՈՒ ներկայացուցչների թվակազմից կրճատ կազմով գործում է Միացյալ խմբավորման հրամանատարությունը: Ագրեսիայի անմիջական սպառնալիքի և պատերազմի ժամանակ Միացյալ խմբավորման հրամանատարը ենթարկվում է ՀՀ ՉՈՒ գլխավոր շտաբի պետին կամ ՌԴ Չարավային զինվորական օկրուգի հրամանատարին:

Ըստ էության, միացյալ զորախմբավորումը գոյություն ուներ վաղուց, սակայն համաձայնագրով դրան տրվում է իրավաքաղաքական կարգավիճակ: Սերգեյ Մինսայանը այս առնչությամբ նշել է, որ նման զորախմբի ներկայությունը կարող է ավելացնել հնարավորություններ Հայաստանի՝ թուրքական սահմանի ուղղությամբ, քանի որ ռուսական ռազմաքաղաքական տեղակայված է Գյումրիում, և թուրքիայից սահմանն ավելի երկար է: Ըստ քաղաքագետի՝ «Հայաստանի շահերից է բխում՝ ունենալ ինչ-որ ռազմախումբ, որը կկարողանա նաև թուրքական ուղղությամբ գործողություններ իրականացնել»՝ հավելելով, որ խմբավորումը կարող է օգտագործվել նաև Տավուշի մարզում, Նախիջևանի ուղղությամբ, չնայած գլխավոր նպատակը թուրքական ուղղությունն է¹⁵¹: Այդ հանգամանքը լավագույնս ըմբռնել են Բաքվում, որտեղ հայտարարում են, թե Մինսկի խմբի անդամ երկրի նախագահի կողմից կնքված պայմանագիրը չափազանց մեծ առավելություններ է տալիս Հայաստանին, և որ նման քայլը վկայում է Ռուսաստանի կողմնակալ դիրքորոշման մասին¹⁵²:

Տարածաշրջանային անվտանգության երաշխավորման համատեղ իրականացվող գործընթացների շարքում կարելի է առանձնացնել նաև ևս մի ուղղություն, այն է՝ 2015 թվականի դեկտեմբերի 23-ին Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվեց «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագիրը: Համաձայնագրով նախատեսվում է,

¹⁵¹ Սկզբունքորեն լուրջ բաներ չեն փոխվի. Սերգեյ Մինսայանը ստեղծվելիք հայ-ռուսական ՉՈՒ միացյալ խմբավորման մասին, 21.08.2016թ., <http://www.tert.am/am/news/2016/08/21/sergey-minasyan/2110311>

¹⁵² Քոչարյան Տ.Տ., ՀՀ ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 302

որ հաշվի առնելով տարածաշրջանում Հայաստանի և Ռուսաստանի տարածքների անջատվածությունը, հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի կազմում ՀՀ պետական սահմանի ներքո առանձնացվում է Հավաքական անվտանգության առանձին շրջանի հակաօդային պաշտպանության միավորված համակարգ, որի համատեղ գործողությունների կառավարումը, համաձայն 6-րդ հոդվածի 3-րդ մասի, իրականացնում է ՀՀ ՉՈՒ հակաօդային պաշտպանության զորքերի պետը (համակարգի հետկապված հարցերով ՀՀ ՉՈՒ ՀՕՊ զորքերը ենթարկվում են ՀՀ ՉՈՒ գերագույն հրամանատարին): Նշված մոտեցման համաձայն՝ սահմանափակ, այլ ոչ թե միասնական համակարգ է, այսինքն՝ ՀՀ ՉՈՒ հակաօդային պաշտպանության զորքերը պահպանում են իրենց ինքնուրույնությունը:

Խաղաղ ժամանակ Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ միավորված համակարգը կատարում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ տարածաշրջանում հակաօդային պաշտպանության մարտական հերթապահության կազմակերպումը և իրականացումը, համակարգի զորքերի մարտական կառավարման համակարգը, ինչպես նաև սպառազինությունն ու ռազմական տեխնիկան կիրառման համար մշտապես պատրաստվածության մեջ պահելը, ՀՕՊ տարածաշրջանային համակարգերի կազմի մեջ մտնող այլ զորքերի հետ փոխգործակցությունը: Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգը նախատեսված է գործածել միայն ագրեսիայի անմիջական սպառնալիքի և պատերազմի ժամանակ: Համաձայնագիրը հնարավորություն է տալիս օգտագործելու ՌԴ ՉՈՒ օդատիեզերական զորքերի հնարավորությունները՝ ընդհուպ մինչև միջուկային զենքի կիրառում: ՌԴ ՉՈՒ օդատիեզերական ուժերն ունեն արբանյակային համակարգ, որը ՀՀ տարածքում կարող է օգտագործվել ի շահ ՀՀ ՉՈՒ ՀՕՊ զորքերի: Ռուսական կողմն ունի նաև հսկման համակարգեր, որոնք նույնպես կարող են կիրառվել ի շահ ՀՀ ՉՈՒ ՀՕՊ զորքերի¹⁵³:

¹⁵³ Համաձայնագրի 1-ին հոդվածով «Հավաքական անվտանգության առանձին շրջան» հասկացությունը բնորոշվում է որպես Հայաստանի Հանրապետության տարածքի և օդային տարածության սահմաններում տարածաշրջանի մաս: Այդ իսկ

Հայ -ռուսական ռազմական համագործակցության համատեքստում կարևոր ու հեռանկարային ուղղություն է հանդիսանում նաև ներմասնագիտական գինվորական կադրերի պատրաստումը, որն իրականացվում է ՀԱՊԿ անդամ-պետությունների գինված ուժերի համար գինվորական կադրերի պատրաստման մասին համաձայնագրի շրջանակներում: Այնհայտ է որ, 21-րդ դարի գիտատեխնիկական և տեխնոլոգիական հարձույթն զարգացումներն անմիջապես ազդում են ռազմական գիտության, մարտական գործողությունների բնույթի և դրանց վարման տեսության վրա, ու չնայած որ, ժամանակակից գինված ուժերը համալրվում են արդի տեխնոլոգիաների հիման վրաստեղծված սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, անխտիր բոլոր պատերազմներում միշտ էլ վճռորոշ է եղել մարդկային գործունը՝ առաջին հերթին գրագետ ու խելացի, խիզախ որոշումներ կայացնել ու ունակ հրամանատարը և գինվորը՝ իր բարձր մարտական և բարոյահոգեբանական պատրաստվածությամբ:

Հաշվի առնելով ռազմակրթական ոլորտի առանձնահատկությունները, ժամանակակից սպայի կերպարի ձևավորման ու ազգային արժեհամակարգի վրա հիմնված ռազմական կրթության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, պլանավորվում և իրականացվում են լայնածավալ միջոցառումներ՝ ուղղված սպայական կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացմանը, կրթության շարունակականության ապահովմանը և ռազմական կրթության ոլորտում եռաստիճան կրթական համակարգի ներդրմանը: ՉՈՒ մարտունակության առավել ամրապնդման նպատակով իրագործվում է պաշտպանության բնագավառում միջազգային ակտիվ համագործակցության քաղաքականությունը, ներառյալ՝ սպայական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, ինչպես ՀԱՊԿ, այնպես էլ ՆԱՏՕ-ի անդամ երկրների և այլ գործընկեր պետությունների ռազմաուսումնական հաստատություններում:

պատճառով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում նշված համաձայնագիրը չի գործում: Լրացուցիչ տես Տեղեկանք «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագրի վերաբերյալ, Հայ Զինվոր ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ www.hayzinvor.am/39647.html

ՀՀ ՊՆ ռազմաուսուցման հաստատություններում իրականացվում է միայն մարտավարական և օպերատիվ մակարդակներում կրթություն, այն է՝ բակալավրի որակավորմամբ ՉՈՒ կրտսեր սպայակազմի համար թվով 17 մասնագիտություններով և մագիստրոսի որակավորմամբ ավագ սպայակազմի համար մեկ մասնագիտությամբ: Մինչդեռ բարձրագույն սպայական կազմի ռազմավարական մակարդակի կրթությունը կազմակերպվում է դաշնակից ու գործընկեր երկրների ռազմական ակադեմիաներում, համալսարաններում և պատերազմի ու հրամանատարաշտաբային քոլեջներում:

ՀԱՊԿ անդամ-պետությունների զինված ուժերի համար զինվորական կադրերի պատրաստման մասին վերոնշյալ համաձայնագրի շրջանակներում ռազմավարական կրթության նշված ձևաչափի հիմնական նպատակներն ու խնդիրները կազմակերպության անդամ-պետությունների զինված ուժերի, այլ գորքերի և զինվորական հաստատությունների համար զինվորական կադրերի պատրաստման միասնական ձևաչափի մշակումն ու զարգացումն է՝ հիմքում ունենալով պահանջարկ ունեցող մասնագիտությունները և նեղ մասնագիտացումները: Կարևոր է ընդգծել, որ այդ կրթական գործընթացը կազմակերպվում է ամբողջապես անհատույց հիմքերով: Այն է՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը գործուղում է զինծառայողներին սովորելու ՌԴ պաշտպանության նախարարության համակարգի առաջատար ռազմաուսուցման հաստատություններում զինվորական խորացված կրթություն ստանալու սկսած 2006 թվականից, ինչը հաստատվում է և ֆինանսավորվում է անվճար հիմունքներով՝ համաձայն տարեկան հատկացվող քվոտաների:

Ամփոփելով անցած տարիների զարգացումները՝ կարելի է ընդհանրացնել, որ հայ-ռուսական ռազմավարական համագործակցության համակարգում առանցքային դեր ունի ռազմական-ռազմաքաղաքական բնագավառը: Հայաստանի շահերի տեսանկյունից այդ համագործակցությունն ուղղված է հետևյալ հիմնարար խնդիրներին՝ լուծմանը, այն է՝ ՀՀ զինված ուժերի ռազմական և ռազմատեխնիկական կարիքների ապահովումը, ինչպես նաև տարածաշրջանում ուժերի հարաբերական հաշվեկշռի պահպանումը:

Յայ աս տան -Ռու ս աս տան ո ազ մ ակ ան հ ամ ա գ ո թ ծ ակ ց ու թ յ ան վ եր ա ք եր յ ալ Յայ աս տան ի մ ո տ ե ց ու մ ն եր ը ար տ ա հ ա յ տ վ ու մ ե ն հ ե տ ն յ ալ դ ր ու յ թ ն եր ո վ .

- հ այ -ռ ու ս ակ ան ո ազ մ ակ ան հ ամ ա գ ո թ ծ ակ ց ու թ յ ու ն ն ու ղ ղ վ ա ծ չ է եր թ ո թ դ եր կ ր ն եր ի դ ե մ և ծ առ ա յ ու մ է մ ի ա յ ն Յայ աս տան ի ան վ տ ան գ ու թ յ ան ա պ ս հ ո վ մ ան ը ,

- հ այ -ռ ու ս ակ ան ո ազ մ ակ ան հ ամ ա գ ո թ ծ ակ ց ու թ յ ան զ ար գ ա ց ու մ ը և , մ աս ն ա վ ո թ ա պ ե ս , ո ու ս ակ ան ո ազ մ ակ ա յ ան ի տ ե ղ ա ք ա շ խ ու մ ը Յայ աս տան ու մ ն ա պ ս տ ակ ու ն ի , ո թ ա պ ե ս կ ար և ո թ տ ար թ եր ի ց մ ե կ ը , ա պ ս հ ո վ ե լ Յայ աս տան ի ան վ տ ան գ ու թ յ ու ն ը տ ար ա ծ ա շ թ ջ ան ու մ պ ս տ մ ակ ան ո թ ե ն և ք ա ղ ա ք ակ ան ո թ ե ն ձ և ա վ ո թ վ ա ծ ն եր կ ա ի թ ո ղ ու թ յ ու ն ն եր ի պ ա յ մ ան ն եր ու մ ,

- Յայ աս տան ը կ ար և ո թ ու մ է Ռ ու ս աս տան ի ն եր կ ա յ ու թ յ ու ն ը Յ ար ա վ ա յ ի ն Կ ո վ կ աս ու մ ` ա յ ն դ ի տ ար կ ե լ ո վ ո թ ա պ ե ս թ ու թ ք ա դ թ ե ջ ան ակ ան ո ազ մ ա ք ա ղ ա ք ակ ան դ ա շ ի ն ք ի ն հ ա վ աս ար ակ շ ո ո ղ գ ո թ ծ ո ն . Թ ու թ ք ի ան և Ա դ թ ե ջ ան ը վ ար ու մ ե ն Յայ աս տան ի մ ե կ ու ս ա ց մ ան ը և տ ար ա ծ ա շ թ ջ ան ու մ ք ա ժ ան ար ար գ ծ եր ի առ ա ջ ա ց մ ան ը ն ա պ ս տ ակ ա ու ղ ղ վ ա ծ ք ա ղ ա ք ակ ան ու թ յ ու ն , ի ն չ ը , ո թ ո շ ակ ի հ ան գ ամ ան ք ն եր ի առ կ ա յ ու թ յ ան պ ա յ մ ան ն եր ու մ հ ղ ի է Յայ աս տան ի ան վ տ ան գ ու թ յ ան ն կ ս տ մ ամ ք հ ն ար ա վ ո թ ս պ առ ն ալ ի ք ի վ եր ա ծ մ ան վ տ ան գ ո վ ,

- Ռ ու ս աս տան ի հ ե տ ո ազ մ ակ ան հ ամ ա գ ո թ ծ ակ ց ու թ յ ան փ ս ս տ ը չ ի ք ա ց առ ու մ Յայ աս տան ի ան վ տ ան գ ու թ յ ան հ ամ ակ ար գ ի մ յ ու ս կ ար և ո թ ք ա ղ ա դ թ ի չ ն եր ի ` ա յ լ պ ե տ ու թ յ ու ն ն եր ի և մ ի ջ ազ գ ա յ ի ն կ ազ մ ակ եր ար ու թ յ ու ն ն եր ի հ ե տ ո ազ մ ա ք ա ղ ա ք ակ ան ո լ ո թ տ ու մ ծ ա վ ալ ա ծ հ ար ա ք եր ու թ յ ու ն ն եր ի ակ տ ի վ զ ար գ ա ց ու մ ը : Յայ -ռ ու ս ակ ան հ ամ ա գ ո թ ծ ակ ց ու թ յ ու ն ը չ պ ե տ ք է ը ն կ ալ վ ի ո թ ա պ ե ս խ ո չ ը ն դ ո տ ն Ա Տ Օ -ի հ ե տ « Գ ո թ ծ ը ն կ եր ու թ յ ու ն հ ան ու ն խ ա ղ ա ղ ու թ յ ան » ծ թ ա գ թ ի , Յայ աս տան - Ա Մ Ն , Յայ աս տան ի ու ե վ թ ո պ ակ ան մ ի շ ար ք եր կ ր ն եր ի հ ե տ եր կ կ ո ղ մ շ թ ջ ան ակ ն եր ու մ ակ տ ի վ հ ամ ա գ ո թ ծ ակ ց ու թ յ ու ն ծ ա վ ալ ե լ ու հ ամ ար ,

- Յայ աս տան ը դ ր ակ ան ն եր գ ր ա վ վ ա ծ ու թ յ ան է ձ գ տ ու մ մ ի ջ ազ գ ա յ ի ն հ ար ա ք եր ու թ յ ու ն ն եր ի ք ո լ ո թ ու ղ ղ ու թ յ ու ն ն եր ո վ , ի ն չ ն ար տ ա ք ի ն հ ար ա ք եր ու թ յ ու ն ն եր ի աս պ ար ե գ ու մ պ ե տ ակ ան շ ա հ եր ի առ ա վ ե լ ար դ յ ու ն ա վ ե տ ի թ ակ ան ա ց մ ան հ ի մ ն ակ ան գ ր ա վ ակ ան ն եր ի ց է և ք խ ու մ է պ ե տ ու թ յ ան ո թ դ ե գ ր ա ծ ար տ ա ք ի ն ք ա ղ ա ք ակ ան ու թ յ ան փ ո խ լ ր ա ց մ ան

սկզբունքից: Ուստի, եվրատլանտյան ուղղությամբ համագործակցությունն ընդլայնելու Չայաստանի ձգտումները Ռուսաստանի կողմից չպետք է ընկալվեն որպես իր հետնազմական համագործակցության ու Չավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության տրամաբանությանը հակասող քայլեր,

- ՆԱՏՕ-ՌԴ հարաբերությունների որոշակի մերձեցումը ավելի է ընդլայնում համապարփակ արտաքին քաղաքականության վարելու հնարավորությունները, քանի որ նման մերձեցումը մեղմում է հնարավոր լարվածության առաջացումը տարածաշրջանում և նվազեցնում է դրա շահարկման հնարավորությունները: Սակայն վերջերս նկատվող ՆԱՏՕ-ՌԴ հարաբերություններում որոշակի անորոշությունը, ինչպես նաև դաշինքի հետագա ընդլայնման հեռանկարի հանդեպ ՌԴ կոշտ դիրքորոշումը կարող են որոշակի սահամանափակումներ առաջ բերել վերոհիշյալ հարցերում:

Ենթադրելի է ամփոփել այն հետևություններ, որ ներկայումս Չայաստանը և Ռուսաստանը հստակ սահամանել են իրենց նազմական համագործակցության գլխավոր ուղենիշները: Չայ-ռուսական նազմական համագործակցության վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն ապահովում է ՀՀ ՁՈԻ նազմական և նազմատեխնիկական կարիքները և հանդիսանում է ՀՀ նազմական անվտանգության ապահովման համակարգի կարևոր բաղադրիչը: Միաժամանակ, Չայաստանի կողմից փոխլրացման հռչակված սկզբունքին համահունչ` պետք է հաշվի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ Ռուսաստանի հետ նազմաքաղաքական գործակցության համատեքստում Չայաստանը պետք է մշտապես պատրաստ լինի շրջադարձային զարգացումների և այլ ընտրանքային լուծումների, քանզի արձանագրվել են նաև որոշ իրողություններ` կապված Ռուսաստանի ոչ «անմնացորդ» վարքագծով բարեկամության դրսևորումների հետ (որպես օրինակ կարելի է նշել վերջինիս կողմից նազմամթերքի և սպառազինության վաճառքը Ադրբեջանին և դրան վերաբերող գուտ առևտրային նշանակության հիմնավորումներն ու պաշտոնական մեկնաբանությունները):

**ԳԼՈՒԽ 4. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐԱԿՎԱՃՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**

**4.1. Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության
պատմաքաղաքական զարգացումները հայ-ռուսական
հարաբերությունների համատեքստում**

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առաջացումն ու զարգացումը սերտորեն կախված է Ռուսաստանի պատմության որոշ դրվագների հետ, այդ կոնֆլիկտի փուլային մասերը գրեթե միշտ համընկել են բուն Ռուսաստանի զարգացման համար որոշակիորեն վճռորոշ իրադարձությունների հետ¹⁵⁴: Դրանցից են՝ հայ ժողովրդի պատմության այնպիսի կարևոր իրադարձությունները, ինչպիսիք են՝ 1813թ. Գյուլիստանի և 1828թ. Թուրքմենչայի պայմանագրերով Ղարաբաղի և Արևելյան Հայաստանի մյուս շրջանների միացումը Ռուսաստանին:

Պատմագիտական տվյալները վկայում են, որ տարբեր ժամանակներում գոյություն են ունեցել անկախ ու կիսանկախ կարգավիճակ ունեցող հայկական իշխանություններ: Հատկանշական է, որ պատմության նոր ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև 18-րդ դարի վերջերը, այնպիսի իշխանությունները (մելիքությունները) գոյատևել են հիմնականում Լեռնային Ղարաբաղում, որն ամբողջ Արևելյան Հայաստանի հետ միասին գտնվում էր Պարսկաստանի կազմում:

Միջին Ասիայից Պարսկաստան թափանցած թուրքական քոչվոր ցեղերը քրդերի հետ միասին, անցնելով նստակյաց կյանքի, Արևելյան Անդրկովկասում և ներկայիս Իրանի հյուսիսում սկսել են աստիճանաբար մեծամասնություն կազմել: Ձևավորվել է տեղաբնիկներից և եկվորներից բաղկացած ազգաբնակչության էթնիկական կազմի խայտաբղետ խճանկար: Բավական է նշել, որ Արևելյան Կովկասում մինչև Ռուսաստանի տիրապետության տակ

¹⁵⁴ Арцах-Карабах. Библиография на русском языке 1988-2010 гг. / ЕГУ, Ин-т арменоведческих исследований; Сост.: А. Г. Симонян, А. А. Гарибян, Э. А. Бабаян; отв. ред. А. Г. Симонян. - Ер.: Изд-во ЕГУ, 2011. с. 29.

անցնելը հաշվվում էր միմյանց հետ հակամարտության ունեների մեջ գտնվող մինչև 15 վարչաքաղաքական կազմավորումներ՝ խանութայիններ: Այդ 15-ի շարքում ամենախոշորն էր Ղարաբաղի խանութայինը: Այն մի քանի այլ խանութայինների (Գանձակի, Շիրվանի, Բաքվի, Թալիշի և այլն) հետ միասին Ռուսաստանի կազմում միավորվեցին նորաստեղծ Շեմախի նահանգի մեջ: Ավելի ուշ՝ 1867թ. ցարական հրովարտակով Անդրկովկասը բաժանվեց 5 նահանգների: Երևանի ու Նախիջևանի գավառները և Օրդուբարդի մարզը միավորվեցին Երևանի նահանգի մեջ, իսկ Ղարաբաղն ու Չանգեզուրը Գանձակի և այլ հարակից շրջանների հետ միասին կազմեցին Ելիզավետի նահանգը, որտեղ Ղարաբաղի լեռնային հատվածում առանձնացվեց Շուշիի գավառը:

Այդ վարչական բաժանումը պահպանվեց մինչև 1917թ.: Ռուսական կայսրության փլուզումից հետո, 1918 թ. մայիսին Անդրկովկասում ստեղծված երեք անկախ պետությունների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանային վեճեր բռնկվեցին: Ղարաբաղի բնակչությանն իրեն հայտարարեց Հայաստանի Հանրապետության բաղկացուցիչ մաս: Մասնավորապես, 1918թ. ապրիլի 22-ին մենշևիկները, Սեյմի մահմեդական խմբակցությունների աջակցությամբ, առաջարկեցին հիմնադրել անկախ Անդրկովկասյան ժողովրդական Դաշնակցային Հանրապետություն¹⁵⁵: Մայիսի 26-ին, 27-ին և 28-ին Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հռչակեցին իրենց անկախությունը¹⁵⁶: Սակայն, նորահռչակ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կառավարությունը չէր կարող ժամանել իր հռչակած մայրաքաղաք Բաքու, քանի որ քաղաքական իշխանությունն այնտեղ գտնվում էր հայերի կողմից ընտրված Բաքվի խորհրդի ձեռքում և Կովկասյան թաթարները բավարար ներուժ չունեին Անդրկովկասի մահմեդական խորհրդի անունից հռչակած պետությանը իրավական հենք տալու համար¹⁵⁷: Ղարաբաղի հայերը, հաշվի առնելով այն փաստը, որ Թուրքիային հակադրվող Հայաստանը

¹⁵⁵ Հովհաննիսյան Ռ., Ղարաբաղյան հակամարտությունը, Եր., 1997, էջ 77

¹⁵⁶ Թովմասյան Վ., Աթաջանյան Վ., Ներսիսյան Յու., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, էջ 5

¹⁵⁷ Մանասյան Ալ., Ղևոնդյան Ա., Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել, Եր., Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2011, էջ 16

Ղարաբաղից անջատված Էրև Ադրբեջանի հավակնությունների դեմ պայքարի հարցում ի վիճակի չէր իրական օգնություն տրամադրել Ղարաբաղին, որոշեցին քաղաքական և իրավական ինքնուրույն ուղեգիծ որդեգրել:

Որպես վերջինիս դրսևորում՝ 1918թ. հունիսի 22-ին Ղարաբաղի ազգային ներկայացուցիչների առաջին համագումարում Ղարաբաղը հայ տարավեց ինքնուրույն վարչաքաղաքական միավոր, ձևավորվեց Ղարաբաղի Յայկական Ազգային խորհուրդը և դրանով իսկ մերժվեցին Ադրբեջանի հավակնությունները՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական Յանրապետության մասկազմելու մասով: 1918-1920թթ. ԼՂ բնակչության լիազոր ներկայացուցիչների բոլոր ինը համագումարները, բացառությամբ յոթերորդի, մերժել են ԼՂ նկատմամբ ԱԴՀ հավակնությունները և երկրամասը հայ տարարել են ՅՅ անբաժանելի մաս¹⁵⁸: Ղարաբաղցիները, երկրամասը հայ տարարելով Յայաստանի անկապտելի մաս, միաժամանակ տեղում ձևավորում էին օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններ, քանի որ լավ գիտակցում էին, որ ցեղասպանության վերքը չբուժած Յայաստանը ի վիճակի չէր իր պաշտպանության տակ առնել Արցախը: Այդպիսով, 1918-1920թթ. Արցախը ինքնուրույն վարչաքաղաքական միավոր էր՝ ինքնիշխանության բոլոր բաղադրիչներով:

վերոնշյալ զարգացումներից բխելով՝ հակամարտությունը հայ տնվեց միջազգային հարաբերությունների ոլորտում և դարձավ Ազգերի լիիգայի քննարկման առարկա: Ազգերի լիգան Լեռնային Ղարաբաղը հայ տարարեց վիճելի տարածք, որի հարցը պետք է լուծեր հատուկ ստեղծվել իք հանձնաժողովը¹⁵⁹:

1920թ. ապրիլի 11-ին Կարմիր բանակի օգնությամբ Ադրբեջանում հռչակվում է խորհրդային իշխանություն, և Լեռնային Ղարաբաղի խնդրով սկսում են զբաղվել խորհրդային Ռուսաստանի և բոլշևիկյան կուսակցության ղեկավարությունը: Դրա արդյունքում Լեռնային Ղարաբաղը հանձնվում է Ադրբեջանական ԽՍՀ-ին, որի կազմում և 1923թ.

¹⁵⁸ Մանասյան Ալ., Ադրբեջանահայությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և հայոց ցեղասպանության ճանաչման համատեքստում // «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 8-9 (53-54), էջ 115-116:

¹⁵⁹ ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն, պատմություն և արդիականություն, <http://www.nkr.am/hy/history-and-current-realities/79/>

հայ աբևակ տարածքի մի մարզում ստեղծվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ): «Քաղաքական նպատակահարմարության» սկզբունքի կողմնակիցները Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու միջոցով ձգտում էին այնտեղ ու ժողացնել պրոռուսական և պրոբոլշևիկյան տրամադրությունները, որը համապատասխանում էր Ստալինի և նրա համախոհների կայսերական նկրտումներին: Միաժամանակ, նրանք համարում էին, որ երկու հակամարտող կողմերի՝ Ղարաբաղի հայության և Ադրբեջանի հանրապետական իշխանության միջև, հանձնես բոլշևիկյան կուսակցության և խորհրդային տոտալիտար իշխանության, մշտապես գոյություն կունենա այն «երրորդ ուժը», որը թույլ չի տա հակամարտության բորբոքում:

Այս համատեքստում կարելի է ընդգծել, որ Ղարաբաղյան կոնֆլիկտի ծագման վերաբերյալ գոյություն ունեն երկու տեսակետեր. ոմանք պնդում են, որ հիմնախնդիրը ծագել է 1921 թվականից, երբ բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Կովկասյան բյուրոյի հուլիսի 5-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը՝ մեծամասամբ բնակեցված հայերով, ծուշի մարզկենտրոնով, մտցվեց նոր ձևավորված Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ: Չնայած դրանից մեկ օր առաջ ՌԿ(Բ)Կ Կովբյուրոյի նույն պլենումում ընդունվել էր նմանատիպ որոշում, սակայն Լեռնային Ղարաբաղի՝ ոչ թե Ադրբեջանական ԽՍՀ, այլ Հայաստանի կազմի մեջ անցնելու վերաբերյալ¹⁶⁰: Ռուս հետազոտող Գ.Կադիմովի խոսքերով «...Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը արդյունք է բոլշևիկների հակաազգային քաղաքականության, որոնք առաջնորդվում էին ոչ թե ազգային խնդիրների լուծման, այլ պրոլետարական հեղափոխությունների տարածմամբ այլ երկրներում, մասնավորապես՝ Միջին Արևելքում, Թուրքիայում ու Իրանում»¹⁶¹:

Մասնագետների երկրորդ խումբը այն կարծիքին է, որ Ղարաբաղյան խնդրի արմատները անհրաժեշտ է փնտրել ավելի վաղ, նախախորհրդային ժամանակաշրջանում: 1918 թվականին Ռուսական կայսրությունը փլուզվում է, տարածաշրջանային առաջատարի դերը

¹⁶⁰ Լեռնային Ղարաբաղը 1921 թվականի առաջին կեսին. armeniasputnik.am, 06.07.2017թ., <https://blog.168.am/blog/83443.html>

¹⁶¹ Кадымов Г.Г., Россия и урегулирование конфликтов в СНГ / Внешняя политика современной России. Сборник статей. - М., ДА МИД России, 2000. с.41.

Ռուսաստանից անցնում է թուրքիային, և երկրամասի երկրները անկախություն են ստանում: Թուրքիան, օգտվելով Ռուսաստանում անկայուն դրությունից, տարածքային պահանջներ է ներկայացնում Չարավային Կովկասի որոշ շրջանների նկատմամբ և նորաստեղծ Ադրբեջանի Դեմոկրատական Չանրապետության միջոցով փորձում է իրագործել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր զավթողական մտադրությունները¹⁶²: Այդպես Ադրբեջանի տարածքային նկրտումների արդյունքը եղավ 1923 թվականին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումը Ադրբեջանական ԽՍՀ կազմում:

Չայաստանի Չանրապետության երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանը, 2001 թվականին ելույթ ունենալով ՌԴ արտաքին գործերի նախարարության Դիվանագիտական ակադեմիայում, շատ ծավալուն կերպով մատնանշեց ՌԿ(Բ)Կ Կենտկոմի 1921թ. հունիսի 5-ի որոշումը. «Ժամանակին Ղարաբաղը ինքնակամ մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ ոչ այն բանի համար, որ հետագայում հայ տնվի Ադրբեջանի կազմում»¹⁶³: Չայ ժողովրդի՝ Ռուսաստանին միանալու ճանապարհով թուրքիայի զավթողական նկրտումներից ազատվելու ձգտումը, մեկ դար էլ չանցած, ընթացավ այլ ճանապարհով: Ղարաբաղը հայ տնվեց թուրքիայի ու շարժումների կենտրոնում, դարձավ արյունոտ թատերաբեմ, հանձնվեց Ադրբեջանական ԽՍՀ-ին, որի առաջնորդները շատ արագ փոխեցին իրենց մուսավաթյան «ուսադիրները» բոլշևիկյան ուսադիրներով¹⁶⁴:

1915 թվականի Եղեռնից, թուրքիայի հետտևական պատերազմներից հյուսիս Չայաստանն ի գործը չէր վերահսկել իր տարածքները, ինչի հետևանքը եղավ Լեռնային Ղարաբաղի, Կարսի մարզի, Նախիջևանի և տասնյակ գյուղերի կորուստը: Թուրք-թաթարական կողմի նկատմամբ բոլշևիկների կողմնակալության մասին են խոսում ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անդամ Ս. Օրջոնիկիձեի նամակը Ի. Ստալինին. «Կարծում եմ՝ պետք է մինչև վերջ եկրոն կողմերի միջև մանևրել,

¹⁶² Записка народного комиссара иностранных дел РСФСР Г.В.Чичерина В.И.Ленину, 29 июня 1920г. / Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник материалов и документов. - Ереван, 1992. с.515-518.

¹⁶³ ՉՉ նախագահ Ռ. Քոչարյանի ելույթը ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայում, Չայաստանի Չանրապետությունն օրաթերթ, 17 հունվարի, 2001թ., էջ 5:

¹⁶⁴ Востриков С.В., Карабахский кризис и политика России на Кавказе, Общественные науки и современность, 1999, N3, <http://ecsocman.hse.ru/data/291/464/1216/007wOSTRIKOW.pdf>

միանշանակ անհրաժեշտ է կողմերից որևէ մեկին սատարել, այս դեպքում, իհարկե, Ադրբեյջանին և Թուրքիային: Ես խոսել եմ Լենինի հետ, նա դեմ է»¹⁶⁵:

Արդեն գոյությունը դադարած Ռուսական կայսրության նախկին տարածքների՝ ինքնավար հանրապետությունների վերակազմավորելու գործընթացում Ստալինն առաջնորդվում էր «ավտոնոմիզացիայի» («ինքնավարացման») սկզբունքով, որպես ազգային հիմնախնդիրների լուծման լավագույն միջոց: Սակայն այս մոտեցումը ուներ մի կարևոր թերություն. տարածքային վեճերում տարբեր ժողովուրդների իրավահավասարությունն ապահովելու փոխարեն այն սահմանադրորեն ամրակցում էր դրա բացակայությունը: Ստացվում էր այնպես, որ տարածքների բաշխման գործընթացն իրականացվեց անկանոն ձևով՝ առանց հաշվի առնելով ժողովրդագրական ու պատմական տարաբնույթ գործոնները¹⁶⁶:

Այնուամենայնիվ, հարկ է հիշել ԽՍՀՄ կառավարող շրջաններում կուսակցական այն պաշտոնյաներին, որոնք ձգտում էին նախկին կայսրության տարածքների վերաբաշխման գործընթացում առաջնորդվել տրամաբանության և ռացիոնալության սկզբունքներով: Նրանցից մեկն էր արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ.Չիչերինը, որը նախկին Ռուսական կայսրության տարածքներում պետական սահմանների որոշման գործընթացը փորձում էր իրականացնել այս կամ այն էթնոսների աշխարհագրական կեցության ու տնօրինության սկզբունքով: 1920թ. հունիսի 4-ին Կովկասյան ճակատի Յեղափոխական ռազմական խորհրդի հրամանատարությանը ցուցումներ էր տրվել. «բացատրել վիճելի տարածքների լայն զանգվածներին, որ ռուսական զորքերն գտնվում են այդ տարածքներում միջէթնիկական բախումները կանխարգելելու նպատակով, և որ այդ տարածքների զբաղեցումը ժամանակավոր է, մինչև կորոշվի այդ տարածքների պատկանելիությունն այս կամ այն հանրապետությանը: Տարածքային նման վեճերը պետք է լուծվեն Ռուսաստանի ղեկավարությանը հատուկ խորհրդի կողմից, որը

¹⁶⁵ Телеграмма Сталина Г.К.Орджоникидзе. №345, 8 июля 1920г. / Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов / Отв. ред. В.А.Микаелян. — Ереван, 1992. с. 524.

¹⁶⁶ Востриков С.В., Карабахский кризис и политика России на Кавказе, Общественные науки и современность, 1999, N 3, <http://ecsocman.hse.ru/data/291/464/1216/007wOSTRIKOW.pdf>

կառաջնորդվի բնակչության էթնիկական կազմով և նրա կամքով»¹⁶⁷: Չիչերինի մտադրությունները տրամաբանական էին, սակայն, ցավոք դրանք չիք եղան ստալինյան ամենատիրական ծրագրերի պատճառով: Վերջինս համոզված էր, որ բազմազգ ու բազմակրոն բնակչություն ունեցող Խորհրդային Միության վարչական բաժանումն իր ծրագրերով կբացառի տարբեր ազգերի ու ազգությունների հնարավոր խռովություններն ու ապստամբությունները և կապահովի նրանց նկատմամբ ուժեղ վերահսկողությունը: Իսկ ինչ վերաբերում էր Յայաստանին, ապա կարելի է համոզված ասել, որ հայերը ընտրության քիչ հնարավորություն ունեին, կամ՝ ընդհանրապես չունեին. կամ՝ երկիրը պետք է մտներ ԽՍՀՄ կազմի մեջ տարածքային ու ռեսուրսների հսկայական կորստներով, կամ՝ Թուրքիայի հետ անհավասար պայքարում վերջնականապես կդադարեր սեփական գոյությունը: Բոլշևիկները հայերին փորձում էին բացատրել այլ ընտրանքների բացակայության մասին:

20-րդ դարի 80-ական թվականների կեսերից Խորհրդային Միությունում սկսված սոցիալ-քաղաքական բարեփոխումները, տոտալիտարիզմի թուլացումը և ազատական գաղափարների տարածումը չէին կարող անփոփոխ թողնել նաև տասնամյակներ անընդհատ տոտալիտար եղանակներով պարտադրվող ազգամիջյան խաղաղ հարաբերությունները: Այդ հարաբերությունները, ինչպես և սպասվում էր, դուրս եկան կենտրոնական իշխանության վերահսկողությունից և դարձան անկառավարելի: Իսկ ազգամիջյան հարաբերություններն ուղղակիորեն առնչվում են դաշնային սկզբունքներով կառուցված բազմազգ պետության, ինչպիսին ԽՍՀՄ-ն էր, վարչաքաղաքական կառուցվածքին:

Ուստի, պետք է օրինաչափ համարել, որ Խորհրդային Միությունում բռնկված ազգամիջյան առավել խոշոր հակամարտությունները միանգամից ընդունեցին նաև տարածքային հակամարտության բնույթ:

¹⁶⁷ Чичерин Г.В., Инструкция Реввоенсовету Кавказского фронта, 4 июля 1920 г. / Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник материалов и документов / Отв. ред. В.А.Микаелян. - Ереван, 1992. с.522-524.

Ձևավորվեցին հակամարտության 2 մակարդակներ: Բարձր մակարդակում հակամարտությունը ընթանում էր մի կողմից ԽՍՀՄ տարածքային միասնության դիրքերից հանդես եկող կենտրոնական իշխանության և, մյուս կողմից, միութենական հանրապետությունների, նրանց գլխավոր (տիրուլային) ազգերի միջև:

Ստորին մակարդակում հակամարտությունը զարգանում էր միութենական հանրապետության (ԽՍՀՄ փլուզումից հետո՝ անկախ պետության) և նրա կազմում ինքնավարություն ունեցող վարչատարածքային միավորների, նույնն է թե միութենական հանրապետության տիրուլային ազգի և փոքրամասնություն կազմող, բայց քաղաքական կարգավիճակ ունեցող ազգի միջև:

Առաջին մակարդակի հակամարտություններն իրենց միանշանակ լուծումը գտան միջազգային իրավունքի հիման վրա, առանց զինված բախումների. ԽՍՀՄ-ը ինքնավուծարվեց, միութենական հանրապետությունները հռչակվեցին ինքնիշխան պետություններ և ստացան դեյուրե միջազգային ճանաչում:

Երկրորդ մակարդակի հակամարտությունների միասնական (ստանդարտ) լուծում չգտնվեց: ՌԴ-ում հակամարտությունները կարգավորվեցին պետության վարչաքաղաքական տարածքային կառուցվածքի բարեփոխման, մասնավորապես, ազգային-տարածքային միավորների քաղաքական կարգավիճակի բարձրացման և իրավունքների ընդլայնման միջոցով, և արդյունքում կանխվեցին ռազմական բախումները: Մյուս հանրապետություններում, այդ թվում և Ադրբեյջանում, հակամարտությունները մտան զարգացման ակտիվ փուլ և վերածվեցին ռազմական առճակատման:

Ընդունված է Ղարաբաղա-ադրբեյջանական հակամարտության ակտիվ փուլի սկիզբ համարել 1988թ. փետրվարի 20-ը, երբ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց խնդրել Յայկական ԽՍՀ և Ադրբեյջանական ԽՍՀ գերագույն խորհուրդներին՝ քննարկելու ԼՂԻՄ-ը Ադրբեյջանի կազմից դուրս գալու և Յայաստանին միանալու հարցը: Դանշանակում է, որ ԼՂԻՄ իշխանությունները ձգտում էին խնդիրները լուծել օրինական կարգով, ԽՍՀՄ սահմանադրության հիման վրա:

Ի պատասխան դրա, Ադրբեջանի իշխանությունները, ինչպես հետագայում պարզվեց Ռուսաստանի իմացությանը, սկսեցին բռնություններ մարզի սահմաններից դուրս բնակվող հայ բնակչության նկատմամբ: Մարզային խորհրդի որոշումից ընդամենը մի քանի ամիս անց Սուլեյմանյանի սկսվեցին հայերի կոտորածները: Ավելի ուշ հայ խաղաղ բնակչության զանգվածային ջարդեր իրականացվեցին Կիրովաբադում, Շամխորում, Բաքվում:

Ադրբեջանական իշխանությունների պաշտոնական պատասխանը ձևակերպվեց Գերագույն խորհրդի նախագահության 1988թ. հունիսի 13-ի որոշումով, որով մերժվում էր ԼՂԻՄ մարզային խորհրդի դիմումը: Նախքան այդ, նույն թվականի մարտի 23-ին մերժողական որոշում էր ընդունել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը:

Ադրբեջանի պաշտոնական մերժումից 2 օր անց, հունիսի 15-ին Յայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին ԽՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածի հիման վրա տալ համաձայնություն ԼՂԻՄ-ը Յայկական ԽՍՀ հետմիավորելուն:

Դրան հաջորդեցին հակամարտության նոր փուլը նշանավորող իրադարձություններ: 1988թ. սեպտեմբերի 21-ին Միութենական իշխանությունը ԼՂԻՄ-ում հայ տարարեց արտակարգ իրավիճակ և զորք մտցրեց Ստեփանակերտ: Դեկտեմբերի սկզբին Յայաստանում ձերբակալվեցին «Ղարաբաղ» կոմիտեի՝ ԼՂԻՄ-ը Յայկական ԽՍՀ-ին միավորելու համաժողովրդական պայքարը ղեկավարելու համար հասարակական հիմունքներով ստեղծված կազմակերպության անդամները: Յուրևարին ստեղծվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Յատուկ Կոմիտե՝ ԼՂԻՄ տարածքում պետական-վարչական վերահսկողության ամենալայն իրավունքներով: Այնուհետև Բաքվում մեծ թափ առան հանրահավաքներն ու փողոցային ցույցերը, սկսվեց Յայաստան և ԼՂԻՄ եկող երկաթուղու և գազամուղի շրջափակումը: 1989թ. աշնանը Ադրբեջանի ճնշումների ներքո դադարեցվեց ԼՂԻՄ հատուկ կոմիտեի գործունեությունը:

Ինքնավար մարզի հայ բնակչության վրա կախված ահագնացող վտանգն ակնհայտ էր դառնում: 1989թ. դեկտեմբերի 1-ին ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ, որը ընդունեց հռչակագիր

ԼՂԻՄ-ը Խորհրդային Չայաստանի հետ միավորելու մասին, համաձայն որի՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության վրա տարածվում էին Չայաստանի քաղաքացիների իրավասությանը¹⁶⁸:

Ադրբեջանը, ի պատասխան նման գործողությունների, լայնածավալ հարձակումներ սկսեց հայ բնակչության դեմ՝ փորձելով զենքի ու ժով ճնշել արցախահայության՝ պապենական հողի վրա ազատ ապրելու արդարացի ձգտումը: Արցախահայությունը զենքին զենքով պատասխանեց և արցախցիների պայքարը ստացավ կազմակերպված ինքնապաշտպանության բնույթ:

Այսպիսի իրադրություններ, երբ սկսվեց ԽՍՀՄ-ի անկասելի փլուզումը: 1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանը հռչակեց 1918թ. իր կորցրած անկախության վերականգնումը և դուրս եկավ ԽՍՀՄ կազմից: ԽՍՀՄ օրենքի համաձայն, Ադրբեջանի այդ քայլը չէր նշանակում, որ 1923թ. Խորհրդային Ադրբեջանի ենթակայությանը հանձնված ԼՂԻՄ-ը ինքնաբերաբար նույնպես դուրս է գալիս ԽՍՀՄ կազմից: Երկու օր անց՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին, Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային Խորհուրդների համատեղ նստաշրջանը, հենվելով 1990թ. ապրիլի 3-ին ընդունված «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի վրա, հռչակեց Լեռնային Ղարաբաղի Չանրապետության ծնունդը: Օրենքը նախատեսում էր դուրս գալու հարցը լուծել հանրաքվեի միջոցով, ավելին՝ ինքնավար հանրապետություններում, ինքնավար մարզերում և ինքնավար օկրուգներում հանրաքվե պետք է անցկացվեր միութենական հանրապետությունից անկախ: Ադրբեջանն իր անկախությունը հռչակեց առանց հանրաքվեի:

Նորաստեղծ ԼՂՅ-ն իր պետական անկախությունը և ԽՍՀՄ-ից դուրս գալը հռչակեց 1991թ. դեկտեմբերի 10-ին անցկացրած հանրաքվեի հիման վրա: Վերոնշյալ իրադարձությունները իրավական առումով նոր բովանդակություն և հաղորդեցին նաև Ղարաբաղյան հիմնախնդրին: ԽՍՀՄ փլուզումով և Չայաստանի ու Ադրբեջանի անկախացմամբ Ղարաբաղյան հակամարտությունը ազգային-ազատագրական շարժման հատկանիշների

¹⁶⁸ Լեռնային Ղարաբաղ. պատմությունը, ԵՊՅ Չայագիտության հետազոտությունները, http://www.historyofarmenia.am/am/Encyclopedia_of_armenian_history_LXH_patmutyun

հետ միասին ձեռքբերեց նոր՝ միջպետական հակամարտության հատկանիշ: Անտեսվեց այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղը երբեք անկախ Ադրբեյջանի կազմում չի եղել և նրա անկախության հռչակումը իրավական առումով լիովին հիմնավորված էր:

Հայաստանի, Ադրբեյջանի, Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակումից հետո սկսվում է Ղարաբաղյան հակամարտության առաջին խաղաղարար միջնորդությունը: Ղարաբաղյան հակամարտության առաջին տնական գործընթացը կարելի է համարել Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների՝ Բ.Ելցինի և Ն.Նազարբաևի միջնորդական առաքելությունը՝ 1991թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում¹⁶⁹: Այս ժամանակաշրջանում ընթանում էին նաև Ալմաթա-Բաքու-Անկարա մերձեցման գործընթացներ, հետևապես կարելի է փաստել, որ Ղազախստանն այս ժամանակաշրջանում անուղղակիորեն ներկայացնում էր նաև Թուրքիայի շահերը: Միջնորդական առաքելությունը տեղի ունեցավ Խորհրդային Միության փլուզման նախաշեմին և երկրում ստեղծված խառնակ իրավիճակի պայմաններում: Այս երկու պայմաններն էլ, անկասկած, իրենց ազդեցությունը թողեցին, ինչպես գործընթացի, այնպես էլ նրա արդյունքների վրա: Նախագահներ Ելցինն ու Նազարբաևը 1991թ. սեպտեմբերի 22-ին Մութալիբովի հետ (Ադրբեյջանի նախագահ) Գյանջայով ժամանում են Ստեփանակերտ: Նույն օրը Երևանում հանդիպումներից հետո բանակցությունները շարունակվում են Հյուսիսային Կովկասի առողջարանային ժելեզնովոդոսկ քաղաքում¹⁷⁰:

Սեպտեմբերի 23-ին ժելեզնովոդոսկում Ռուսաստանի, Ղազախստանի, Հայաստանի ու Ադրբեյջանի նախագահների մասնակցությամբ ստորագրվեց «ՌԴ նախագահ Բ.Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևի միջնորդական առաքելության մասին համատեղ կոմյունիկեն»: Այս փաստաթղթի ստորագրմանը մասնակցում էին նաև ԼՂՀ ներկայացուցիչները, սակայն միայն դիտորդի կարգավիճակով: Կոմյունիկենում դատապարտվում էր իրավիճակը կարգավորելու

¹⁶⁹ Իշխանյան Ռ., Ձախողված միջնորդական առաքելություն, 30.07.2013թ., <http://www.artsakhtert.com/arm/politics/item/5345-ձախողված-միջնորդական-առաքելություն>

¹⁷⁰ Галстян Л.Л., Дипломатическое обеспечение процесса прекращения боевых действий в Нагорном Карабахе / Наири: Альманах, Сборник материалов об Армении и армянской диаспоры, Вып. 6, Н.Новгород, 2013, с. 84, 84-87.

կենտրոնական իշխանության ունեցած անկարողությանը և նշվում, որ միջևորդական առաքելության նպատակն է բանակցությանն ենթարկել տարածաշրջանում իրավիճակի կայունացման համար¹⁷¹: Յատուկ ընդգծված էր Յայաստանի և Ադրբեջանի ինքնիշխանության անխախտելիությանը, իսկ հակամարտության կարգավորման ժամկետը նշվում էր 1992թ. հունվարի 1-ը:

Չնայած այն հանգամանքին, որ միջևորդական տվյալ առաքելությանը չհանգեց որևէ կոնկրետ արդյունքի, այնուամենայնիվ Ելցին-Նազարբաև միջևորդական նախաձեռնությանը ընդունված է դիտարկել որպես Ղարաբաղյան հիմնախնդիրը կարգավորելու առաջին տևական գործընթացներից մեկը: Սակայն, միջազգային գերտերությանն ենթարկվող մեղադրեցին Ռուսաստանին, թե վերջինս դրանով ցանկանում էր ամրապնդել իր դիրքերը Յարավային Կովկասում՝ նպատակ ունենալով իրագործել կայսրության կառուցման տեսլականը¹⁷²:

1992թ. մարտի 24-ին Յելսինկիում կայացավ ԵԱՀԽ Նախարարների խորհրդի արտահերթ նիստը, որի ժամանակ որոշվեց հնարավորինս արագ Մինսկում խորհրդաժողով հրավիրել Ղարաբաղյան հարցի կարգավորման շուրջ, որը հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությանն ենթարկվող կտրամադրեր՝ հիմնվելով ԵԱՀԽ սկզբունքների վրա: 1992թ. ի վեր Ղարաբաղյան հարցի կարգավորման բանակցությանն ենթանում են Մինսկի խորհրդաժողովի ձևաչափով:

1994թ. մայիսից սկսվեց Ղարաբաղյան կոնֆլիկտի խաղաղ բանակցությանն ենթարկելու շրջան, որն ընթանում է առայսօր: Անցմանը խաղաղ բանակցությանն ենթարկելու նպատակին նաև հայկական զինուժի հաղթանակները հակամարտության տարածքներում: Այդ ժամանակաշրջանում Ադրբեջանի հայտարարությանն ենթարկվող հիմնականում այն բովանդակության էին, որ մարտական գործողությանն ենթարկվող հետագա շարունակումը կարող էր հանգեցնել Ադրբեջանի կողմից տարածքային կորուստների, որն էլ նպաստելու էր

¹⁷¹ Ժելեզնովոզսկի հուշագիրը. Արցախյան կարգավորման առաջին փաստաթուղթը, <http://www.aniarc.am/2016/04/20/zheleznowodsk-communicue-1991-nk/>

¹⁷² Казимиров В.Х., Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта, М., 2009, с. 75.

փաստարկների նոր ալիքի առաջացմանը: Նշված հանգամանքների ուժով էլ Ադրբեջանը ստիպված էր նստել բանակցությունների սեղանի շուրջ: Հատկանշական է, որ հաջորդական գործընթացում պետք է ներկայիներ նաև ԼՂՀ-ն:

Այդպիսով, կրակի դադարեցումը տարբեր երկրների ու կազմակերպությունների տնական բանակցությունների արդյունք էր, որոնց ընթացքում շատակտիվ էր պաշտոնական Մոսկվան: Ռուսաստանի ակտիվությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հարավկովկասյան տարածաշրջանը վերջինիս համար ունի ռազմավարական նշանակություն, որը կանխում է Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի կամ այլ երկրի ազդեցության ուժեղացումը: ՌԴ խորհրդարանի խոսնակ Շումեյկոն կազմակերպեց հանդիպում Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում, ուր նրան հաջողվեց նախապատրաստել նախագիծ՝ կրակի դադարեցման մասին: ՀՀ-ի և ԼՂՀ-ի ղեկավարները հայտարարեցին, որ նրանք պատրաստ են նստել բանակցությունների սեղանի շուրջ, ստորագրել Բիշքեկի արձանագրությունը: Որոշ ժամանակ անց՝ 1994թ. մայիսի 8-ին ԱՀ-ն հայտարարեց, որ ինքը ևս պատրաստ է արձանագրության կետերին համապատասխան՝ կրակը դադարեցնել 1994թ. մայիսի 12-ին¹⁷³:

Մայիսի 16-ին ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովը Մոսկվա հրավիրեց Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարներին, ԼՂՀ ԻՊՈՒ-ի գլխավոր հրամանատարին (Սերժ Սարգսյան, Մամեդռաֆի Մամեդիարով և Սամվել Բաբայան)՝ նրանց առաջարկելով մի ծրագիր, որով հաստատվում է հրադադար մայիսի 17-ի 00 ժամից, ըստ որում՝ երկու կողմերի զորքերը ռազմաճակատի ամբողջ երկարությամբ պետք է հետքաշվեին 5-10կմ, որպեսզի հակամարտող կողմերի միջև երկարությամբ տեղադրվեին «խաղաղարար ուժեր» (որոնք ռուսական զորքեր էին լինելու): ԼՂՀ գլխավոր հրամանատարը մինչ այդ կատարել էր Բիշքեկի արձանագրությունը և հրամայել էր միակողմանի դադարեցնել կրակը ռազմաճակատի՝ իր կողմի երկարությամբ, մայիսի 9-ի ժամը 00-ից¹⁷⁴: Բիշքեկյան

¹⁷³ ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն, 1991-1994թթ. պատերազմը, <http://www.nkr.am/hy/the-war-of-19911994/83/>

¹⁷⁴ Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը, Գիրք Գ, Ստեփանակերտ, 2007, էջ 523:

արծանագրութեանը պարունակում էր կոնկրետ առաջարկութեաններ՝ ուղղված հակամարտող բոլոր կողմերին զինված հակամարտության դադարեցման, տարածաշրջանում դիտորդների տեղաբաշխման շուրջ, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներում խաղաղարար գիտությունների ստեղծման հնարավորությամբ: Այդ ժամանակ Յայաստանում ՌԴ դեսպան Վ.Ստոլպիշինը նման արծանագրության ստորագրումը գնահատում է միմիայն ռազմական գործողություններից բխող իրականությունն՝ նպատակ հետապնդելով դադարեցնել մարտական գործողությունները¹⁷⁵:

Հակամարտության կարգավորման հետագա գործընթացներում ՌԴ միջևորդական ջանքերը շարունակվեցին տարբեր ձևաչափերով, ներառյալ՝ Մինսկի խմբի շրջանակներում: ԵԱՀԿ իրավասությամբ Ղարաբաղյան հակամարտությունը կարգավորելու ջանքերը շարունակվում են երկու տասնամյակից ավել: Այդ ընթացքում կողմերին են ներկայացվել կարգավորման բազմաթիվ մոդելներ, արտահայտվել են բազմապիսի մոտեցումներ: Ինչպես պարբերաբար նշում են միջևորդները՝ դեռևս շարունակվում են ջանքերը հակամարտող կողմերի տեսակետները մերձեցնելու ուղղությամբ:

Այնուամենայնիվ, անկախ այն հանգամանքից, թե Ռուսաստանն ինչ կերպ է մասնակցում Ղարաբաղյան հիմնահարցի լուծման բանակցային գործընթացին՝ ուղղակի, թե անուղղակի, այս կամ այն կազմակերպությունների նախաձեռնությունների մասնակցության ճանապարհով, միանշանակ գերտերության դերն այդ գործում մեծ է: Դրամասին հարցազրույցներից մեկում խոսել է ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանը. «Մենք բոլորս, իմ կարծիքով՝ նաև մյուս համանախագահները, լավ ենք հասկանում, որ առանց Ռուսաստանի մասնակցության խոսել հակամարտության իրական կարգավորման մասին հնարավոր չէ, և ինչքան արդյունավետ ու խորը լինի նրաներ գրավածությունը կարգավորման գործընթացին, այնքան շատ հնարավորություններ կունենանք հաջողության հասնելու համար»¹⁷⁶: Ռուսաստանի դերի կարևորությունն արտահայտվել է նաև

¹⁷⁵ Ступишин В.П., Карабахский конфликт 1992-1994гг., М., 1998, с. 129-130.

¹⁷⁶ Интервью Президента Республики Армения Р.Кочаряна // Новое время. -2001. 12 сентября.

ադրբեջանական ղեկավարության հայտարարություններում: Նույն դիրքորոշման են նաև Լեռնային Ղարաբաղի իշխանությունները: Ինչպես նշել է ԼՂՀ նախկին նախագահ Ա. Ղուկասյանը՝ «Ռուսաստանը շատ բան կարող է անել Ղարաբաղի համար՝ և՛ կարգավորման, և՛ ԼՂՀ ժողովրդին օգնություն ցուցաբերելու առումով: Մյուս կողմից, Ռուսաստանը միջևորդ է, իսկ միջևորդը պետք է չեզոք դիրքորոշում ունենա:... Ռուսաստանը պատմական պատասխանատվություն է կրում այն ամենի համար, ինչը տեղի է ունենում հետխորհրդային գոտում»¹⁷⁷:

Այնհայտ է, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքականությունը թե ընդհանրապես Չարավկովկասյան ուղղությամբ, թե մասնավորապես՝ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման առումով, բխում է ոչ թե հակամարտ կողմերից որևէ մեկի սպասումներից, այլ հենց Ռուսաստանի սեփական ազգային շահերից: Որոշ ուսումնասիրողների շրջանում կարծիք է ձևավորվել, թե Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական կուրսը երբեք երկարաժամկետ հեռանկարային ծրագրերի համար նախատեսված չի եղել, այլ շատ դեպքերում ուղղված է եղել «վայրկենական» խնդիրների լուծմանը: Այս մոտեցումն ունի իր ռացիոնալ տրամաբանությունը. ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային իրականությունում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունն աչքի էր ընկնում քաղաքական որոշումների բազմազանությամբ, այդ պատճառով էլ չէին առաջանում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ սեփական սահմանների անվտանգության ապահովման մեթոդների կիրառումը կամ հակամարտությունների մեջ ներգրավված շրջաններում խաղաղություն ու փոխհամաձայնություն հաստատելը¹⁷⁸:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատմությունը փաստում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության «վայրկենականության» շատ օրինակների մասին: Մասնավորապես, ԱՊՀ-ի ինտեգրացիոն ծրագրերում Ադրբեջանին ներգրավելու համար Ռուսաստանը ԱՊՀ համագործակցության փաստաթղթերը ստորագրելու փոխարեն Ադրբեջանին հանձնեց ԽՍՀՄ Անդրկովկասյան ռազմական օկրուգի 4-րդ

¹⁷⁷ Интервью Президента НКР А.Гукасяна // Ноев Ковчег. - 2003. №7. с.5.

¹⁷⁸ Корчинин И., Прагматизм должен быть долгосрочным // Независимая газета. — 2000. 25 августа, с.3.

բանակի գեներալ, սպառազինության ու ռազմական տեխնիկայի մեծ մասը՝ իր ներկայությունը Ադրբեջանի տարածքում սահմանափակելով Գաբալայում ռադիոտեղորոշիչ կայանի անձնակազմի ծառայությունները: Հատկանշական է, որ դա արվել է Հայաստանի կողմից իրեն հասանելիք սպառազինությունը համախորհրդային զինանոցից ստանալուց բավականաչափ ժամանակ անց: Վերջին հաշվով, նման գործընթացի իրականությունը պարզ դարձավ Հայաստանի վրա ադրբեջանական զինված ուժերի լայնածավալ հարձակումից հետո, սակայն վերջնաորոշումներում Ա.Էլչիբեյի կառավարությունն այդպես էլ ցանկություն չհայտնեց անդամակցելու ԱՊՀ-ին:

Մոսկվայի արտաքին քաղաքական կուրսի «վայրկենականության» վառ օրինակ է նաև 1996թ. դեկտեմբերին ԵԱՀԿ համաժողովը Լիսաբոնում, որտեղ Ռուսաստանը փորձեց կանխել կասպիական նավթի արտահանումը արևմտյան ուղիով, իսկ դրա դիմաց պաշտպանեց Ադրբեջանի դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ: Արդյունքում ևս հիմնական նավթատար ուղին շրջանցեց Ռուսաստանը, ինչպես և ծրագրված էր, իսկ այսպես կոչված «Լիսաբոնյան սկզբունքները» այդ շրջանում բանակցային գործընթացը որոշակիորեն փակուղի մտցրեցին¹⁷⁹:

ՌԴ նախագահ Վ. Պուտինը ժամանակին հստակորեն մատնանշել է այն ուղին, որով իրենք շարժվում են Հարավկովկասյան տարածաշրջանում խաղաղության պահպանության գործընթացում. «Ռուսաստանը մտադիր է հետագայում էլ ակտիվացնել իր ջանքերը: Բացի այդ, մենք եղել ենք ու հիմա էլ ենք Մինսկի խմբի անդամ հանդիսանում և համաձայնեցված քայլերի շրջանակներում մտադիր ենք կոորդինացնել մեր ջանքերը գործընթացին ներգրավված մյուս կողմերի հետ: Մենք ելնում ենք Ադրբեջանի ու Հայաստանի հետ ունեցած մեր առանձնահատուկ հարաբերություններից և պատրաստ ենք օգտագործելու այդ

¹⁷⁹ ԵԱՀԿ նախագահի հայտարարությունը Լիսաբոնի խորհրդաժողովում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման սկզբունքների վերաբերյալ բաղկացած է 3 կետերից. Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականություն, Լեռնային Ղարաբաղին լայն ինքնավարության տրամադրում Ադրբեջանի կազմում, Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական ողջ բնակչության անվտանգության երաշխիքների տրամադրում (Տե՛ս ԵԱՀԿ փաստաթղթեր. Volume 2, Number 3-July 1996, <https://wwwnc.cdc.gov/eid/articles/issue/2/3/table-of-contents>)

հարաբերությունները հոգուտ տարածաշրջանի բոլոր պետությունների: Անկասկած, այդ առանձնահատուկ հարաբերությունները չենք օգտագործի պայմանավորվող կողմերից որևէ մեկի վրա ճշում գործադրելու համար: Մենք ելնում ենք այն բանից, որ միայն Հայաստանն ու Ադրբեջանն են ի վիճակի հասնել պայմանավորվածության: Իսկ Ռուսաստանը Մինսկի խմբի մյուս անդամների հետ կարող են լինել միջնորդներ և ձեռքբեմված պայմանավորվածությունների իրագործման երաշխավորներ»¹⁸⁰: Մոսկվայի այս դիրքորոշումը պարբերաբար հաստատվել է նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ Ռուսաստանի քարձրագույն ղեկավարության տարբեր այլ հայտարարություններում ու մեկնաբանություններում:

Պաշտոնական Մոսկվայի նման դիրքորոշումների հիմքում ընկած էին հակամարտության կարգավորման գործնական ու արդյունավետ մեթոդների հարցում Ռուսաստանի իրական և կանխատեսվող հնարավորությունները: Մյուս կողմից, այդ դիրքորոշումը նաև «վայրկենական» քաղաքականության հետևանքների գնահատականի, տարածաշրջանային խնդիրներին ավելի ծանրակշիռ վերաբերվելու անհրաժեշտության արդյքունք էին:

Քաղաքական որոշ շրջանակներում առայսօր առկա է մի գաղափար, որը տարածված էր հատկապես 1990-ականների կեսերին, գաղափարն այն մասին, որ «Չեչենիան ռուսական Ղարաբաղն է»: Այս մոտեցման տակ հասկացվում էր, թե Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում հայ կական կողմին սատարելը Ռուսաստանում անջատողական շարժումների աճ է առաջացնում¹⁸¹: Սակայն, միջազգային և տարածաշրջանային զարգացումներն ապացուցեցին այդ գաղափարների այդքան էլ իրատեսական չլինելը: Նմանատիպ գաղափարների անհեթեթություն վերաբերյալ կարելի է նշել հետևյալը. մարդիկ զգուշանում են չեչենական դեպքերի կրկնությունից, ովքեր շատ հեռու են ինչպես Չեչենիայում տեղի ունեցած, այնպես էլ Ղարաբաղում ընթացող գործընթացների էությունից: Եվ թե 90-ական թվականների

¹⁸⁰ Пресс-конференция Президента Российской Федерации В.В.Путина по итогам заседания Совета Коллективной Безопасности// Дипломатический вестник. -2001. Июнь.

¹⁸¹ Ахундова Э., Чечня - это российский Карабах // Литературная газета. - 1995. 18 января

սկզբներին սուբյեկտիվ մոտեցմամբ կարելի էր գուգահեռներ անցկացնել տարածաշրջանային հակամարտությանն ենթարկող ու ռուսական որոշ վարչական միավորների ինքնուրույնության և անկախության ձգտումներին, ապա 20-րդ դարի վերջին արդեն ակնհայտ դարձավ և 21-րդ դարի առաջին տասնամյակում էլ փաստարկվեց, որ Լեռնային Ղարաբաղի ազգային-ազատագրական շարժման և միջազգային օգնության ղեկավարի միջև որևէ ընդհանրության բաղադրիչ հնարավոր չէ դիտարկել :

Հարավկովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի թուլացման և գուգահեռ Արևմուտքի ազդեցության ու ժողովրդայնապայմաններում շատ վերլուծաբաններ բավականին թերահավատությամբ վերաբերվեցին ղարաբաղյան հակամարտությանն ու ռուսական պետության քաղաքականության հեռահար նպատակներին: Օրինակ, Հայաստանի ռազմավարական և ազգային հետազոտությանն ենթարկված (ՀՌԱՀ) նշում էին, որ Հարավային Կովկասում ռուսական ազդեցության թուլացման և ամերիկա-եվրոպական ազդեցության ու ժողովրդայնապայմաններում Մոսկվայի համար այդ գործընթացների թուլացման (նամանակահատված՝ դեպի արևելք ընդլայնվելու) համար միակ լծակը մնում են տարածաշրջանային հակամարտությունները. «Եթե գործարկվի հակամարտությունների սրման մեխանիզմը, ձեռք կբերվի Մոսկվային ձեռնտու անկայունությունը, ինչը կթուլացնի Արևմուտքի տնտեսական, հետևաբար՝ քաղաքական ազդեցությունը տարածաշրջանում... Ինչքան մեծ լինի անկայունությունը, այնքան լավ կլինի Ռուսաստանի համար»¹⁸²: Այս կարծիքն էր կիսում նաև «Սպեկտր» ռազմավարական վերլուծությանն ենթարկող ղեկավար Գ. Նովիկովան: Նա նշում է, որ «...Հարավային Կովկասի գոտում ստեղծված status quo-ն, ընդհանուր առմամբ, Ռուսաստանին ձեռնտու է, քանի որ վերջինս հանդիսանում է հակամարտությանն ենթարկվող կարգավորման հիմնական մասնակից: Չկարգավորվածության փաստը թույլ է տալիս մանիպուլյացիայի ենթարկել հակամարտության կողմերին և ամրապնդել սեփական տնտեսական դիրքերը այնպիսի

¹⁸² Հովհաննիսյան Ս., Պետրոսյան Դ., «Հայաստան, Եվրոպա, Ասիա. Միջանցքներ և խաչմերուկներ» Երևան, ՌԱՀ, 2001թ., էջ 268:

գոտում, որտեղ կայ ունեւթյան երաշխիքների բացակայութեամբ հետ կապի արեւմտյան ներդրողներին»¹⁸³:

Նմանատիպ մեկնաբանութեամբ կարելի է համապատասխանեցնել տարածաշրջանային իրականութեանը: Պարզ է, որ Յարավային Կովկասը աշխարհաքաղաքական առումով միասնական շրջան է, իսկ «երկակի խաղերը» ոչ մի կերպ չեն նպաստում տարածաշրջանի կայունութեանը, ավելի, իրավիճակի սրումը սպառնում է նաև Յյուսիսային Կովկասում Ռուսաստանի ազգային անվտանգութեանը: «Ռուսաստանն առավելագույնս օգտագործում է իր ազդեցութեանը հակամարտող կողմերի վրա ռազմական գործողութեան ներքին դադարեցման և իրավիճակի նիվանագիտական լուծում տալու նպատակով...»¹⁸⁴: Մի կողմից, Ռուսաստանը շահագրգռված է Յարավային Կովկասում հակամարտութեան ներքին կարգավորման հարցում, ինչը կապված է նաև իր անվտանգութեան հետ, մյուս կողմից, տարածաշրջանում կոնֆլիկտների առկայութեամբ ավելի ընդգծում Ռուսաստանի դերը դրանց կարգավորման գործում:

Վերջին շրջանում աշխարհաքաղաքական իրադրութեան փոփոխութեան ներքին ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցին Յարավային Կովկասյան տարածաշրջանում քաղաքական իրավիճակի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վրա, քանզի նախորդ մի քանի տարիներին արձանագրվեցին, թերևս, ամենածանր բախումներն ու ամենամեծ կորուստները հայկական և ադրբեջանական ուժերի շփման գծում՝ ներառյալ 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմական իրավիճակը: Ռուսաստան-Արեւմուտք դիմակայութեան զարգացումներն ազդում են ողջ եվրասիայի, նախկին խորհրդային տարածքի յուրաքանչյուր երկրի վրա, որոնք շատ դեպքերում ստիպված են վերանայել իրենց քաղաքականութեանը: Կոնկրետ ԼՂ շարունակվող հակամարտութեան մեջ նման փոփոխութեան ներքին առանցքային դեր են խաղում շարունակվող հակամարտութեան կարգավորման գործում: Սակայն, այդ տեսլականում փորձ է արվում նաև բախվող շահերի համատեքստում բանակցային գործընթացում արձանագրվող

¹⁸³ Новикова Г., Некоторые аспекты политики России на Южном Кавказе, Центр стратегического анализа «Спектр», - 2004. 26 мая.

¹⁸⁴ Հովհաննիսյան Ս., Պետրոսյան Դ., «Հայաստան, Եվրոպա, Ասիա. Միջանցքներ և խաչմերուկներ» Երևան, ՌԱՀԿ, 2001թ., էջ 269:

բացասական արդյունքները կապել հակամարտող կողմերի քաղաքական կամքի բացակայության վրա՝ նշելով, որ խաղաղ բանակցության ունենալու անհաջողության վերաբերյալ Մինսկի խմբի համանախագահներին ուղղված ցանկացած մեղադրանք հանդիսանում է այն հիմնական տարրը, որը խանգարում է խաղաղության գործընթացին¹⁸⁵: Այս համատեքստում տեղին է նաև մեջբերել քաղաքագետներից Լ.Շիրինյանի դեմևս 2014թ. արտահայտած տեսակետը, որ «այն գիտակցությանը, որ Ռուսաստանը մեր խնամակալն է, պետք է կողքի դնել»՝ խաղաղության պարտադրման գործում շեշտը դնելով սեփական ուժերի վրա¹⁸⁶:

Ռուսաստանը, ինչպես և յուրաքանչյուր երկիր, միշտ գործում է առաջին հերթին սեփական շահերից ելնելով, հետո նորմալում է իր հարևանների բարօրության մասին: Հայաստանը և Կասպյան տարածաշրջանի ռուսական շրջանը դիտարկվում է որպես այդ ուղղությամբ ՆԱՏՕ-ի ակտիվացման գսպիչ գործոն¹⁸⁷: Մոսկվայի իրական նպատակները և հետագայում նրա քաղաքականության կուրսի բնույթը Հարավային Կովկասի տարածաշրջանում հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել, թե դեպքերի ընթացքի որ սցենարն է համապատասխանում նրա ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմաքաղաքական շահերին: Եթե ենթադրենք, որ ռազմական գործողության ունենալու վերսկսումը կնպաստի տարածաշրջանում արևմտյան երկրների ազդեցության ուժեղացմանը, ապա ակնհայտ է, որ նոր պատերազմը սկզբունքորեն կտարբերվի նախկինից, որը ուներ բացառապես տեղային բնույթ: Իսկ ռազմական գործողության ունենալու աշխարհագրական տարածքի ընդլայնումը ողջ տարածաշրջանի համար ընդհանրապես և Ռուսաստանի համար մասնավորապես կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Դեպքերի այս ընթացքի պարագայում հակամարտող կողմերից ոչ մեկն էլ վիճակի չի լինի

¹⁸⁵ ՌԴ արտաքին գործերի նախարարություն. Ռուսաստանը որպես միջևորդ օգտագործում է բոլոր մտչելի գործիքները ղարաբաղյան կարգավորման համար, 30.12.2016թ., <http://www.panarmenian.net/arm/news/203193/>

¹⁸⁶ Շիրինյան Լ., Այն գիտակցությանը, որ Ռուսաստանը մեր խնամակալն է, պետք է կողքի դնել, 29.09.2014թ., <http://www.armversion.am/2014/09/29/այն-գիտակցությանը-որ-ռուսաստանը-մեր/>

¹⁸⁷ Корнилов А.А., Региональные приоритеты внешней политики России как отражение нелинейных стратегических подходов / Зарубежное регионоведение: проблемы теории и практики: материалы VII Междунар.науч.конфер.; Под ред. А.А.Корнилова и др., Н.Новгород: ННГУ им. Н.И.Лобачевского, 2015, с. 9, 5-11

վճարելու ռուսական գեների դիմաց այն ծավալով, որով, օրինակ վճարում են Ասիական խախախտվելիանոսյան շրջանի պետությունները:

Մյուս գործոնը, որը, ըստ մասնագետների, պետք է Ռուսաստանին հետ պահի տարածաշրջանում անկայունության խորացման սցենարից, կրում է զուտ տնտեսական բնույթ: Սկսած 2000-ական թվականներից՝ արձանագրվում է ռուսական պետական և մասնավոր կապիտալի խոշոր ներհոսք դեպի Չարավային Կովկասի պետություններ: Ճիշտ, է միասնական ծավալով այն զիջում է արևմտյան կապիտալին, սակայն զբաղեցրած ոլորտների (էներգետիկա, կապ, տրանսպորտային հաղորդակցություն) կարևորության առումով չի կարելի ասել, թե ռուսական կապիտալը անհուսալի կերպով հետ է մնում արևմտյանից: Արդյունքում, չնայած անցած 25 տարիների կտրվածքին՝ Ռուսաստանը դեռևս գտնվում է ԽՍՀՄ-ի փլուզումից հետո արդեն ինքնիշխան պետություններում կորսված դիրքերի վերականգնման ճանապարհին: Բացի այդ, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ձգձգումը դրա մասնակիցների մոտ հանգեցնում է նաև Ռուսաստանի՝ գործընթացին օգնելու անկարողության մտքին, ինչն իր հերթին այդ գործընթացի մեջ այլ դերակատարի ակտիվացման նախադրյալ կարող է հանդիսանալ: Նման մոտեցումը Ռուսաստանի ամենևին ձեռնտու չի լինի և կբերի տարածաշրջանում վերջինիս դիրքերի նահանջին:

Այդպիսով կարելի է եզրահանգել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Լեռնային Ղարաբաղի հակամարտության ծագման և զարգացումների գործընթացներում ակտիվ դերակատարություն է ունեցել Ռուսաստանը: Կարելի է փաստել, որ այդ ազդեցությունը որոշ շրջանում կրել է բացասական բնույթ, ինչը սրել է հակամարտության ընթացքը և խորացրել հակասությունները հակամարտող կողմերի միջև: Որոշ փուլերում Ռուսաստանը դրսևորել է ավելի կոնկրետացված նպատակայնությամբ դիրքորոշում և հստակ միջոցառումներ խրախուսել կոնֆլիկտի կարգավորման ուղղությամբ, սակայն միանշանակ առաջնորդվելով սեփական շահերից ու կոնկրետ ժամանակահատվածին բնորոշ հետաքրքրությունների շրջանակներից: Ամեն դեպքում, Ռուսաստանի Դաշնության ներգրավվածությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացին սկզբունքորեն տարբերվում է թե միևսկի խմբի մյուս

համանախագահների, թե ընդհանրապես այլ մասնակցություն ունեցող դերակատարների ակտիվություն աստիճանից:

4.2. Ռուսաստանը որպես Միևսկի խմբի համանախագահ և մասնակցությունը Ղարաբաղյան հիմնախորհրդի բանակցային ձևաչափում

Ղարաբաղյան հակամարտությունը, ժամանակագրական առումով լինելով առաջինը խորհրդային և հետխորհրդային իրականության մեջ, միաժամանակ, աչքի է ընկնում նաև իր կարգավորման բարդությունամբ: Հիմնախորհրդի կարգավորման գործընթացը պահանջում է նաև գիտահետազոտական վերլուծության ենթարկել բանակցային ձևաչափի հստակեցման ու դրա ապագահնարավոր փոփոխությունների համադրման տեսակետից:

Միջազգային ասպարեզում հայտնված Արցախյան հակամարտության վրա ազդում են տարբեր աշխարհաքաղաքական գործոններ: Ի՞նչ դեր ունի Արցախի հարցը գլոբալ քաղաքականության հաշվարկներում: Արցախյան «թնջուկի» այս կամ այն ձևով լուծումը, ելնելով ներկա իրողություններից, բավական լուրջ գործոն է աշխարհում եղանակ ստեղծող պետությունների հաշվարկներում:

Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքն ավելի հեշտ կհաղթանակեր, հակամարտությունը ողբերգական ընթացք չէր ունենա և ավելի արագ կլուծվեր, եթե չլինեին արտաքին աշխարհաքաղաքական գործոնները: Դրանցից առավել կարևորներն են «առաջին կարգի» ուժային կենտրոնների, մասնավորապես՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի շահերի բախումն Անդրկովկասյան տարածաշրջանում, Թուրքիայի պանթուրքական նկրտումները, Թուրքիայի և Իրանի շահերի բախումը Հարավային Անդրկովկասում, պայքարը Կասպից ծովի ընդերքի նավթային պաշարների և ապագանավթամուղների համար:

Արցախյան հակամարտության վրա ազդող տեղական և արտաքին գործոններից ԼՂՀ-ի և Հայաստանի համար միանշանակ նպաստավոր են տեղական գործոնները, այն է՝ պատմական, տնտեսական, ազգային-էթնիկական գործոնները, բնակչության կամքը: Աշխարհաքաղաքական գործոններից, ցավոք, մեզ համար նպաստավոր են Ռուսաստանի, Ֆրանսիայի շահերը, իսկ Ադրբեջանի համար այս տեսանկյունից

առավել նպաստավոր պայմաններ են՝ ԱՄՆ-ի և ԵՄ (Գերմանիա, Մեծ Բրիտանիա) շահերը: Այսինքն, առանձին խմբի ուժային կենտրոնների շահերի բախումը մակրոտարածաշրջանում առավելապես ի նպաստ Ադրբեջանի է: Մյուս խմբի ուժային կենտրոնների շահերի բախումը մակրոտարածաշրջանում ցույց է տալիս, որ այդ գործոնը ակնհայտորեն չի ազդում հակամարտող կողմերից որևէ մեկի օգտին: Մասնավորապես, Թուրքիայի շահերը հօգուտ Ադրբեջանի են, Իրանինը՝ հօգուտ Չայաստանի և ԼՂ-ի: Տեսակետ է արտահայտվել նաև, որ Ղարաբաղյան հիմնախնդրի և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի լուծումը ձգձգվելու է մինչև Չարավկովկասյան տարածաշրջանում միջազգային ուժերի ազդեցությունների հստակ սահմանազատումը¹⁸⁸:

Ռուսաստանի Դաշնությանը Չայաստանի ռազմավարական դաշնակիցն է և Երևանի հետ կապված է ոչ միայն երկկողմ համաձայնագրերով, այլև՝ ՅԱԴԿ ռազմական բլոկի շրջանակներում ձեռքբերված պարտավորություններով: Բացի դրանից, Մոսկվայի համար չափազանց կարևոր է Չայաստանում սեփական ռազմական ներկայությունը պահպանելը՝ տարածաշրջանում ուժերի հավասարակշռմանն աջակցելու համար՝ որպես տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ապահովման առաջնային հենք¹⁸⁹: Ծահարկելով Արցախյան հակամարտությունը՝ Ռուսաստանը փորձում է ազդեցությունն ընդլայնել Չարավային Կովկասում և մասնավորապես, որոշակիորեն վերահսկողությունն է իրականացնում Չայաստանի ներքաղաքական կյանքում: Սակայն, միաժամանակ պետք է նկատի առնել նաև, որ Չայաստանի տնտեսական խոշոր գործընկերը ևս Ռուսաստանն է:

Ամերիկայի Միացյալ Նահանգներն իր դիրքորոշումը որոշակիորեն հստակեցրել է դեռևս 2009 թվականի նոյեմբերին՝ հանձինս պետքարտուղարի առաջին օգնական Թինա Քեյդենատի մեկնաբանության, ով հասկացնել տվեց, որ եթե Ադրբեջանը ռազմական գործողության փորձ ձեռնարկի Լեռնային Ղարաբաղում, ապա ԱՄՆ-ը կճանաչի նրան կախությունը: Տրամաբանական է, որ հաշվի առնելով

¹⁸⁸ Американизация Кавказа как проигранный тендер, 10 марта 2008 / Информ. агенство Полит.ру, http://www.polit.ru/author/2006/07/05/sng_usa.htm

¹⁸⁹ Погосян С.С., Проблема непризнанных государств в российско-американских отношениях / Актуальные проблемы внутренней и внешней политики Республики Армения / Наири: Альманах, Вып. 4, Н.Новгород, 2008, с. 27, 25-28

կողմերի տրամադրության տակ ժամանակակից հարձակողական սպառազինության առկայությունը, պատերազմը չի սահմանափակվի բուն LՂՅ-ի տարածքով: Դա նշանակում է, որ հարվածի տակ կհայտնվի ադրբեջանական ողջ նավթային ենթակառուցվածքը, որը կոչնչացվի հաշվված ժամերի ընթացքում (ինչը քաջ գիտակցում են Բաքվում): Համաշխարհային առաջատար նավթային հսկաները արդյոք թույլ կտա՞ն նման իրավիճակում սանձազերծել արկածախնդրությունը՝ կասայան քամուն հանձնելով իրենց միլիարդները:

Հիմնախնդիրն այսպիսով ընդունել է միջազգային իրավաբանական կարգավիճակ և հիմնախնդրի կարգավորման հարցով, արդեն նշվեց, 1992 թվականից զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը (OSCE Minsk Group), որի անդամներն են Բելառուսը, Գերմանիան, Իտալիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Թուրքիան, Հայաստանը և Ադրբեջանը: Մինսկի խմբի ղեկավարումն իրականացնում է համանախագահությունը, որի մասին որոշումն ընդունվել է ԵԱՀԿ Բուդապեշտի գագաթաժողովում, իսկ մանդատը հաստատվել է 1995թ.: Մինսկի խումբը համանախագահում են Ռուսաստանը, Ֆրանսիան և ԱՄՆ-ը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի նպատակը ԵԱՀԿ սկզբունքների, պարտավորությունների և դրույթների հիման վրա ճգնաժամի խաղաղ լուծման համար մշտական քննարկման ապահովումն է: 1995թ. օգոստոսի 10-ին ԵԱՀԿ գործող նախագահը ստեղծել է ղարաբաղյան հակամարտության հարցով ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի պաշտոնը, որը 1996թ. հունիսից զբաղեցնում է դեսպան Անջեյ Կասպրշիկը (Լեհաստան): Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման գործում Մինսկի խմբին աջակցելու նպատակով ԵԱՀԿ-ի շրջանակներում 1994թ-ին ստեղծվել է նաև Բարձր մակարդակի ծրագրման խումբ (ԲՄԾԽ-High Level Planning Group), որի խնդիրն է, անհրաժեշտության դեպքում, գործող նախագահին առաջարկություններ ներկայացնել ԵԱՀԿ բազմազգ խաղաղապահ ուժերի՝ ԼՂ-ում տեղակայման, վերջիններիս գործողությունների և այլ տեխնիկական ու կազմակերպչական հարցերի վերաբերյալ:¹⁹⁰

¹⁹⁰ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը ԵԱՀԿ-ում, ԵԱՀԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցչությունն, www.osce.mfa.am/hy/nkr-OSCE/

ԵԱՅԽ գագաթաժողովներում ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ առաջին անգամ հիշատակվել է 1994թ. Բուդապեշտում տեղի ունեցած հանդիպման ժամանակ: 1994թ. Բուդապեշտի գագաթաժողովի արդյունքում ընդունվեց «Նոր դարաշրջանում իրական գործընկերության ճանապարհին» խորագրով հռչակագիրը: Տարածաշրջանային հարցերին նվիրված որոշումների հատվածում Ղարաբաղյան հակամարտությանը հատուկ տեղ հատկացվեց «ԵԱՅԽ գործունեության ակտիվացումը՝ կապված ղարաբաղյան հակամարտության հետ» բաժնում: Դրանով Բուդապեշտի գագաթաժողովում ամուր հիմք դրվեց Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման և բանակցային գործընթացի համար:

Յարկ Է նշել, որ ի սկզբանե ձևավորվել է հակամարտության կարգավորման երկու մոտեցում՝ փուլային և փաթեթային: Փուլային լուծման տրամաբանությունը ենթադրում է համաձայնության ձեռքբերում ԼՂ կարգավիճակին չառնչվող հարցերում: Մինչև 1995թ. վերջը գործընթացում գերիշխել է այդ մոտեցումը, և հակամարտության կողմերը բանակցել են զինված հակամարտության դադարեցման մասին քաղաքական մեծ համաձայնագրի կնքման շուրջ: 1995թ. վերջին բանակցային գործընթացը փակուղի է մտել, ԵԱՅԿ նախարարների խորհրդի որոշմամբ սկսվել են զուգահեռ, ուղիղ բանակցություններ Յայաստանի և Ադրբեջանի նախագահների հատուկ բանագնացների միջև:

1996թ. դեկտեմբերին ԵԱՅԿ Լիսաբոնի գագաթնաժողովում փորձ է արվել բանակցությունները դուրս բերել ստեղծված փակուղուց, սակայն գագաթնաժողովի գործող նախագահի հայ տարարությունը, որով վերահաստատվում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և նախատեսում ԼՂ-ին ամենաբարձր կարգավիճակի շնորհում Ադրբեջանի սահմաններում, ավելի է խորացրել փակուղային իրավիճակը: Լիսաբոնում տեղի ունեցած գագաթնաժողովի ժամանակ Յայաստանը վետո կիրառեց համաժողովի եզրափակիչ փաստաթղթի մեջ նախագահող երկրի ներկայացուցչի ձևակերպման նկատմամբ, արդյունքում հայ տարարությունը տեղափոխվեց հավելված: Դրանից հետո բանակցությունները փասիվ զարգացումներ են ունեցել:

Ստեղծված իրավիճակը հանգեցրել է ԼՂ-ի կողմից փուլային կարգավորման գաղափարի բացարձակ մերժմանը:

Այնուհետև, ՅՅ ղեկավարությանը որդեգրել է հակամարտության կարգավորման փաթեթային կամ համապարփակ մոտեցումը և առանց նախապայմանի բանակցությունները վերսկսելու դիրքորոշումը: Մինսկի խմբի համանախագահները 1998թ. սեպտեմբերյան այցի ժամանակ ներկայացրել են «ընդհանուր պետության» գաղափարը, որը վերջնական ձևակերպվել է նոյեմբերին ներկայացված պաշտոնական առաջարկում: Փաստաթղթում չեն ներառվել «ինքնավարություն» ու «Լիսաբոնի սկզբունքներ» ձևակերպումները, այլ ամփոփվել են ինքնորոշման բոլոր նախադրյալների կիրառելի տարրերը, փորձ է արվել գտնել միջին տարբերակ, որը չի նախասահմանում ԼՂ կարգավիճակը, այլ կողմերին հնարավորություն է տալիս համաձայնության գալու դրա շուրջ բանակցությունների միջոցով՝ ԼՂ-ն դիտելով Ադրբեյջանի հետ միևնույն հարթության վրա:

Նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանն իր հուշերում գրել է. «Այն ժամանակ խոսքը Լեռնային Ղարաբաղը Լաչինի մի հատվածով Յայաստանի սուվերենության տակ դնելու մասին էր, իսկ Ադրբեյջանը պետք է իրավունք ստանար ՅՅ տարածքով անխափան կապ հաստատել Նախիջևանի հետ»¹⁹¹: Տարածքների վերադարձի հարցը պետք է քննարկվեր միայն Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հստակեցումից հետո: Սակայն Բաբու վերադառնալուց և ներքին քննարկումներ անցկացնելուց հետո Յեյ դար Ալինը հրաժարվել է այդ ամենից:

Արդի շրջանում բանակցությունների հիմքում ընկած է խնդրի կարգավորման 3 սկզբունք՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունք, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում և տարածքային ամբողջականություն: Այս 3 կետերի վերաբերյալ կարծիքներն ու մեկնաբանությունները խիստ տարբեր են: Ոմանք կարծում են, որ ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքները միմյանց հակասում են, ուստի խնդիրը երբևէ չի կարող

¹⁹¹ ԵԱՀԿ Մինսկի խումբ, մադրիդյան սկզբունքներ. ինչ գիտենք Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի մասին, 14.04.2016թ., www.ankakh.com/article/?id=37398/yeahk-minski-khumb--madridyan-skzbunqnyer

լուծվել այս ձևաչափով: Սակայն ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը «Ինչո՞ւ դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը» ծավալուն հոդվածում դիտարկում է այս երկու սկզբունքների հարաբերակցությունը միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերում և ցույց տալիս, որ միջազգային իրավունքի տեսանկյունից կասկածից վեր է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից անկախության հռչակումը և իրականացումը միանգամայն իրավաչափ է, իսկ Բաքվի՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքին հակադրելու փորձերը հակասում են միջազգային իրավունքին, ինչպես նաև ՄԱԿ-ի առջև Ադրբեջանի ստանձնած պարտավորություններին:¹⁹²

Արցախյան հակամարտության կարգավորման շրջանակում հակամարտողների կողմից ընդունվել են մի քանի փաստաթղթեր, սակայն դրանցից ամենակարևորներն են՝ Մադրիդին և Կազանին, որոնք արտահայտում են ոչ այնքան հակամարտության բովանդակությունը, որքան մասնակից կողմերի նկատմամբ աշխարհաքաղաքական ազդեցիկ ուժերի ազդեցությունը: 2007թ. նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից ներկայացվել են մադրիդյան առաջարկները, որոնց հիմքում կրկին վերոնշյալ 3 սկզբունքներն էին: Ադրբեջանը, որ նախապես համաձայնել էր որպես հիմք ընդունել մադրիդյան սկզբունքները, մեկ տարուց ավելի ժխտում էր նույնիսկ դրանց գոյությունը: Իսկ այդ ընթացքում շարունակվում էին բանակցություններն այդ սկզբունքների շուրջ: Մադրիդյան սկզբունքները գաղտնի էին պահվում, սակայն հետագայում գաղտնազերծվեցին դրանց մի շարք կետեր: Մինսկի խմբի համանախագահները ներկայացրեցին դրանք 2009թ. հունվարի 10-ին Լ'Ակվիլայում արված հայտարարությունում: Դրանք են.

¹⁹² Քոչարյան Շ., «Ինչո՞ւ դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը», www.mfa.am/u_files/file/Article_nkr_arm.pdf, որը հանդիսանում է 2013թ. սեպտեմբերին Ֆրանսերեն լեզվով լույս տեսած «Ճգնաժամերի կանխարգելում և խաղաղաշինություն» հոդվածների ժողովածուների երրորդ հատորում համանուն վերնագրով հրատարակված հոդվածի թարմացված և լրամշակված տարբերակը (Chavarche Kotcharian, «Pourquoi le conflit du Haut-Karabagh n'est toujours pas réglé?», Ed. JeanPierre Vettovaglia, Prévention des crises et promotion de la paix (volume III). Déterminants des conflits et nouvelles formes de prévention, Bruylant, septembre 2013, pp. 569-593):

1. Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեյջանի վերահսկողության տակ:

2. Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակ, որը կտրամադրի անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ:

3. Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը կապող միջանցք:

4. Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա որոշում՝ իրավականորեն պարտադիր բնույթ կրող կամարտահայտման միջոցով:

5. Ներքին տեղահանված և փախստական հանդիսացող բոլոր անձանց՝ իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք:

6. Անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն նաև խաղաղապահ գործունեություն:

Փաստաթուղթը ունի նաև եզրափակում, որտեղ, բացի ամփոփիչ գնահատականներից, նշվում է, որ Հիմնարար սկզբունքները նախատեսում են 4 հանձնաժողովի ստեղծում: Առաջինը պետք է մշակի «Պլեբիսցիտի իրականացման մանրամասները», երկրորդը պետք է հստակեցնի «Միջանցքի ապագա կարգավիճակը», երրորդը պետք է մշակի «Քելբաջարի շրջանի ամբողջական փոխանցումը Ադրբեյջանին», և չորրորդը պետք է քննարկի «Հիմնարար սկզբունքների իրագործմանը առնչվող լրացուցիչ հարցեր» (2007թ. նոյեմբեր 29, Մադրիդ)¹⁹³:

Արցախյան հակամարտության կարգավորմանը կոչված մյուս՝ Կազանի փաստաթուղթը, որը հենվում է Մադրիդի փաստաթղթի վրա, ունի այսպիսի բովանդակություն:

Տարածքներ: Լեռնային Ղարաբաղին հարակից ադրբեյջանական բոլոր տարածքները, որոնք գտնվում են հայկական վերահսկողության տակ, վերադարձվում են Ադրբեյջանի վերահսկողության տակ: Վերադարձի մանրամասները կողմերը համաձայնեցնում են խաղաղության համաձայնագրով: Առաջին փուլում վերադարձվում են Աղդամի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Չանգելանի և Ղուբաթլուի շրջանները: Հետագայում վերադարձվում են Քելբաջարի շրջանն ու Լաչինի շրջանի ոչ միջանցքային հատվածները: Հայկական ուժերը դուրս են բերվում Քելբաջարի շրջանից: Նախքան շրջանի վերադարձը

¹⁹³ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքները: <http://armtimes.com/hy/article/25855>

Ադրբեջանի վերահսկողության տակ, այն տեղ թույլատրվում է հայ կական սահմանափակ գործաժողովում՝ մինչև խաղաղության համաձայնագրի ստորագրումը: Հայ կական սահմանափակ գործաժողովման տեղակայվելու վայրը որոշելու է Միջազգային անցումային հանձնաժողովը: Քելբաջարի շրջանը, նախքան Ադրբեջանի վերահսկողության տակ վերադարձը, ԵԱՀԿ հանձնաժողովի միջոցով գտնվելու է Միջազգային անցումային հանձնաժողովի դիտարկման տակ: Հանձնաժողովում ներառվելու են հայ և ադրբեջանցի ներկայացուցիչներ: Միջանկյալ ժամանակահատվածում խրախուսվելու է, որպեսզի Քելբաջարի շրջանի հայ բնակչությունը հեռանա այն տեղից: Ադրբեջանի ներքին տեղահանված անձանց թույլ է տրվում վերադառնալ Քելբաջարի շրջան խաղաղության համաձայնագրի ու ժիմեջ մտնելուց հինգ տարի անց: Լաչինի շրջանի այն հատվածները, որոնք դուրս են Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը կապող միջանցքից, Ադրբեջանի վերահսկողության տակ են վերադարձվում խաղաղության համաձայնագրի ու ժիմեջ մտնելուց հետո:

Անվտանգության երաշխիքներ: Հայ կական ուժերի կողմից վերահսկվող ադրբեջանական շրջաններից դուրս բերվելուց հետո այն տեղ տեղակայվում են խաղաղապահ ուժեր՝ ապառազմականացումն ու անվտանգությունը դիտարկելու նպատակով: Խաղաղապահ ուժերը ձևավորում են պետությունները՝ կամավոր հիմունքներով: Խաղաղապահների ընտրությունը իրականացվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Յուրաքանչյուր կողմը ունի վետոյի իրավունք մյուս կողմի ընտրության վրա: Կողմերը պարտավորվում են միմյանց դեմ ուժ չկիրառել Լեռնային Ղարաբաղում և նրան հարակից շրջաններում: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, խորհրդակցելով Հայաստանի և Ադրբեջանի հետ, մշակում են երկկողմ և համատեղ անվտանգության երաշխիքներ և հավաստիացումներ՝ համաձայնության կատարմանը և Հարավային Կովկասում ընդհանուր անվտանգությանը սատարելու վերաբերյալ: Ադրբեջանը պարտավորվում է չունդարկել ռազմական անձնակազմ և սպառազինություններ ներկայիս շփման գծից այն կողմ, բացառությամբ ոստիկանական ստորաբաժանումների և ադրբեջանա-իրանական սահմանի երկայնքով գտնվող սահմանապահ զորքերի:

Լեռնայի Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ: Մինչև Լեռնայի Ղարաբաղի իրավական կարգավիճակի որոշումը, Լեռնայի Ղարաբաղը ստանում է միջանկյալ կարգավիճակ, որը նրա բնակիչներին տալիս է որոշակի իրավունքներ և արտոնություններ: Դրանք շարադրվելու են խաղաղության համաձայնագրում, մասնավորապես՝ Լեռնայի Ղարաբաղի բնակիչները ունենում են ժողովրդավարական հասարակության մեջ սոցիալական ու տնտեսական կենսագործունեությունն ու անվտանգությունը պաշտպանելու և վերահսկելու իրավունք: Լեռնայի Ղարաբաղի բնակիչների իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգվում են: Լեռնայի Ղարաբաղի բնակչությունը՝ միջանկյալ շրջանում Լեռնայի Ղարաբաղը կառավարելու նպատակով, իրավունք է ստանում ընտրել իշխանության մարմիններ, որոնք իրականացնում են օրենսդիր և գործադիր իշխանությունն Լեռնայի Ղարաբաղի ներքին հարցերում: Արդարադատություն իրականացնելու նպատակով Լեռնայի Ղարաբաղը իրավունք ունի հիմնել դատարաններ: Լեռնայի Ղարաբաղի պաշտոնյաները արտաքին շփումներ իրականացնելու լիազորություններ կունենան այն ոլորտներում, որոնք սահմանվում են խաղաղության համաձայնագրով: Լեռնայի Ղարաբաղի միջանկյալ իշխանությունները կարող են ունենալ դիտորդի կարգավիճակ ԵԱՀԿ այն նստաշրջաններում, որոնցում քննարկվում են անմիջականորեն Լեռնայի Ղարաբաղին վերաբերող հարցեր: Նրանք կարող են անդամակցել միջազգային այն կազմակերպություններին, որոնցում միջազգայնորեն ճանաչված լինելու կարգավիճակը նախապայման չէ: Լեռնայի Ղարաբաղն իրավունք է ունենում ստանալ արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակություն՝ պայմանով, որ այդ օժանդակությունը նախատեսված լինի մարդու իրավունքների, խաղաղ տնտեսական և ժողովրդավարական զարգացման, մշակութային և առևտրային կապերի կամ հիմնական մարդասիրական պահանջների բավարարմանը:

Ազատ կամարտահայտություն: Լեռնայի Ղարաբաղի իրավական վերջնական կարգավիճակը որոշվում է Լեռնայի Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտության միջոցով: Քվեարկության ժամկետներն ու մանրամասները կողմերը համաձայնեցնում են ապագա

բանակցությունը ներկայումս: Լեռնային Ղարաբաղի բնակչությունն ասելով հասկացվում է 1988թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչև հակամարտության սկիզբը: Քվեարկության ժամանակ ապագա կարգավիճակի հարցի կամ հարցերի ձևակերպման սահմանափակում չի լինելու և կարող է թույլ տալ յուրաքանչյուր կարգավիճակի հնարավորություն:

Լաջիևի միջանցք: Համաձայնեցված լայնքի միջանցքը պետք է Լեռնային Ղարաբաղը կապի Հայաստանի հետ: Մինչև Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը այդ միջանցքը գտնվում է Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր իշխանությունների վերահսկողության տակ: Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումից հետո, միջանցքի օգտագործման գործընթացը կկարգավորվի՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակը:

Փախստականներ: Բոլոր ներքին տեղահանված անձինք և փախստականները ունեն կամավորվ վերադարձի իրավունք այն պահից, երբ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարը կհայտարարի, որ նախկին բնակավայրի անվտանգությունն ապահովված է: Իրենց բնակավայրեր վերադարձած անձինք օգտվում են մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից՝ առանց որևէ խորականության:

Ասպարջափակումներ: Կողմերի միջև բաց և անարգել տրանսպորտային և հաղորդակցային կապերը խրախուսվում են ողջ տարածաշրջանում, ներառյալ՝ Ադրբեջանի ուղիղ և անարգել ցամաքային կապը Նախիջևանի հետ, բոլոր սահմանների բացումը և հաղորդակցային ուղիների վերագործարկումը:

Դոնորների խորհրդաժողով: Միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից հրավիրված միջազգային դոնորների խորհրդաժողովը, համագործակցելով համանախագահող երկրների հետ, ստեղծում են հիմնադրամ՝ ռազմական գործողություններից տուժած շրջաններում և Լեռնային Ղարաբաղի ներսում ակնազերծման ու ենթակառուցվածքների վերականգնման համար:

Հանձնաժողովներ: Կողմերը, համագործակցելով համանախագահող երկրների հետ, ձևավորում են առանձին հանձնաժողովներ: Այդ հանձնաժողովները գործում են կոնսենսուսի հիմունքներով և զբաղվում են Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշման հանրաքվեի մանրամասների ու ժամկետների հստակեցմամբ, Լաչինի միջանցքին վերաբերող տեխնիկական հարցերի և Քելբաջարի շրջանը ԵԱՀԿ հանձնաժողովի միջազգային մշտադիտարկումից Ադրբեջանի վարչական վերահսկողության ներքո փոխանցելու ընթացակարգերի մշակումով¹⁹⁴:

2008-2011թթ. Հայաստանի և Ադրբեջանի նախագահները Ռուսաստանի ղեկավարության հրավերներով մի շարք հանդիպումներ են ունեցել Ռուսաստանում և հրապարակել համատեղ հռչակագրեր: Կարծում ենք, սակայն այդ ամենն առ ոչինչ է, քանի դեռ Ադրբեջանը շարունակում է գործել խնդրի կարգավորման ռազմական ոգով: Ադրբեջանը բանակցային գործընթացը խոչընդոտելու նպատակով շարունակական փորձեր է կատարում հարցի քննարկումը Մինսկի խմբի համանախագահների ձևաչափից դուրս բերելու ուղղությամբ: Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները պարբերաբար հայտարարում են Մինսկի խմբի համանախագահության գործունեության անարդյունավետության մասին: Թե՛ համանախագահող երկրների, թե՛ միջազգային կառույցների կողմից հակամարտության կողմերին կոչեր էին արվում ձեռնարկելու քայլեր՝ շփման գծի վրա լարվածությունը թուլացնելու ուղղությամբ: Մասնավորապես՝ միջնորդներն առաջարկում էին փոխադարձաբար հետքաշել դիպլոկահարներին և ձևավորել շփման գծի վրա միջադեպերի հետաքննության մեխանիզմ: Թե՛ Հայաստանը և թե՛ Լեռնային Ղարաբաղը հայտնել են իրենց պատրաստակամությունը կյանքի կոչելու այդ առաջարկությունները, իսկ Ադրբեջանը՝ ոչ: Այստեղ կարելի է նաև նկատել, որ ռուսական կողմը շատ անգամներ է փաստարկում հակամարտության կողմերի դիրքորոշումների վերջնական ու կատարյալ հստակեցման անհրաժեշտության մասին՝ նշելով «անհրաժեշտ է համաձայնեցնել մի շարք բարդ դետալներ, որոնք վերաբերում են շատ նրբանկատ հարցերի, այդ թվում՝

¹⁹⁴ Կազանի փաստաթուղթ, Առավոտ օրաթերթ, <http://www.aravot.am/2016/06/23/707410/>

ներքաղաքական» ձևակերպումը, ինչն ըստ Ռուսաստանի՝ կհանդիսանա հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործուն տարբերակը¹⁹⁵:

Խնդիրը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու վերաբերյալ միջազգային հանրության կոչերին հակառակ՝ վերջին տարիների ընթացքում Ադրբեջանը մի քանի տասնյակ անգամ ավելացրել է իր ռազմական ծախսերը: Հետևողականորեն սպառազինվելով՝ Ադրբեջանը գերազանցել է ԵԱՀԿ-ի և Եվրոպայի սովորական զինված ուժերի մասին պայմանագրով նախատեսված բոլոր վերին շեմերը: Եվ այդ առումով՝ ապրիլի սկզբին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ սանձազերծված քառօրյա պատերազմը սպասելի էր: Դա հարված էր ոչ միայն հայկական կողմին, այլև միջազգային հանրությանը: Նշված հանգամանքը ոչ ուղղակիորեն փաստարկվել է միջազգային շատ հաստատությունների կողմից (օրինակ՝ International Crisis Group-ը)՝ ընդգծելով, որ շփման գծում հրադարարի պահպանման և ակտիվ գործողությունների զսպման գործուն դիտարկվում է նաև հայկական կողմի մոտ հեռահար խոցման կիրառության սպառազինության առկայությունը: Միաժամանակ, նշվում է այն իրատեսական վտանգը, որ թեկուզև փոքր, տեղային բախումները կարող են կայծ հանդիսանալ լայմնաձավալ պատերազմական գործողությունների համար¹⁹⁶:

Որպես այդպիսին՝ ավելի քան երկու տասնամյակ ԵԱՀԿ Մինսկի խումբը շարունակում է ջանքերը՝ ուղղված Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորմանը՝ միտված Մինսկի խորհրդաժողովն իրականություն դարձնելուն: Ինչպես հավաստում են իրենք՝ կարգավորման միջնորդները, այդ ընթացքում հաջողվել է որոշակիորեն մերձեցնել կողմերի տեսակետները, սակայն տարածայնությունները դեռևս առկա են: Հայկական կողմից հնչեցվում է նաև Արցախի Հանրապետությանը որպես բանակցային կողմ ներգրավելու արդարացի պահանջը, ինչը հիմնավորվում է 3 առաջնային գործոններով. առաջին, առանց Արցախի

¹⁹⁵ Լավրով Ս., Ղարաբաղյան հակամարտությունը կարող է կարգավորվել միայն բանակցությունների միջոցով, 06.06.2017թ., <https://news.am/arm/news/394058.html>

¹⁹⁶ Минасян С., В докладе ICG по Карабаху названы факторы сдерживания от полномасштабной войны, ЕРЕВАН, 2 июня 2017. Новости-Армения, <http://newsarmenia.am/news/interview/eskalatsiya-v-karabakhe-ugrozaet-polnomasshtabnymi-boevymi-deystviyami-ekspert/>

Ներգրավվածության Չայաստանի Չանրապետությանը հանդես է գալիս որպես այդտեղի ազգաբնակչության անվտանգության երաշխավոր, երկրորդ, Մինսկի խմբի համանախագահները և բանակցային գործընթացին որևէ այլ մասնակցություն ցուցաբերած ներկայացուցիչներ բանակցությունների շրջանակներում ակտիվ հանդիպումներ են ունենում նաև պաշտոնական Ստեփանակերտում, և երրորդ, հակամարտության կարգավորմանն առնչվող ցանկացած որոշում չի կարող ընդունվել Արցախի ազգաբնակչության¹⁹⁷ և վերջինիս կողմից օրինական ու միջազգային իրավական նորմերին համապատասխան կայացած իշխանությունների կամքին հակառակ (կամ առանց դիրքորոշումները հաշվի առնելու): Փորձագետների կողմից այս Յիրողությունները գնահատվում են որպես անվերապահ ապացույց Արցախի Չանրապետությանը որպես ակտիվ բանակցային կողմ դիտարկելու գործում¹⁹⁸: Ավելին, Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպումների ժամանակ Չայաստանի կողմից անընդհատ շեշտադրվում է այն կարևոր իրողությունը, որ Ադրբեյջանը շարունակում է ոչ միայն արհամարհել, անտեսել համանախագահների կոչերն ու հորդորները, այլև միշտ դրսևորում է լրիվ հակառակ մոտեցում: Այդպիսով հասունանում է մի իրավիճակ, որ եռանախագահող երկրները՝ որպես միջնորդության, հիմնախնդրի կարգավորմանն ուղղված ջանքերի միջազգային մանդատ ունեցող ձևաչափ, պետք է ոչ միայն հայտարարություններ անեն, այլև համապատասխան կոնկրետ գործողությունների դիմեն, որպեսզի սանձեն Ադրբեյջանի այս ապակառուցողական և սարքիչ քաղաքականությունը¹⁹⁹:

Այս համատեքստում կարևորվում է այն հանգամանքը, որ արդի փուլում հիմնախնդրի կարգավորման գործընթացի վրա ազդեցություն կարող է ունենալ նաև Չայաստանի Չանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի Չանրապետության իրավական հիմքով ճանաչումը,

¹⁹⁷ Захарова М., Компромисс по Нагорному Карабаху должен быть не в ущерб непосредственно живущим там людям, 15.06.2017, <https://news.am/rus/news/395494.html>

¹⁹⁸ Маркаров А., В переговорном процессе Республику Арцах необходимо рассматривать в качестве игрока, 20 май 2017, <https://armenpress.am/rus/news/891569/v-peregovornom-processe-respubliku-arcakh-neobkhodimo-rassmatrivat.html>

¹⁹⁹ Չասունանում է Ադրբեյջանին սանձելու գործողություններին դիմելու իրավիճակը. Նալ բանդյանը՝ Մտ համանախագահներին, 10.06.2017թ., <https://hayacq.com/17813-.html>

ինչը հիմք կհանդիսանա ՀՀ և ԼՂՀ՝ պաշտոնական ճանաչումից ծագող հարաբերությունների կարգավորման, Արցախի անվտանգության ապահովման և ամրապնդման գործում Հայաստանի իրավունքների ու պարտականությունների որոշակիացման, ազգային շահի և պետական քաղաքականության սահմանման, ինչպես նաև հետիսկամարտյան վերականգնման աշխատանքներին Հայաստանի մասնակցության համար: Սակայն պետք է գնահատել նաև այդ քայլի բացասական հետևանքները: Պրոֆեսոր Ա.Մարկարովը հիմնավոր է համարում, որ տվյալ քայլը Ադրբեյջանը կընկալի որպես բանակցային գործընթացի ավարտ և հայկական կողմից համակարտություն հարցի լուծման տարբերակ, ինչի պարագայում այլ ելք չի ունենա, քան ակտիվ ու լայնածավալ ռազմական գործողությունների սկսումը: Տվյալ դեպքում ամբողջապես անորոշ է, թե միջազգային հանրությունը ինչքանով ցանկություն կարտահայտի կամ միասնական կլինի Ադրբեյջանին նման վարքագծի հետպահելու²⁰⁰:

Այդպիսով, թեև ԼՂ հակամարտության բանակցային գործընթացը շարունակում է մնալ ակտիվ մակարդակի վրա, այնուամենայնիվ, հակամարտության խաղաղ կարգավորման հարցում դեռևս չի գրանցվել էական առաջընթաց: Հայկական կողմը շարունակում է միջնորդական գործունեության նախապատվությունը տալ ԵԱՀԿ Մինսկի խմբին: Մինչ օրս բանակցությունների արդյունքում հակամարտող կողմերի համար ընդունելի լուծում չի գտնվել, չնայած որ ԼՂ և Հայաստանի հանրապետությունները պատրաստակամություն և քաղաքական կամք են դրսևորում գտնելու հակամարտության կարգավորման փոխընդունելի տարբերակ:

Մինևույն ժամանակ, Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման քաղաքական նախադրյալներ կարելի է համարել միջազգային հանրության կողմից ուժային միջոցների կիրառման բացառումը, տարածաշրջանի պետություններում ընթացող ժողովրդավարացման գործընթացները, հակառակորդին զսպելու համար Հայաստանի Հանրապետության՝ որպես ԼՂՀ ազգաբնակչության

²⁰⁰ Маркаров А., Признание независимости НКР со стороны Армении переведет конфликт в новый этап, 4 май 2016, <https://armenpress.am/rus/news/846139/priznanie-nezavisimosti-nkr-so-storoniy-armenii-perevedet.html>

անվտանգության երաշխավորի, պաշտպանական համակարգի բավարարողությունը և աշխարհասփյունը հայության քաղաքական, տնտեսական ու մտավոր ներուժի համախմբվածությունը:

2016թ. ապրիլյան պատերազմից հետո Ղարաբաղյան խնդրի կարգավորման բանակցությունները նոր փուլ մտան՝ փակուղի, առնվազն այդպիսի եզրակացության կարելի է հանգել երևանից ու Բաքվից հնչող իրարամերժ ու հակասական հայտարարությունները, տեղական ու միջազգային փորձագետների վերլուծությունները համադրելով: Բայց, միևնույն ժամանակ, պարզ է, որ ադրբեջանական կողմի նման մերժողական քաղաքականությունը և սադրիչ գործողությունները կարող է հանգեցնեն նաև Ադրբեջանի դեմ միջազգային սանկցիաներ կիրառելու հնարավորությունների քննարկմանը, ինչի մասին վկայում են վերջին շրջանում որոշակիորեն ակտիվացած հասցեական հայտարարությունները²⁰¹:

Քառօրյա պատերազմի փաստը հաշվի առնելով՝ պաշտոնական երևանը շարունակում է շեշտը դնել շփման գծում իրավիճակի կայունացման, ոչ թե բուն բանակցային գործընթացի վրա: Պատերազմական ակտիվ գործողություններից հետո բանակցային գործընթացում առաջնային խնդիր է հակամարտող կողմերի միջև վստահության տեսլականի ձևավորումը, որը հնարավորություն կընձեռի բանակցությունները վերադարձնել գրոյական սկզբնակետի²⁰²: Ինչ վերաբերում է քառօրյայից հետո ի հայտ եկած առաջարկներին, ապա դրանք ստացել են Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի անունը՝ այսպես կոչված «Լավրովի առաջարկներ» անվանումը, որոնց մասին մեկ անգամ չէ, որ բարձրաձայնել են Մոսկվան ու Բաքուն:

Անմիջապես ապրիլյան քառօրյայից հետո՝ 2016 թվականի ապրիլի 7-ին Իլ համ Ալիևի հետ հանդիպումից հետո Սերգեյ Լավրովը Բաքվում հայտարարեց՝ «Մենք առաջարկներ ունենք, որոնք համանախագահների

²⁰¹ Չաքարյան Ա., Չի բացառվում Ադրբեջանի դեմ միջազգային սանկցիաներ կիրառելու հնարավորությունը, Առավոտ, 02.06.2017թ., mamul.am/am/news/106166/չ-բացառվում-ադրբեջանի-դեմ-միջազգային-սանկցիաներ-կիրառելու-հնարավորությունը-«առավոտ»

²⁰² Минасян С., Я вижу предпосылки того, что отныне сопредседатели будут прибегать к четким мерам, 12.06.2017, <http://www.tert.am/ru/news/2017/06/12/Sergey-minasyan/2399812>

հետ համատեղ ձգտում ենք ավելի ակտիվորեն գործարկել՝ ի շահ Ադրբեյջանի և Յայաստանի»²⁰³: Ավելի ուշ արձագանքելով հարցին, թե արդյոք քննարկվել են այդ առաջարկները Լավրովի՝ Յայաստան կատարած այցի ժամանակ՝ հայկական կողմը արձանագրեց, որ Լավրովը որևէ փաստաթուղթ կամ որևէ առաջարկություն այս պահին չէր կարող ներկայացնել, որովհետև քառօրյա պատերազմից հետո խոսել բանակցությունների մասին տրամանաբանական չէ: Այդուհանդերձ, հունիսի 30-ին Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած հանդիպումներից հետո Ադրբեյջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հայտարարեց, որ Պետերբուրգում սկսվել են առարկայական բանակցություններ, և որ առկա է փաստաթուղթ, որի վրա աշխատանք է ընթանում²⁰⁴: Դրանից հետո, հունիսի 11-12-ին Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի՝ Բաբուկատարած այցի ընթացքում Ադրբեյջանը հայտարարեց ղարաբաղյան խնդրի կարգավորման առաջընթացի մասին: Լավրովը, իր հերթին, ընդգծեց, որ Ռուսաստանն ու Ադրբեյջանը խնդրի լուծման կոնկրետ քայլեր են քննարկում²⁰⁵:

Ավելին, Ս.Լավրովի կողմից 2016 թվականի տարեկան ամփոփման ասուլիսում հստակ դիրքորոշում հայտնվեց և պատասխանելով ադրբեյջանցի լրագրողի հարցին վերջինս նշեց, որ հակամարտությունը չի հանդիսանում միայն Ադրբեյջանի ներքին գործ՝ ընդգծելով, որ առկա է և՛ իրավական և՛ պայմանագրային փաստաթղթերի բլոկ, որոնք պահանջում են այդ հակամարտության բացարձակապես խաղաղ լուծումը, ինչը նաև վերաբերում է կարգավիճակի վերջնական և տարածքների հետ կապված հարցերի որոշմանը: Նշված հայտարարությունը հիմք է տալիս հետևությունն անելու, որ «տարածքների հարցը հանդիսանում է Մադրիդյան սկզբունքների անբաժանելի մասը նույն ձևով ինչպես Լեռնային

²⁰³ Սերգեյ Լավրովը հանդիպել է Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևին, 07.04.2016թ., <http://yerkirmedia.am/1political/lavrov-aliev-handipum-lxh/>

²⁰⁴ Մամեդյարով Է., «Կա փաստաթուղթ, որի վրա աշխատանք է ընթանում», 30.06.2016թ., <https://shabat.am/am/article/62287/-Ka-pastatught--ori-vra-ashkhatanq>

²⁰⁵ Ղարաբաղյան հակամարտության կողմերը հաջողությանն ավելի մոտ են, քան երբևէ. Լավրովի ասուլիսը Բաբվում, 12.07.2016թ., <http://galatv.am/hy/news/156540/>

Ղարաբաղի կարգավիճակի լուծումը, ինչից ելնելով էլ տարածքների հարցը լուծվելու է միայն կարգավիճակի հարցը լուծելուց հետո»²⁰⁶:

Որպես ամփոփում հարկ է նշել, որ Ռուսաստանը փորձում է ամրագրել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում իր առանձնացված դերակատարությունը, սակայն իրադարձությունները ստեղծում են երկակի իրավիճակ. մի կողմից, երբ Ռուսաստանը փորձում է չարագացնել զարգացումները և հետևողական լինել հակամարտության կարգավորման գործընթացի փուլային հասունացմանը, դրանով իսկ որոշակիորեն ընկնում է մյուս միջնորդների ազդեցության շրջանակ՝ կապված նրանց կողմից առաջարկվող բանակցային նախաձեռնությունների հետ: Մյուս կողմից, ակտիվություն ցուցաբերելով և իրադարձություններին ավելի հրատապ ուժ հաղորդելով վտանգ է ստեղծում նաև սեփական շահերի ու հետաքրքրությունների նկատմամբ, հատկապես Չարավկովասյան տարածաշրջանում թե քաղաքական, թե տնտեսական, թե առևտրային և մի շարք այլ ազդեցությունների մասով: Արդյունքում, կարելի է փաստել, որ անհրաժեշտություն է հասունացել քաղաքական-դիվանագիտական հավասարակշռված գործիքակազմով ու գործել առճով Ռուսաստանի Դաշնությունից պահանջել վերջինիս կողմից վերջնականորեն հստակեցնել դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության բանակցային հարցերում, ընտրել որոշակի կոնկրետ մոտեցում հակամարտության կողմերի նկատմամբ, որը, ի հարկե, պետք է հիմնվի և արտահայտի Չարավային Կովկասի ուղղությամբ այդ երկրի համընդգրկուն ռազմավարության առանցքային շահերը:

²⁰⁶ Մինասյան Ս., Լավրովը ադեկվատ պատասխան տվեց ադրբեջանցի լրագրողի՝ ԼՂ-ում պատերազմ սկսելու մասին հարցին, 17.01.2017թ., <http://www.zham.am/?p=46&l=am/lavrov+adekvat+patasxan+tvec+adrbejanci+lragroxi+ix-um+paterazm+skselu+masin+harcin>

ԵՁՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր միջպետական դաշնակցային հարաբերությունների համար առաջին հերթին անհրաժեշտ են խնդիրները համատեղ ուժերով և առավել արդյունավետ տարբերակներով լուծելու՝ փոխադարձ վստահության վրա հիմնված մոտեցումներ և մեթոդներ: Միասնական գործակցային քաղաքականության ու պաշտոնական դիրքորոշումների մշակումը և դրանցից բխող միջոցառումների իրականացումը պետք է կատարվի համատեղ աշխատանքների միջոցով:

Պատմական երկարատև ժամանակագրություն անցած հայ-ռուսական հարաբերությունները և բարեկամական գործակցությունը, սկսած իրենց ձևավորման ժամանակներից մինչև առօրեական զարգացումները, բովանդակային առումով անցել են տարբեր փորձությունների միջով՝ թևակոխելով արդի մարտահրավերներին միասնական ուժերով դիմակայելու ռազմավարական փուլ: Ներկայիս աշխարհաքաղաքական իրադրությունը նաև թելադրում է հայ-ռուսական հարաբերությունների ժամանակակից փուլի բնույթը և պահանջում է առավել լուրջ վերաբերմունք հատկապես անվտանգության ոլորտում համագործակցության ուղղությամբ: Անվտանգության հարցերում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության վարած քաղաքականությունը, հավաքական անվտանգության ամրապնդման

ուղղված բազմաթիվ ջանքերը վկայում են հիմնախնդիրների կարևորության մասին, ինչպես նաև ուշադրության կենտրոնում են պահում այդ պետության ներքին, հատկապես՝ տարածաշրջանային անվտանգության համատեքստում այսպես կոչված «թեժ կետերում» խաղաղության ու կայունության ապահովմանն ուղղված համատեղ գործունեության առումով:

1. Հայ-ռուսական գործակցությունը Հայաստանի համար կարևորվում է աշխարհաքաղաքական տեսանկյունից, քանի որ Ռուսաստանը տարածաշրջանային դերակատարություն ունեցող պետություն է և, դարավոր ավանդույթներ ունենալով Հարավային Կովկասում, միաժամանակ իր վրա է կրում թե միջազգային անվտանգության, թե տարածաշրջանային անվտանգության երաշխավորման հիմնարար մասնաբաժինը՝ դրանով իսկ որոշակիորեն ազդեցություն ունենալով երկրների ազգային անվտանգության և ներպետական տարբեր գարգացումների վրա: 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբում բազմաթիվ գարգացումների ընթացքը շատ հստակ ցույց է տալիս Հարավկովկասյան տարածաշրջանի կարևորությունը և կանխորոշում Ռուսաստանի ուշադրության մակարդակն ու մասնակցությունը այդ տարածաշրջանում ձեռնարկվող անվտանգային գործընթացներում: Վերջին երկու տասնամյակներում Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական գարգացումները նպաստել են հայ-ռուսական սերտ սոցիալ-մշակութային կապերի ու արդյունավետ տնտեսական համագործակցության ընդլայնմանը, որը, իհարկե, կարող է յուրովի նախադրյալ հանդիսանալ պաշտպանական-անվտանգային հարցերում գործակցության մակարդակի բարձրացման համար:

2. Հարավկովկասյան տարածաշրջանը իր բարդ և բազմաթիվ խնդիրներով Ռուսաստանի շահերին և անվտանգությանը սպառնացող հավանական վտանգի տեսակետից այսօր խոցելի ուղղությանն ենթարկված է: Եթե Ռուսաստանը այդ տարածաշրջանում կորցնի իր ազդեցության թեկուզև մի փոքր մասը, ապա դրանով իսկ կհանգեցնի մի յուրօրինակ «աշխարհաքաղաքական սեպի» գոյացմանը, որը կարող է հետագայում վերջինիս տարածքից որոշակի հատվածների անջատման սպառնալիք հանդիսանալ: Ավելին, հրատապ է մնում իսլամական գործոնի ազդեցության չափը գնահատելու խնդիրը: Սխալ կլիներ կարծել, որ

իսլամական սպառնալիքը Ռուսաստանի համար միանշանակ ու կասկածի
ոչ ենթակա իրողություն է: Այդպիսի սպառնալիք առկա է, սակայն
անհրաժեշտ է հստակ պատկերացնել դրա սկզբնաղբյուրները և այն
շարժիչ ուժերն ու պատճառները, որոնք արդիականացնում են իսլամի
ահաբեկչական դերը տարածաշրջանում:

Տարածաշրջանը այսօր կանգնած է ոչ միայն հետխորհրդային
տարածքում Ռուսաստանի Դաշնության դիրքերը, այլ և բազմակողմ
համագործակցության հիմքերը պահպանելու անհրաժեշտության
լուրջ խնդրի առջև: Ազգային շահերի անվտանգության համար ոչ նոր,
սակայն շատ լուրջ աշխարհաքաղաքական գործոն է այն
մրցակցությունը և պայքարը, որը մերձավոր արտասահմանի
պետությունների տարածքում տարբեր պետությունների միջև
ծավալվում է էներգետիկ և այլ ռեսուրսների նկատմամբ
վերահսկողություն հաստատելու, այդ ռեսուրսներից ազատօգտվելու
ու դրանք անարգել կերպով արտաքին շուկաները արտահանելու համար:
Ներկայումս պետական շահերին և եվրասիական տարածքի
անվտանգության դեմ ուղղված առանձնահատուկ սպառնալիք է այն
պայքարը, որն աշխարհի խոշորագույն նավթային ընկերությունների,
այդ թվում՝ ռուսական կորպորացիաների միջև ծավալվում է
կասպիական նավթի համար: Այդ ոլորտում Ռուսաստանը ընդհարվում է
մի ամբողջ խումբ սպառնալիքների հետ՝ թե տնտեսական, թե
անվտանգային ու ռազմաքաղաքական նշանակություն:

3. Միջազգային հանրության ու այլ պետությունների կողմից
Չայաստանի Չանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը
ընկալվում են որպես քաղաքական դաշնակիցներ: Երկու երկրների
դաշնակցական համագործակցությունն արտահայտվում է ինչպես
ներքին, այնպես էլ արտաքին հարաբերությունների բնագավառում
համատեղ գործունեության, տարածաշրջանային և համաշխարհային
քաղաքականությանը վերաբերող հարցերի շուրջ միասնական
մոտեցումների, քաղաքական փոխհամաձայնության ծրագրերի,
միջոցառումների մշակմամբ ու իրականացմամբ:

Չայ-ռուսական հարաբերությունները կրում են ռազմավարական
բնույթ և արժևորվում են Չայաստանի ու Ռուսաստանի
անվտանգության համար ունեցած իրենց ընդգծված դերով ու

նշանակությունը: Հայ-ռուսական ռազմավարական համագործակցության ուղղությունը ստեղծված իրավապայմանագրային դաշտի ու անցկացված միջոցառումների համալիր վերլուծությանը հավաստում է, որ այդ գործակցությունը հիմնվել է և շարունակում է արդյունավետորեն զարգանալ բոլոր ուղղություններով՝ հատկապես հիմնվելով անվտանգության ու ռազմաքաղաքական ոլորտների վրա:

Բացի այդ, Ռուսաստանը Հայաստանի խոշոր առևտրային գործընկերներից է և հաստատապես աճում է երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը: Տնտեսական ոլորտում առավել նշանակալի է համագործակցությունը էներգետիկայի բնագավառում՝ ինչպես էներգակիրների Հայաստան ներմուծման, այնպես էլ հայաստանյան էներգետիկ հզորությունների գործարկման ուղղությամբ: Ակնառու է նաև համագործակցությունը գիտության և կրթության ոլորտներում, ինչպես նաև ամրապնդվում են դարավոր մշակութային կապերը, որոնց հովանավորն են երկու երկրների պետական կառույցները, մտավորական ներկայացուցիչները, ներառյալ՝ ՌԴ մեծաքանակ հայ համայնքը:

4. Հայաստանը, ինչպես և աշխարհի յուրաքանչյուր պետություն, ամենուրեք և միշտ գործում է սեփական շահերին համապատասխան և իր արտաքին քաղաքականությունն իրականացնում է այդ ուղղություններով: Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին անվտանգային և ռազմական քաղաքականությունը միջազգային բազմակողմ մակարդակում իրականացնում է տարբեր համակարգերի հետ հավասարակշռված ու փոխլրացված համագործակցությամբ: Մեր երկրի անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը և Եվրասիական տնտեսական միությանը հնարավորություն է տալիս երկու երկրներին զարգացնել ու համագործակցությունը ոչ միայն հավաքական անվտանգության, այլ նաև ներքին անվտանգության, տնտեսության, մշակույթի տարբեր ոլորտներում և այլն:

Հայաստանը հանդիսանում է ոչ միայն Ռուսաստանի կարևորագույն ռազմավարական դաշնակիցը Հարավային Կովկասում, այլև Հավաքական անվտանգության պայմանագրի առավել ակտիվ անդամներից մեկը: Այս գործոնները, ինչպես նաև ՀՀ տարածքում

ռուսական գործերի առկայությունը (միակը տարածաշրջանում՝ Վրաստանի տարածքից ռուսական գործադրությունների դուրս բերումից հետո), ուրվագծում են որոշակի սահմանափակումներ Յայաստանի և ՆԱՏՕ-ի հետհարաբերություններում:

5. Ժամանակակից հայ-ռուսական հարաբերությունների կարևորագույն ուղղություններից է նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում համագործակցությունը: Յայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցությունից հետո երկրի պետական մի շարք գերատեսչությունների գործունեության մեջ տեղի են ունեցել նշանակալի փոփոխություններ, որոնք նպատակ ունեն ապահովելու Յայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների առավել սերտ ու բազմակողմանի համագործակցությունը միության շրջանակներում: Փոփոխությունները շոշափեցում են այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում (հաշմանդամության կարգավիճակ ստանալը, ՀՀ քաղաքացի, սակայն հաշվառում չունեցող կամ օտարերկրյա քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննությունը և այլն), իրավապահ մարմինների գործունեության առանձին ոլորտներում (ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երրորդ պետությունից ՀՀ տարածք քաղաքացիական և ծառայողական գեների նեմոնոման և արտահանման, դրա համար լիցենզիայի ստացման ընթացակարգերը), գյուղատնտեսությունը (ՀՀ տարածքից ԵԱՏՄ անդամ պետություններ, երրորդ պետությունների տարածքներ գյուղմթերքներ, գյուղատնտեսական պարագաներ արտահանելու ընթացակարգերը), միգրացիոն ընթացակարգերը (միության անդամ պետությունների տարածքներում ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների կողմից աշխատանքային գործունեություն ծավալելու կարգը և պայմանները), առողջապահությունը (դեղամիջոցներ, սարքերի, առողջապահական պարագաների ներմուծում-արտահանում և այլն), մշակույթը (մշակութային կապերի ամրապնդում, միջոցառումների կազմակերպում և այլն), տրանսպորտի և կապի ոլորտը (տրանսպորտային հաղորդակցություն, ուղևորափոխադրումներ, բեռնափոխադրումներ, տեղեկատվական համագործակցություն և այլն):

ԵԱՏՄ շրջանակներում հայ-ռուսական երկկողմանի փոխգործակցության խորացմանն ու ամրապնդմանն են ուղղված նաև բոլոր այն հանդիպումները, որոնք տեղի են ունենում երկու պետության նկատմամբ միջև տարբեր մակարդակներով ու ձևաչափերով: Նման միջոցառումները կայուն ու լորտային բազա են ստեղծում զարգացնելու Հայաստանի և Ռուսաստանի գործակցությունն անվտանգության հիմնախնդիրների կարգավորման հարցերում, նպաստում են երկու երկրների թե պետական-քաղաքական, թե հասարակական հարթակներում դաշնակցային միասնականության ապահովմանը, ինչպես նաև որոշակիորեն կողմնորոշում են ռուսական կողմի շահագրգռվածությունը Ղարաբաղյան հիմնախնդրի բանակցային ձևաչափում հայանպաստ դիրքորոշում ցուցաբերելու գործում:

6. Հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցությունը և Հայաստանի ռազմական անվտանգության ապահովումը բխում է Հայաստանի ու Ռուսաստանի երկարատև ռազմավարական փոխգործակցության շահերից, քանզի Հայաստանի՝ որպես ռազմավարական գործընկերոջ կարևորությունը Ռուսաստանի համար արտահայտվում է ոչ միայն Հարավային Կովկասում ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդման անհրաժեշտությամբ, այլև Մերձավոր Արևելքում ազդեցության և հնարավորությունների պահպանման առավելությունամբ, նպաստավոր դաշտ է ստեղծում Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական հակառակորդների ազդեցության ու գաղափարախոսությունների (պանթուրքիզմ, պանիսլամիզմ) ներթափանցման կանխարգելման համար: Հարավկովկասյան տարածաշրջանը Ռուսաստանի համար կարևորվում է նաև այն առումով, որ իր մասով որոշակիորեն կարող է ազդել երկրի ազգային անվտանգության վիճակի վրա: 21-րդ դարի առաջին տասնամյակի զարգացումներն այդ իմաստով հստակ ցույց տվեցին Հարավային Կովկասի կարևորությունը և կանխորոշեցին ու շարժողության մակարդակն ու մասնակցությունը տարածաշրջանի կյանքում:

